



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

3684

7 yr 1916

291.99-8

L-61



ԼՈՒՍԱԲԵՐ



2010

25

A P M.
4-269a

Կովկասի ուսումնարանական օրգանի հազարհույս կողմից բայլաբան է որպէս
դասագիրք պետական դպրոցների համար

491.39-8

5-61

ԼՈՒՍԱԲԵՐ

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ

ՍՏ. ԼԻՍԻՅԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՆ Լ. ՇԱՆԹ



ԻՆՆԵՐՈՐԻ ՏԻՊ

Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդածների, ինչպէս եւ մեր նկարների ար-
տատպութեան իրաւունքը վերապահում է

Տպարան Ն. Ազանեանի, Պոլից. 7

1916


14355

20 02

55190-ահ



1515-63



Լ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1. Ամենից լաւ տունը

Այնտեղ, ուր հովը խաղում է ազատ
ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
այնտեղ իր բարի, իր սիրող մօր հետ
մի շատ անհանգիստ տղայ էր ապրում

մի գորշ խրճիթում,
մի հին խրճիթում,
գետի եզերքին,
ծառերի տակին:

Մի օր էլ եկաւ անհանգիստ տղան,
կանգնեց իր բարի, իր սիրող մօր դէմ.
«Մայրիկ, այստեղից պէտք է հեռանամ.
միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,

էս գորշ խրճիթն է,
էս հին խրճիթն է,
գետի եզերքին,
ծառերի տակին:

«Թող գրնամ շրջեմ աշխարհից աշխարհ,
ճամփորդեմ լաւ-լաւ տըներ տեսնելու,
ամենից լաւը ընտրեմ մեզ համար,
գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու

էս գորշ խրրճիթից,
էս հին խրրճիթից,
գետի եզերքին,
ծառերի տակին»¹

Ու գրնաց երկար թափառեց տղան,
մեծ ու հոյակապ շատ տըներ տեսաւ,
բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...
Ու հառաչելով ետ վեռադարձաւ

էն գորշ խրրճիթը,
էն հին խրրճիթը,
գետի եզերքին,
ծառերի տակին:

«Գրտամբ, գաւազ», հարցրեց մայրը՝
ուրախ նայելով իր տղի վրա:

«Ման եկայ, մայրիկ, աշխարհից աշխարհ,
ամենից սիրուն, լաւ տունը, որ կայ,

էս գորշ խրրճիթն է,
էս հին խրրճիթն է,
գետի եզերքին,
ծառերի տակին:

1) Գորշ ու հին խրրճիթը ինչո՞ւ էր լաւ այն տղի համար:

2) Մեծ ու հոյակապ տներում ի՞նչ բան էր պակաս այն տղի համար:



27. Առաջին դասը

ա.

Դպրոցի դռանը այնքան բազմութիւն էր հաւաքւել, որ
ծառան հազիւ էր կարողանում մուտքը պահպանել:

Տիկիկներ, բանւորներ, պառաւներ, աղախիկներ՝ ամենքն
էլ մի-մի տղայ ու խնդրագիր բռնած՝ աղմկով ու շշուկով
ցրել էին նախասենեակն ու սանդուխքը: Շատերը տխուր
շրջապատել էին տեսչին, որովհետեւ իրենց որդիների համար
ազատ տեղ չէր մնացել:

Ի՞նչ զրժւրժոց ու իրարանցում էր դասարաններում ու
միջանցքներում. հին ընկերները հանդիպում էին իրար, խո-
սում, ծիծաղում, պատմում: Աշակերտներից ոմանք մեծացել
էին, միւսները գիւրացել:

Մեր դասարանը քառասուն հոգի է այս տարի, որոնցից
հազիւ կէսը իմ անցած տարւայ ընկերներից են:

բ.

Առաջին դասին եկաւ մեր նոր վարժապետը: Բարձրահա-
սակ, անմօրուս մի մարդ էր, երկար ու սև մազերով. ճակատի
մէջտեղը՝ մի խոր կնճիռ:

Երբ մենք գրքերն ու տետրակներն էինք հանում ու պատ-
րաստում էինք գրիչները, նա լուռ կանգնել էր՝ մի ձեռքով
յենւած ամբիոնին, լուրջ ու մռայլ գիտում էր պատուհանից
դուրս, դիմացի տան կտուրը:

Յետոյ սկսեց թելադրել ու միևնոյն ժամանակ ման էր
գալիս նստարանների մէջ: Նկատելով որ աշակերտներից մէկի
դէմքը սաստիկ դժգոյն է, թելադրութիւնը ընդհատեց, մօտե-
ցաւ, բռնեց տղայի կզակը, հարցրեց՝ ինչով է հիւանդ, ու
ձեռքը դրաւ նրա ճակատին իմանալու՝ թէ արդեօք ջերմ չունի՞

Այդ միջոցին մի ուրիշ աշակերտ ուսուցչի ետևից ըսկսեց խեղկատակութիւններ անել: Վարժապետը յանկարծ շուռ եկաւ, տղան իսկոյն նստեց տեղը ու գլուխը կախ սպասում էր, թէ հիմա ինչ է լինելու:

Վարժապետը ձեռքը դրաւ նրա գլխին ու ասաւ հանգիստ.

— Միւս անգամ այդ տեսակ բան չանես:

Ուրիշ ոչինչ. և շարունակեց թելադրելը:

Գ.

Երբ մեր աշխատանքը վերջացրել էինք, վարժապետը գնաց բարձրացաւ ամբիոնը, նստեց իր գրասեղանի առջև, լուռ նայեց մեզ ամենքիս և հանգիստ, հնչուն ու մեղմ ձայնով արտասանեց.

— Լսեցէք, տղերք: Ամբողջ մի տարի մենք միասին աշխատելու ենք. ջանանք, որ լաւ անցնեն մեր օրերը: Ձեր դասերը լաւ սովորեցէք և խելօք կացէք: Ես ընտանիք չունեմ: Ունէի մի մայր, նա էլ այս տարի մեռաւ: Մենակ եմ. ձեզնից գատ աշխարհիս երեսին ոչ ոք չունեմ: Դուք էք իմ զաւակները: Ես սիրում եմ ձեզ, դուք էլ սիրեցէք ինձ: Յոյց տւէք, որ լաւ ու բարի տղերք էք: Բառերով խոստում չեմ ուղղում ձեզնից. ես վստահ եմ, որ արդէն «այո» ասացիք ձեր սրտերում... Ծնորհակալ եմ:

Հնչեց զանգը. անձայն հաւաքեցինք տետրակները ու լուռ դուրս էինք գալիս իրար ետևից, երբ չարութիւն անող աշակերտը մօտեցաւ վարժապետին ու դողդոջուն ձայնով ասաւ.

— Ներեցէք ինձ, պարոն:

Վարժապետը բռնեց նրա գլուխը, ճակատը համբուրեց ու ասաւ.

— Գնա՛, տղաս:

1) Ո՞րը եղաւ նոր վարժապետի տաժ առաջին դասը:

2) Վարժապետը ինչո՞ւ այնպէս լուրջ էր ու մուսլ:

3) Ձեր դպրոցի առաջին դասը ինչպէս էր:

3. Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
արևն արդէն ծագել է:

Վեր կաց փափուկ քո անկողնից,
հաւը վաղուց խօսել է:

Դէ, շուտ վեր կաց, էլ մի քրնի
ծոյլ ու անհոգ՝ անկողնում.
ան գըրքերըդ, դպրոց դիմի,
որ բախտ գտնես դու կեանքում:

4. Փոքրիկ ձիավար

ա.

Դեռ երեխայութիւնից ձի նստելու սաստիկ սէր ունէի:
Հեծնում էի մի փայտի վրա ու ամբողջ ժամերով վազվզում
էի մեր բակում:

Յետոյ երբ փոքր ինչ մեծացայ՝ փայտի նժոյգին փոխա-
րինեցին կենդանի արարածներ: Մեր հորթերը հանգիստ չու-
նէին ձեռքիցս: Մինչև անգամ մեր գայլի նման ահագին շու-
նը երբեմն ստիպւած էր ծառայելու իմ զլարճութիւններին:

Բռնում էի նրա երկար ականջներից ու թռչում մէջքին.
բարի շունը ներում էր իմ յիմարութիւնները ու գնում էր
դէպի այն կողմը, ուր ես շուռ էի տալիս:

բ.

Երբ տասը տարեկան դարձայ, ամեն երեկոյ անհամբեր
սպասում էի նախրի արօտից դառնալուն: Հէնց որ հեռւից
նկատում էի մեծ ճամփի վրա փոշու ամպի բարձրանալը,
վազում էի տաւարի առաջը, բռնում էի աւանակներից մէկին
ու ցատկում մէջքին: Ա՛, ինչ ուրախութիւն էր, երբ նա վա-
զում էր հեռո՛ւ, դաշտերի մէջ...

Իսկ յետոյ աւանակներին փոխարինեցին մատակ ձիերը:
Առանց սարսափելու չէր կարելի նայել ինձ վրա, երբ ես դէի

նման բռնած վայրենի մատակի բաշից, մրրիկի պէս պտը-
տեցնում էի մերկ ու առանց սանձի ձիուն: Հովիւները բար-
կանում էին, զգուշացնում, բայց ո՞վ էր ականջ դնողը:

Քանի՞ քանի անգամ վայր եմ ընկել, քանի՞ անգամ կոտ-
րել եմ ձեռս, ոտս, քանի՞ անգամ տուն են տարել ինձ երեսս
շարդւած ու արիւնլըւայ...

Մայրս լաց էր լինում, ասում էր՝ ես «սատանայի ծնունդ
եմ» և գնում գանգատւում էր վարժապետիս:

Ոչինչ չէր օգնում:

- 1) Աւելի հասուն տարիքում ինչ պարագմունք կը սիրի այդ տղան:
- 2) Դու ի՞նչ քանի սէր ունես, եւ որ մեծանաս՝ ի՞նչ ես ուզում դառնաս:



5. Այգեկութ

Աշունը սարից որ այգի հասաւ,
այգու ծառերը բեռնւած տեսաւ,
դէմքը խոժոռեց ու չեկաւ դուրը:
«Էտ պտուղները ցած առէք, ասաւ,
էտ դեղձն ու խնձոր, խաղողն ու նուռը,
ու վատ չի լինի, թէ փակէք դուռը»:

Աշնան պատուէրը հէնց որ լսեցին,
մարդիկ շտապով այգի վազեցին,
ինչ քէֆ, ինչ խնդում, շատ ուրախացան...
Քաղաւ ու կթոց իսկոյն ուսեցին,
կրեցին մառան, կրեցին հնձան.
Ծառն ու որթերը ձեռաց մերկացան:

- 1) Աշունը ի՞նչ է սիրում:
- 2) Իսկ մենք աշնանը ինչ ենք սիրում:

6. Պապս

ա.

Ամառը ինչպէս էր անց կացել, ես ինքս էլ չըզիտեմ:
Օգոստոսի վերջերն էր արդէն, և ես պատրաստւում էի
գնալ քաղաք. մի-երկու օրից դասերը սկսելու էին:

Երեկոյ էր, ձին կանգնած էր մեր դռանը ու եղբայրս
կապում էր խուրջինները: Մայրս, քոյրերս, տանեցիք, բոլորս
թափւել էինք դուռն ձիուն ու խուրջինների շուրջը:

Միայն ծերունի պապս էր, որ կանգնել էր առանձին, տան
դռան մէջ, երկար չիբուխը բերնին ու իր սպիտակ մօրուքի
ու սև փափախի միջից տխուր ու մտածկոտ նայում էր ինձ:
Ջրգիտեմ՝ ինչու սիրտս յանկարծ ցաւեց ու մօտեցայ իրեն.

— Ի՞նչ ես մտածում, պապի:

— Ներս արի, բալաս,— ասաւ նա ու տուն մտաւ:

Մտայ ես էլ իր ետևից:

բ.

Դուռը կամաց վրա արաւ, մօտեցաւ ինձ, չիբուխը մի ան-
գամ էլ պինդ քաշեց, պահեց ատամներով ու ծոցից հանեց
ահագին կապոյտ թաշկինակը: Դողդոջուն ձեռքերով ետ քան-
դեց թաշկինակի ծայրի կապը ու մէջը եղած մի-երկու ար-

ծաթ փողը դրաւ ձեռիս.

—Ա՛ռ, ճամփին պէտք կը գայ:

Յետոյ մի անգամ էլ բաշեց չիբուխը ու աւելացրեց.

—Նորից գնում ես, բալա ջան, Աստուած քեզ հետ: Գնում ես, մէկ էլ գարունքը կը գաս: Գարունքը կը գայ, դու էլ կը գաս, իսկ ինձ ով գիտի էլ կը տեսնես թէ՞ չես տեսնի. իմ օրերս համարւած են, քո կեանքը դեռնոր է սկսւում: Երկար ապրես, որդի, երկար ու երջանիկ: Եթէ ուզում ես երջանիկ ապրես, երկու բան լաւ միտդ պահի. միշտ լաւութիւն արա ուրիշներին՝ ով էլ որ լինի, որ հոգիդ ուրախ մնայ. մէկ էլ միշտ աշխատանք ունեցի ձեռքիդ, որ ուրիշի ձեռքին մտիկ չըտաս: Զըմոռանաս...

Յետոյ հրամայեց որ չօրեմ:

Կատարեցի իր կամբը, չօքեցի. հազիւ էի ինձ զսպում, լացը խեղդում էր ինձ: Նա ձեռքը դրաւ գլխիս ու ինձ օրհնեց...

Կարծես երէկ լինէր, այնպէս պարզ յիշում եմ դեռ նրա ազնիւ ու վեհ դէմքը, նրա դողդոջուն ձեռքերը, նրա բարի ու խոր ձայնը...

Երբ նորից ոտքի ելայ ու դուրս եկանք միասին, արդէն ձին պատրաստ էր. գրկեցի բոլորի հետ, ես ու մեծ եղբայրս հեծանք ձիերը, բաժանւեցինք ու մտանք ձորը:

Էն էր. պապիս ես այլևս չըտեսայ: Աշնանը մեռել էր. ես շատ ուշ իմացայ. ինձնից ծածկել էին:

1) Տուն որ մտան, տղան քանի՞ քան ստացաւ իր պապից: Ո՞րն է ստացածներից ամենաթանկագինը:

2) Պապի ասելով՝ ով է երջանիկը աշխարհիս երեսին, եւ ինչո՞ւ:



7. Հսկան

ա.

Լաւ չեմ յիշում թէ որ դարում, հին ժամանակ, մեր աշխարհում ասում են թէ՛ կար մի իշխան.

մի մեծ իշխան, էնքան ուժեղ, որ թէ մարդիկ նրա աչքում, — թէ հասարակ ճանճ ու մըժեղ: Ինչ որ անէր ու կամենար, օրէնք էր էն երկրի համար.

ով էր գլխից ձեռ վեր կալած, ով դուրս կը գար նրա դիմաց.

Ունէր անթիւ ու անքանակ ոչխարի հօտ, մարդի բանակ, կովի նախիր, խոզի բոլուկ, երամակներ ձիու, ջորու, էս բոլորը ցըրւած, փըռւած մինչև ծովի ափը հեռու:

Մինչև ուր որ քըշէր, տանէր, իր աշխարհի սահմանն էն էր. ով էր գլխից ձեռ վեր կալած, ով դուրս կը գար նրա դիմաց:

բ.

Մի անգամ էլ էս իշխանը, երբ նստած էր իրեն տանը, լեղապատառ ներս ընկաւ տուն իր հօտերի վերակացուն.

—Ապրած կենաս, մեր տէր, իշխան, հապա, էսպէս հըրաշք մի բան:

Արածում էր ծովի ափին

բազմութիւնը քո հօտերի,
մին էլ տեսնենք՝ ծովի միջին
մի վիթխարի մարդ է գալիս:
Մի վիթխարի մարդ եմ ասում,
որ մենք իր մօտ լու եսք չնչին.
ծովը մինչև ծունկ է հասնում,
իսկ գլուխը ամպի միջին:
Եկաւ, կանգնեց մեր յանդիման
ու որոտաց ամպի նրման.
«Ո՛վ է, ասաւ, էսպէս բերում
թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորէք իսիոյն, աւազակներ,
ձեռքս քանի չի հասել դեռ...»
էն ժամանակ վեր կացայ ես
ու պատասխան տուի էսպէս.
«էտ սևակնած, մութ ամպերում
գուր ես էտքան բարձր գոռում.
ով էլ լինես, ուսկից էլ գաս,
էս մի բանը լաւ իմանաս,
դու, երկնահաս, ահեղ հրսկայ,
մեծ իշխանի ապրանքն է սա.
Ո՛վ է գլխից ձեռ վեր կալած,
ո՞վ դուրս կը գայ նըրա դիմաց»:
Բայց ինձ իսկի չը լսեց էլ
էն անճոռնի աժգահակը,
էն ամպերից ցած կըռացաւ,
ձեռը կոխեց ծովի տակը,
դուրս հանեց մի ձուկն ահագին
ու դէմ արաւ արեգակին,
որ խորովի...—Հագիւ էսքան
պատմեց հովիւն իշխանական
ու վէր ընկաւ, շունչը փրչեց:

Գ.

Խիստ զայրացաւ իշխանը մեծ.
—Ո՛վ է, ասաւ, համարձակել,
իմ տէրութեան սահմանն եկել
ու էտպէս էլ վրէս հաչում...
ինձնից ուժեղ չեմ ճանաչում
ես ոչ մի տեղ և ոչ մէկին...

էսպէս ասաւ ու զայրագին
հրրամայեց զօրքերը գան:
Հրրամայեց՝ զօրքերն եկան.
—Կեցցէ մեր տէր, մեր թագաւոր,
անյաղթ, անմահ, ամենազօր...
«Ապրէք, ասաւ իշխանը սէգ,
ելէք իսկոյն ու գընացէք.
մանուկ ու ծեր
իմ առիւծներ,
ո՞վ է, տեսէք, վրէս հաչում
ու իմ ուժը չի ճանաչում:
Տոյց տւէք դուր, որ ոչ մի տեղ
չըկայ ոչ որ ինձնից ուժեղ...»
Ասաւ. զօրքերն իրենց կարգին
փող փրչեցին, թմբուկ զարկին,
շրրլիկոցով, զրընգոցով
ճամփայ ընկան դէպի մեծ ծով:

Դ.

Հասան, տեսան— այ քեզ հրսկայ,
գլուխն էստեղ, ոտներ չը կայ.
գընա՛, գընա՛, թէ որ գըտնես...

երկար ու մին ձրգւած էսպէս,
 հրսկայական բընով բընած:
 էստեղ, էնտեղ դիրքեր բըռնած՝
 դէս չոքեցին, դէն պառկեցին,
 հա զարկեցին ու զարկեցին.
 տեսան՝ տեղից ժած չի գալի,
 խըռմփում է զարհուրելի.
 խըռմփոցից ինչ որ խօսում,
 մարդիկ իրար ձէն չեն լըսում:
 Մօտ գընացին, էլի, էլի...
 Դարձեալ տեղից ժած չի գալի:



Կամաց կամաց սիրտ առնելով,
 գորգողալով, հարայ տալով,
 դուրս թափւեցին թաքուստներից,
 ելան վըրէն, դէսից, դէնից,
 որը ոտին,
 որը բըթին,
 որը լանջին,

որն աղանջին,
 փորի վըրա, միրքի միջում,
 ձի են խաղում, նիզակ ճօճում,
 զարկում, զարկում,
 ձրգում, թըքում,
 հայհոյում են էսպէս, էնպէս...

ե.

Մին էլ հրսկան էն սարի պէս
 վըրա նստեց, մեծ, ահարկու.
 ինչ պատահեց – ոչ տեսնես դու:
 Հազարներով մարդն ու իր ձին
 տակոջն եղան, կոտորւեցին.
 որն էլ գըլխից, բըթից, լանջից,
 կամ ուսերից, կամ աղանջից
 ներքե ընկաւ, թէ մարդ, թէ ձի,
 նըրա օրն էլ դու իմացի:

Շատ զարմացաւ հըրէշ հրսկան
 թէ Տէր Աստուած, արդեօք էսքան
 մանր-մունր ինչ բաներ են,
 որ եկել են թափւել վըրէն:
 Տեսաւ, ինչ որ կենդանի կան՝
 վազ են տալիս թէ ետ գնան,
 բուռն առաւ իր բըռնովը մեծ,
 իրար խառնեց, ողջ հաւաքեց,
 գըրպանն ածաւ
 ու վեր կացաւ,
 լընգընգալէն, իրիկունը,
 գընաց հասաւ իրենց տունը:
 Տանը իր պէս մեծ, ահագին
 մի մէր ունէր, բարի մի կին:

Գրնաց իրեն մօրը պատմեց
 թէ իրեն հետ ինչ պատահեց,
 ու գրպանից հանեց բոլոր՝
 ահից խելառ ձին-ձիաւոր:
 Բարի կինը հէնց որ տեսաւ,
 —Աման, որդի, վայ ինձ, ասաւ.
 Ի՞նչ ես անում էս խեղճերին:



Բա չէ՞ս տեսնում, թէ քո ձեռին
 ոնց են դողում: Ասենք մեծ ես,
 մի՞թէ պիտի փոքրին տանջես:
 Մեծ թէ փոքր, ինչ էլ լինի,
 ամեն ապրող շունչ կենդանի,
 որ ծնւել է արևի տակ,
 էս աշխարհքում միատեսակ,
 մինը պակաս, միւսը աւել,
 ողջ էլ գիտեն խընդալ, ցաւել:
 Չըպարծենայ երբէք ոչ ոք,
 թէ ինքն անյաղթ մի բան է ջոկ.
 միշտ ուժեղից ուժեղը կայ,
 իսկ ամենից ուժեղը՝ մահ...
 Բաց թող, որդիս,
 բաց թող՝ գրնան,
 ապրեն ազատ
 ուր կամենան:

Ու հնազանդ մօր խըրատին,
 իսկոյն հանեց հսկայ որդին
 իր գրպանից ձին-ձիաւոր,
 իրար խառնած գօրքը բոլոր,
 թողեց գրնան
 ուր կամենան:

8. Սահակ-Մահակը

ա.

Վարագի վանքում ուսուցիչ էի: Մի երեկոյ սենեակում
 նստած՝ աշակերտների տետրակներն էի ուղղում, որ ետևիցս
 մի ձայն լսեցի: Ետ դարձայ, տեսնեմ՝ դռան առջև կանգնած
 է վանքի հացթուխի օգնականը, քսաներկու, քսաներեք տարե-
 կան մի բարձրահասակ երիտասարդ, բարակ ու նիհար: Կար-
 ծեցի՝ եկել է ինձ վանական ընթրիքին հրաւիրելու:

—Հը, Սահակ, ի՞նչ է,—հարցրի ես:

—Վարժապետ...—սկսեց նա կմկմալով ու լռեց:
 Ես մօտեցայ:

—Վարժապետ,—շարունակեց նա աղերսագին,—ի՞նչ կը
 լինի, ինձ էլ կարդալ սովորեցնես: Ես էլ գիրք կարդամ, լրա-
 գիր կարդամ: Ախ, ինչքան լաւ-լաւ բաներ կան գրած գրե-
 րում: Ինձ որ կարդալ սովորեցնես, վանքի բոլոր գրքերը կը
 կարդամ...

Ես նայեցի նրա յուզւած ու գունատ դէմքին. խիտ յօն-
 քերի տակից խոշոր աչքերը տենդօրէն փայլում էին:

—Լաւ, վաղւանից սկսենք,—պատասխանեցի ես:

Առաջ քան ուշքի եկայ, Սահակը կռացաւ և աջս համբուրեց:

բ.

Մեր պարապմունքները շատ աջող էին գնում: Սահակը
 ամբողջ սրտով էր կպել գործին: Աշակերտները շուտով իմա-
 ցան, որ «Սահակ-Մահակը» կարդալ է սովորում: Նրան այդ-
 պէս էին անւանում երկար ու բարակ հասակի ու մեծ գլխի
 համար: Վազում էին ետևից ու ծաղրում:

—Տիրացու Սահակ, տիրացու Մահակ:

—Չէ, չէ, Մահակ վարժապետ: Հայր սուրբ, հայր սուրբ:

—Ձերդ սրբազնութիւն, Մահակ սրբազան:

Ստիպւած էի սաստելու այդ չարերին: Սակայն Սահակը

ոչ մի ուշք չէր դարձնում ծաղրանքների վրա և շտապում էր շուտով վերջացնի այբուբենը:

— Ախ, երբ պիտի մեծ-մեծ գրքեր կարդամ, «Խենթ», «Կայծեր», — կրկնում էր նա ամեն անգամ անձկութեամբ:

— Սպասի, սպասի, շուտով այդ գրքերն էլ կըկարդանք, — քաջալերում էի նրան, և նա ամեն դասից յետոյ աւելի փտան էր հեռանում սենեակիցս:

Իմ սենեակը նրա խցի գլխին էր, պատուհանն էլ նրա պատուհանի պէս բացւում էր դէպի վանքի դռսի բակը: Եւ ահա մինչև ուշ գիշեր այդ պատուհանից ես լսում էի Սահակի անդադրում, ոգևորւած ձայնը:

— Գը-այ-լը՝ գայլ, սը-այ-լը՝ սայլ, փը-այ-լը՝ փայլ...

Գ.

Մէկ ամսից յետոյ նա արդէն բոլոր տառերը լաւ ճանաչում էր և կարդում էր ինձ հետ փոքրիկ պատմածքներ: Բայց օրէցօր աճում էր նրա անհամբերութիւնը: Մի կիրակի ամբողջ օրը վանքից բացակայ էր. եկաւ միայն երեկոյեան դէմ և ուղղակի մտաւ սենեակս: Մի փաթեթ ունէր կոնատակին:

Յաղթական քայլածքով ու փայլող դէմքով մօտեցաւ սեղանիս և բաց արաւ գունաւոր թաշկինակը:

Մէջը Բաֆֆիի «Կայծերի» մի նոր օրինակն էր, որ իր խնայած փողով գնել էր Վանում:

— Վարժապետ, ահա գիրքը. հիմի սրանից կարդանք:

— Լաւ, — ասի ես, — այս մի շաբաթն էլ դասագրքից կարդա, յետոյ կըսկսես քո «Կայծերը»:

— Շնորհակալ եմ, վարժապետ, Աստուած երկար կեանք տայ քեզ, — դուրս թռաւ նրա սրտից:

Գ.

Բայց այդ օրին չարժանացանք:

Մի տօն օր էր, քաղաք էի իջել. երբ երեկոյեան վերադար-

ձայ վանքը՝ ինձ յայտնեցին, որ Սահակը մերձիմաս հիւանդ է:

Շտապեցի հիւանդի սենեակը: Մեռելի նման գունատ, ձրգւել էր մէջքի վրա, խոշոր աչքերը յառած առաստաղին: Երբ նրան անունս տւին՝ նա առանց աչքերը առաստաղից հեռացնելու, կարծես զառանցանքի մէջ, կարօտալի արտասանեց.

— Վարժապետ, դաս տուր...

Մօտեցայ, մի բանի մխիթարական խօսքեր ասի, թէ շուտով նորից կըսկսենք մեր պարապմունքները, և այս անգամ ուղղակի «Կայծերից»:

Նա անշարժ ականջ էր դնում իմ խօսքերին, աչքերը շարունակ առաստաղին. երբ ես լռեցի՝ խուլ ձայնով կրկնեց.

— Վարժապետ, դաս տուր...

Նստեցի մօտը մի տասը բոպէ: Թէ ես, թէ հիւանդապահ ծառան պահպանում էինք խորին լռութիւն: Սահակի գունատ դէմքը կամաց իմ կողմը դարձաւ, սև աչքերը մեխւեցին դէմքիս ու բամբակի պէս սպիտակ շրթունքները շշնջացին.

— Վարժապետ, դաս տուր...

Ե.

Նա շատ ուշ ու դժւար առողջացաւ:

Մի օր ինձ սենեակից դուրս կանչեցին: Դուրս եկայ, տեսնեմ Սահակն էր. եկել էր մնաս բարով ասելու, գնում էր իր հայրենիքը ծնողների մօտ կազդուրւելու:

Դեռ ևս գունատ էր շատ, բայց ամբողջ դէմքը ժպտում էր:

— Մնաս բարով, վարժապետ, երբէք քո լաւութիւնը չեմ մոռանայ, — բացականչեց նա ձեռքս սեղմելով, — քո մեծ լաւութիւնը:

Երբ հեռանում էր, նկատեցի որ մէջքին երկար շալի մէջ մի բան ունէր կապած. իր գիրքն էր, որ տանում էր իր հետ սարերումը կարգալու:

Միակ հարստութիւնը որ տանում էր հետը:

1) Աշակերտները ինչո՞ւ էին ծաղրում Սահակին, երբ իմացան, որ կարդալ է սովորում:

2) Սահակի պատմութեան մէջ ամենից սուղի մեզ խնդ է դուր գալիս:



9. Կարդա

Կարդա՛, ա՛յ իմ խելօք մանուկ,
կարդա՛, գրի տարին բոլոր,
կարդացողի խելքն է կտրուկ,
միտքը պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով՝ դու գրքերում
շատ նորանոր բան կիմանաս.
շատ շատերից, շատ բաներում
մըտքով հեռու կը սըլանաս:

Գիր կարդալով՝ դու աշխարհիս
կըճանաչես չարն ու բարին,
հի՛վ է խնդում, հի՛վ է լալիս,
հի՛վ է զրրկում խեղճ թշուառին:

Դու կիմանաս՝ ինչու մարդիկ
պէտք է ապրեն իրար համար.

Ի՞նչն է մարդկանց ցաւն ու կարիք,
Ի՞նչ է լոյսը, Ի՞նչը խաւար:

Կարդա՛, որդիս, որ հօրդ պէս
դու էլ անուս, խեղճ չը մընաս,
որ ամենքին վիզ չը ծոես
ու միշտ ազատ առաջ զընաս:

Ինչո՞ւ տգիտութեանը խաւար ենք ասում, իսկ գիտութեանը լոյս:

10. Գիւղացին եւ ծառը

Փայտհատ Մօսին

կացինն ուսին

մտաւ անտառ:

«Հոգիս», ասաւ

նրան մի ծառ.

«Դաւար միան բո կոները,

կացինդ ա՛ռ, էս ծառերը

չորս բոլորս շարդիր դատ-դատ.

ինձ չեն թողնում բուսնեմ ազատ:

Տես՝ կապել են գլխիս կամար,

արեւ չըկայ խեղճիս համար:

Ո՞նց կարող եմ ես գօրանալ,

շրջակայքիս զարդը դառնալ»:

Կացինն առաւ փայտհատ Մօսին,

մէկ էս ծառին, մէկ՝ միւսին,

ծառի շուրջը լայն ու արձակ

մի տեղ բացեց շատ ընդարձակ:

Բայց խնդումը շատ չըտեց.

էն լաւ օրին վատն հետեց,

Հա՛ արեւ ծառը մրկեց,

հա՛ կարկուտը ճիւղքից զրկեց,

ու մի օր էլ բամին սաստիկ

կոտրեց ծառը չարաբաստիկ:

11. Չալօի էշը


ա.

Չալօն մի էշ ունէր միայն, մի հատիկ բած էշ: Ուրիշները զանազան չորքոտանիներ էին աշխատեցնում իրենց տուն ու տեղի համար, իսկ նա ամեն տեղ էլ իր էշովն էր գործի գնում: Չալօն օրական երկու ճամփայ աղբիւրիցը ջուր էր բերում այդ էշով, ջաղացը աղուն տանում, անտառը փայտի գնում. սար ու դաշտի երկար ու ձիգ ճանապարհը հօ ոտից գցել էր խեղճ անասունին:

«Աղբատի լեզուն կարճ է լինում»: Ունևոր հարևաններն անգամ ձեռաց գործի համար Չալօի էշին էին վազում, ասելով թէ իրենց էշն ու ձին տանը չեն: Մի խօսքով, ամբողջ թաղն ու թառակը օգտւում էր աղբատ Չալօի սուս ու փուս բնաւորութիւնից, և ամենքը էշը տանում էին ուր ուզէին: Շատ բանելուց յոգնած՝ էշը ժամերով պառկում էր գետնին, իսկ նրա մի տարեկան քուռակը չըգիմացաւ, մի օր էլ վայր ընկաւ ու սատկեց:

բ.

Այդ բոլոր չարչարանքը կարծես բաւական չէր: Չալօի էշը ուրիշ թշնամիներ էլ ունէր: Ամբողջ գիւղի չարածճի մանուկ-



ները՝ հէնց օր էշը գտնում էին պարապ, մի հնարքով դռնիցը հեռացնում էին և ջուխտ ու կենտ վրան թափւելով, այնքան

վազում ու վազեցնում էին անբան անասունին, որ քափ ու բրտինքի մէջ լողացնում էին:

Մանուկների այդ վարմունքը ցաւ ու կրակ էր դարձել Չալօի համար: Մեծերին խաթր էր անում, բան չէր ասում, իսկ փոքրերին թէկուզ մտածում էր՝ պատահած ժամանակը մի թակի, բայց այնպէս փախչում, թաքնւում էին անպիտանները, որ նրա առաջ մնում էր միայն էշը իշացած կանգնած: Այս դէպքերում Չալօն իր սրտի զայրոյթը էշիցն էր հանում. այնքան վէր էր հատում, որ էշի ետին ոտքերը ուղիղ գնալու փոխարէն միշտ թեք-թեք էին գնում:

գ.

Այսպէս՝ մի կիրակի էր, որ Չալօն տեսաւ նորից՝ էշը դռանը չի: Իջաւ գիւղամէջ, դէս ու դէն նայեց, սրա ու նրա գոմ ու մարագը մտաւ, այս ու այն կալապանն ու շւարարանը տնտղեց, բայց էշը չըկար սւ չըկար: Հասկացաւ որ երեխաները նորից էշին տարել են տանջելու. զայրացած՝ վերցրեց մի հոնի եղան և գիւղիցը դուրս գալով դէպի մօտակայ արտերը՝ անդադար կանչում էր. «էհէյ, էշ տանող, էհէյ, էշ տեսնող»:

Սակայն ոչ ոք չէր պատասխանում:

Չալօն աւելի կատաղեց և բերանը փրփուրով լիքը այս անգամ սկսեց թունդ-թունդ հայհոյանք թափել «անամօթների» գլխին: Երբ տեսաւ որ դարձեալ պատասխանող չըկայ, այնուհետև սկսեց ինքն իր էշին անիծել:

«Երանի քեզ պէս ապրանք ուրիշն էլ ունի՞, թէ կենտ ես եմ. դէն ուտի քեզ. ինչ անասուն ես հա...»

Յանկարծ նկատեց որ դիմացի սարիցը իրենց Նասիբ ապին ցած է իջնում: Իսկոյն բարձրացաւ մի թմբի գլուխ, ձախ ձեռքը ականջին դրաւ, աջ ձեռքով փափախը վերցրեց ու օդի մէջ ցած ու բարձր անելով սկսեց կանչել.

—էհէյ, Նասիբ ապի, ապի, ապի:

Նասիբ ապին Չալօի հօրեղբայրն էր. թէպէտ ծեր էր ու

մագերը ալևոր, բայց դեռ սուր լսողութիւն ունէր: Լսելով Չալօի խօսքերը ընդհատեց քայլերը և պատասխանեց.

—Հէյ, աղա, էտ թնչ է, էտ թնչ է...

Չալօն այնքան պինդ էր աղաղակում և այնքան յուզւած էր, որ Նասիբ ապնի ձայնը անլսելի մնացնրան և շարունակեց.

—Ա՛, խլանաս դու ապի, Նասիբ ապի:

—Աղա, էտ թնչ է, թնչ է, իմանում չե՞ս:

—Մեր էշը տեսար ո՞չ, էշը, էշը:

—Տեսայ, համա բերի ո՞չ:

—Ո՛րտեղ տեսար, որտեղ, որտեղ:

—Քարակիտուկի վերի կողմերումը, վերի:

—Հիմի որ գնամ, էնտեղ կըլինի՞ թէ ո՞չ:

—Բաս հօ գէլը կերաւ ո՞չ:

դ.

Իսկ երեխաները իրենց անելիքը առաջուց արել և վերջացրել էին: Երբ տեսել էին Նասիբ ապնին, էշը թողել էին և քարակիտուկների տակ տապ արել: Այժմ էլ, երբ ականջներովն ընկաւ Չալօի և ապնի ձենն ու ձուներ, ամեն մէկը շտապեց փախչի: Հաստապուօր Ապրօն ուզում էր Չալօին վախեցնի և հնարաւորութիւն տայ ընկերներին անվտանգ գիւղ մը տանելու, բարձրացաւ մի սաղարթախիտ կաղնի ծառ և այնտեղից կանչում էր.

—էհէյ, իշատէր, էշն արտը կերաւ, էշն արտը կերաւ...

Մի րոպէ Չալօն սփրթնեց. նա լաւ գիտէր, որ եթէ արտերի պահապանը էշին բռնի և տուն անի, ահագին տուգանք են խլելու իրանից: Իսկոյն ձայնը կտրեց և սուս ու փուս, ծածուկ ճամփով այնպէս քայլեց դէպի ապնի ցոյց տւած տեղը, որ չըլինի թէ մէկը տեսնի և յայտնի պահապանին թէ Չալօն էշին էր ման գալիս և նրա էշն է, որ արտն է ընկել ու կերել:

Երբ էշին հասաւ, խեղճ անասունը կանգնել էր գլուխը խոնարհած, ականջները ցած, պոչը ոտքերի արանքը սեղմած:

Չալօն ան քաշեց ու թի ծակերից բարկութեան ծուխ ելաւ, սակայն արտի պահապանի երկիւղից, առանց մի խօսք ասելու, առաջն արաւ կենդանին ու տուն քշեց:

Խեղճ անասուն: Աղքատի էշ էր, հանգիստ չէին տալիս ո՛չ էշին, ո՛չ տիրոջը:

1) Չալօն ինչո՞ւ չէր ըողորում, ինչո՞ւ չէր պաշտպանում, ինչո՞ւ սուս ու փուս տանում էր այդ ըողորը:

2) Ի՞նչպէս կը լինէր այս էշի պատմութիւնը, եթէ Չալօն մի հարուստ մարդ լինէր:

12. Տերեւաքափ

«Ա՛յ փոքրիկներ, այ սիրուններ»,
ասաւ քամին տերևներին,—

«աշունն եկաւ, մօտ է ձմեռ,
թնչ էք դողում ծառի ծէրին:

Ոսկի դեղին, վար ծիրանի
գոյներ հագէք խայտաբղէտ
ու ճիւղերից ձեր մայրենի
եկէք ինձ հետ, փախէք ինձ հետ...

Եկէք տանեմ հեշտ ու անթև,
անհետ ճամփով, անյայտ տեղեր,
չէք իմանայ այսուհետև

էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...»

Տերևները հէնց լսեցին,

նախշուն-նախշուն գոյներ հագան,
սրւսըւալով տխուր երգեր՝
քամու թևին թռան, փախան:

1) Տերևները ինչո՞ւ էին տխուր. նրանք ինչո՞ւ ականջ դրին քամու խօսքերին:

2) Քամին նրանց ո՞ւր է տանելու:

13. Կոշիկ սրբող Թումասը

ա.

Վաղ առաւօտ է. ահագին քաղաքի կէսը քնած է դեռ։ Բայց Թումասը ոտի է վաղուց, ու շրջապատը լցնում է գործին՝ ուսից կախած իր տուփը, որի մէջ խոզանակներ են ու կօշիկի ներկերը։

Սուր արձագանք է տալիս սուղոցը դեռ դատարկ փողոցներում։ Թումասը ուրախ էր, միշտ ուրախ ու աշխուժ։ Թուխ դէմքով, խելօք աչքերով մի տղայ է. դեռ նոր է լրացել տասը տարին, թէև վրան որ նայես հազիւ կրտաս ութը տարի։

Փոստի կենդրոնական շէնքի դէմը, պիսաւոր մուտքից ոչ հեռու, անձրևից պաշտպանւած մի անկիւնն է նրա աշխատանոցը. այդտեղ նստած է նա ամբողջ օրը իր տուփի ու խոզանակների առաջ. ամառայ շոքին, ձմեռայ ցրտին, միշտ հնչում է նրա ախորժելի բնքուշ ձայնը.

«Չէ՛ք ուզում, պարոն, մաքրեմ ձեր կօշիկը. աղամանդի պէս փայլի, հայելու պէս տեսնէք մէջը ձեր պատկերը... Թանգ չէ, պարոն, հինգ կոպէկ»...

Ասում է ու այնպէս քաղցր ժպտում, այնպէս կատակով, այնպէս կենսուրախ, որ անցորդը ակամայ կանգ է առնում։ Իսկ ով մի անգամ իր կօշիկը Թումասին է մաքրել տալիս, միշտ էլ կը գայ նրա մօտ։

բ.

Իսկ մութն ընկաւ թէ

չէ, նա հաւաքում է ձեռաց իր փոքրիկ շարժական խանութը ու գնում տուն։

Քաղաքի ծայրին, մի խուլ փողոցի խորքումն է այն ցածրիկ հին տունը, ուր մի փոքրիկ սենեակ ու մի մեծ խոհանոց ունեն վարձու բռնած Թումասն ու իր մայրը. մայրը լւացարար է։

Ինչ բախտաւոր ժպիտով է դիմաւորում մայրը ամեն իրիկուն իր սիրեկան երեխին. իսկոյն մոռանում է ամբողջ օրւայ յոգնածութիւնը լւացքի տաշտակի առաջ։

Թումասը դատարկում է իր վարտիկի երկու գրպաններից սև փողերը մօր գոգնոցի մէջ, փոքրիկ բոյրերը պատրաստում են սեղանը և իսկոյն նստում են հացի։ Շտապում է նա։

Ուղիղ ժամը ութին սկսւում են երեկոյեան դասերը. Այս երկրորդ ձմեռն է, որ Թումասը անընդհատ գնում է գիշերները դպրոց. արդէն սովորել է գրել կարգալ. Յերեկայ այն ժամերին, երբ քիչ է անցուղարձը և յաճախորդներ չեն լինում, Թումասը փողոցի անկիւնում, իր տուփի առաջ միշտ մի փոքրիկ գիրք ունի ձեռքումը։

Նա կարդում է, կարդում, և ինչ ծրագիրներ է կազմում ապագայի համար, ինչ մեծ ու պայծառ ծրագիրներ։

Այդ փոքրիկ գրքերը ասում են նրան, թէ քանի քանի մեծ մարդիկ իր նման են եղած իրենց կեանքի սկզբին, քանի քանի մեծ մարդիկ առաջ են գնացել ու բարձրացել են աստիճանից աստիճան միայն իրանց աշխատանքով և իրենց յամառ կամքով։

Եւ Թումասը վճռել է որ ինքն էլ պէտք է դառնայ անպատճառ մի մեծ մարդ. ինչքան բաներ պիտի հնարի մարդկանց համար, ինչպէս պէտք է պահի մայրիկին ու բոյրիկներին...

Այո, մի մեծ մարդ, անպատճառ։

1) Ինչ էք կարծում՝ Թումասի ծրագիրը պիտի աջողի. եւ ինչո՞ւ։

2) Ինչ բաներ են անհրաժեշտ ամեն մի ծրագրի, ամեն մի գործի աջողութեան համար։



14. Աշուն

Աշնանային քամիները փչեցին,
ծառ ու ծաղկունք տերևները թափեցին,
երկինք մռայլ, գիշեր-ցերեկ ամպամած,
սար ու ձորեր մէզ-մառախուղ է պատած:

Ամայացան անդաստաններ, այգիներ,
թռչունների ուրախ երգը դադարեց,
խոպանացան աղմկալի ճամփաներ,
և սայլերի անցուղարձը ընդհատեց:

Յոգնած եղներն հանգստացան գոմերում,
օջախի շուրջ գեղջուկները խմբուկով
աշխատանքի պտուղներն են վայելում՝
ուրախ-զրուարթ, մինչև գարուն ապահով:

1) Գիւղացին մի՞շտ է ձմեռը ապահով:

2) Ի՞նչ պատկեր կըլինի օջախի շուրջը «վատ տարին»:

15. Գգուանքի կարօտ

ա.

Մայրաքաղաքի հեռաւոր թաղում ծերունիների ապաստա-
րանի կողքին կանգնած էր նաև մի որբանոց: Մի առաւօտ ըն-
դարձակ բակի միջով ապաստարանից անցնում էի որբանոցը:

Ծառի տակ, ուրիշներից առանձնացած տեսայ մի գանգ-
բահեր, կարմրաթշիկ մանուկ: Դէմքն այնքան դուրեկան էր,
որ կանգ առայ ու քնքշաբար շոյելով գլուխը՝ բաղցրութեամբ
հարցրի. — Անունդ ի՞նչ է, պստիկ:

Նա պատասխանեց և աւելացրեց թէ եօթը տարեկան է,
ոչ հայր ունի, ոչ մայր, ոչ էլ մէկ ուրիշը աշխարհիս երեսին:
«Դրա համար էլ բերել են ինձ որբանոց», արագ վերջացրեց
նա իր կենսագրութիւնը:

Կարեկցութեամբ ու մտերմօրէն շոյեցի թշերը ու մտայ
որբանոց: «Խեղճ երեխայ», — մտածում էի գնալիս:

բ.

Երբ մի փոքր ժամանակից յետոյ վերադառնում էի նոյն
ընդարձակ բակով, յանկարծ մէկը քաշեց հագուստիցս:

Նա նայեցի, տեսնեմ՝ նոյն փոքրիկ ծանօթ դէմքը:

Սաստիկ յուզւած էր երևում ու այտերը շառագոյն. լուռ,
աղերսական աչքերով նայում էր ինձ:

— Ի՞նչ է, սիրելիս, — հարցրի նրան:

— Նա ուզում եմ... — սկսեց նա ու կմկմաց:

— Ի՞նչ ես ուզում, ասա, — քաջալերում էի ես:

— Ուզում եմ... որ ինձ համբուրես...

— Քեզ համբուրեմ, — զարմացայ ես:

— Այո՛ — ասաւ նա՝ աչքերը ցած գցելով ու կարօտի շեշ-
տով. — դեռ ինձ ոչ-որ չի համբուրել, ո՛չ-որ...

1) Պատմողը ինչու էր կարեկցում փոքրիկին:

2) Զեզ ամենից շատ ո՞վ է սիրում: Մտածի՛ ինչ կըլինի քո կեան-
քը, եթէ քեզ ամենից շատ սիրողները չըլինէին աշխարհիս երեսին:

16. Մայրը

Սենեակի միջին
կանթեղն է ցուում.
գազազած բամին
դռանն է սուլում:

Անքուն մայրիկը
ընկած դոյգ ծնկան՝
օրօր է ասում,
օրօրում մանկան:

— Է՛հ, հերիք, հերիք,
բամի ու մրրիկ,
հանգիստ, չինարներ,
բամու քնարներ:

Ա՛խ, դուք լռեցէք,
մայրն է գեղգեղում.
Թողէք՝ մանկիկս
ննջի իր տեղում:

Էլ մի որոտայ
դու, անեղ որոտ,
իմ անուշ բալէն
քնի է կարօտ:

Հեռացէք, ամպեր,
ամպեր բքածին,
հանգիստ քուն տւէք
սրտիս սիրածին:

Քնիր, բալիկս,
աղօթքով քո մօր.
բամի և որոտ
կը լռեն, օրօր:

Վաղը կը տեսնեն
աչերդ կրկին
և՛ սէր, և՛ գգւանք,
և՛ պայծառ երկին:

17. Եղչերուն

ա.

Մի տարի սարումն էի (պատմում էր Օվակիմ բիձէն): Եկան, լուր բերին թէ՝ թող հիւանդացել է, բեզ ուզում է, արի: Սարիցը վեր կացայ, տուն եմ գալի: Ճամփին ծուեցի, ասի՝ կարելի է որսից բանից պատահի: Ման եկայ ման, մի տեղ տեսնեմ՝ բրնուտումը մի բան խըշխըշացնում է, թփերը ժած է տալի: Ախպէր, էս թէ մոշահաւ է՝ մոշահաւի բան չի, թէ անասուն է՝ ինչո՞ւ չի երևում:

Մի քար գցեցի թփուտը, մին էլ տեսնեմ՝ մի պախրի ճուտի ականջներ ցցեցին, էլ ետ ցածացան ու սկսեցին թփերը ժած տալ, ճամփայ բաց անել, որ փախչի: Հրացանը երեսս կալայ հէնց թփերի էն ժած եկող տեղը: Որ տրաքեց, սա վեր թռաւ, դուրս ընկաւ ու ետ գետնովը դիպաւ: Տղերք, հիմա մի ձայն է ածում, մի տնքում է, ոնց որ մեռնող երեխայ:

բ.

Ուստա որսկաններից լսել էի, ասի՝ սրա մէջը ինձ տեսել է, էստեղից փախել. որտեղ որ է, հիմի ետ կը գայ: Մտայ մի ծառի տակ, ճամփայ պահեցի: Շատ մնացի թէ քիչ, մին էլ տեսնեմ՝ եկաւ... բայց ոնց եկաւ՝ ես տեսայ, դուք ոչ տեսնէք... Մի խօսքով՝ մի մօր նման, հրացանի ձէնը իր երեխի վրա լսած մօր նման: Եկաւ տեսաւ՝ իր ճուտը անշունչ, արնակոյր մի ծառի տակ փռած: Տղերք, դունչը մեկնել է, ոնց է տխուր մզգացնում, ոնց է վերքը լիզում... Հրացանը վեր կալայ, էտտեղից քաշեցի եկայ տուն:

Եկայ տուն, տեսայ՝ թողս դժար է, հոգու հետ կռիւ է տալի, տնքում է: Էնպէս էն պախրի ճուտի նման է տնքում, որ աչքս խուփ եմ անում, կարծում եմ թէ դեռ էն թփի կողքին եմ կանգնած: Վերջապէս, երեխէն մեռաւ, մէրն ընկել է վրէն, բառանշում է... Ասում եմ, փառքդ շատ լինի, Աստուած. ի՞նչ է մեր ու էն սարի պախրի զանազանութիւնը: Ոչ-ի՞նչ. ամենի սիրտն էլ սիրտ է, ամենի ցաւն էլ ցաւ...

18. Կոռնկն ու սագր

Կապուտակ լճի ջրի երեսին,

ճարպիկ ու արագ սագիկն էր լողում,
սուրում ջրի տակ, դուրս գալիս կրկին
ու ինքն իրան բարձրաձայն գովում:

— «Օգում թռչում եմ, ցամաքում շրջում,
լճակի ջուրը պատում նետի պէս.

ինձ պէս ուրիշը չըկայ աշխարհում,

ողջ թռչունների թագաւորն եմ ես»:

— Իդուր ես գովում, յիմար, ինքդ բեզ,

կոռնկը նրան ձայնեց վերևից.

կարող ես արդեօք լողալ ձկան պէս,

եղնիկի նման վազել քարափից,

արծուի նման հպարտ, փառաւոր

կարող ես պատուել ծալքերն ամպերի...

Լաւ է գիտենաս մի բան հիմնաւոր,

բան թէ շատ բաներ, բոլորն էլ թերի...

19. Պառաւի կատուն

ա.

Միշտ միասին էին, պառաւ Շողերն ու իր սև ահագին կատուն:

Երբ պառաւ Շողերը տունն էր հաւաքում, կերակուր եփում կամ նստում գուլպայ գործելու՝ միշտ կողքին էր և կատուն: Պառաւը նրան էր զանգատում իր ցաւերը, թէ ինչպէս՝ էլ կարգին ման գալ չի կարողանում, թէ ինչպէս մատները գողում են գուլպայ գործելիս: Կատուն մոռում էր, ճկուն մէջքը ուղցնում ու քսում պառաւի ոտներին ու ծնկներին:

Երբ պառաւ Շողերը անց էր կենում փողոցով, կատուն իսկի մի քայլ ետ չէր մնում նրա խունացած շրջագետի փեշից ու պոչը վեր ցցած՝ հստիկաւ հետևում էր իր տիրուհու զանգաղ քայլածքին: Դրացի տղերքը նրան տեսնելիս՝ դեռ հեռից կանչում էին կէս լուրջ, կէս ծաղրով:

— Ճամփայ, ճամփայ տւէք Շողեր ու Փիսօ խաթուններին:
Իսկ երբ մթնում էր ու աղբատիկ տնակի մէջ հանգչում
էր աղօտ ճրագը, ցած ու խարխուլ պատուհանի արանքից
պարզ լսում էր կատուի մոմոցը պառաւ Շողերի խռմփոցի
հետ: Երկուսն էլ պառկում էին միեւնոյն անկողնում. ձմեռ-
ները մանաւանդ կատուն էր պառաւի մրսկան ոտների տա-
քացնողը:

բ.

Այսպէս անբաժան ապրում էին նրանք շատ տարիներ:
Պառաւ Շողերի մէջքը աւելի ու աւելի էր կռանում. կատուի
աչքերի լոյսը աւելի ու աւելի էր մարում և բուրդը թափւում:



Մի օր էլ հարևանները տեսան,
որ պառաւ Շողերը նստել է
տնակի առջև ու դառն լալիս է.
Նրա ծնկանը ձգւել պառկել էր
կատուն... սատկած:

Դրացիներից շատերը կային,
նայում էին ու ժպտում. ահա-
գին կինը լաց էր լինում կատ-
ուի վրա:

Այո, պառաւ Շողերը լաց էր
լինում ու կամաց, շրթունքնե-
րի մէջ, կրկնում էր անընդհատ.

«Էլ պրծաւ, էլ հիմա ոչ-որ
չունեմ այս աշխարհում. գնա-
ցին որդիս, հարսս, թոռներս,

հիմի էլ կատուն, որին այնքան սիրում էին թոռնիկներս. մնա-
ցի մենակ, բոլորովին մենակ այս աշխարհում»...

Կրկնում էր պառաւը կամաց, շրթունքների մէջ, ու ան-
մխիթար հեկեկում...

Ինչո՞ւ պառաւը այդպէս սիրում էր իր կատին:

20. Աղւեսը

Աղւեսն եկաւ մութ անտառից,
հարցմունք արաւ լիբը թառից.
«Մեծ խորոզ է հարկաւոր ինձ»:
Քաղցած աղւեսն, ագին ծաղիկ:

Աղւեսն հագել բուրբը դեղին,
պտուտ կը գայ շուրջը գեղին:
Ջուր կը տրըւեց տատիս լեղին:
Դեղին աղւեսն, ագին ծաղիկ:



Աղւեսն ասաւ պառաւ տատին.
«Մըտիկ չեմ տայ ձեռիդ փէտին,
կարօտել եմ թըմփլիկ ճուտին»:
Անվախ աղւեսն, ագին ծաղիկ:

Աղւեսն եկել նըստել գէղին,
երկար ագին ծրուել վըզին,
աչք է գըցել մեր խորոզին,
էս գող աղւեսն, ագին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատը պառաւ.
«Աման, հասէք, տարաւ, կերաւ,
գըլխիս էս ինչ փորձանք բերաւ
անտէր աղւէսն, ագին ծաղիկ:

Այ իմ խորոզ, կարմիր խորոզ,
ման կը գայիր գոռոզ-գոռոզ,
փետուրդ արաւ ողջ դարուփոս
էն չար աղւէսն, ագին ծաղիկ:

Աղւէս, աղւէս, փոքրիկ գազան.
ոտներդ կարճ ու խիստ վազան.
չընեն ամեն քեզ չըհասան,
ճարպիկ աղւէս, ագին ծաղիկ»:

21. Վայրենին ու նամակը

ա.

Եւրոպացիք ագարակներ էին շինել վայրենիների աշխարհում ու իրանց մօտ ծառայեցնում էին սեամորթ տեղացիներին. Մի ագարակատէր իր բարեկամին, որ ապրում էր հեռաւոր կալաձքում, նւէր է ուղարկում մի զամբիւղ նարինջ ու նամակի հետ տալիս է վայրենու ձեռքը: Ծամփին վայրենին չի համբերում ու նարինջներից մի բանիսը ուտում է: Պարոնը զամբիւղը ստանում է թէ չէ, նամակը կարդում է ու նարինջները համարում:

—Այստեղ հինգը պակաս է. ճամփին կերել ես,—ասում է նա խիստ ձայնով բերող վայրենուն:

—Ո՛րտեղից իմացար,—ապշած նայում է վայրենին:

—Այ այս թուղթն է ասում:

—Այդ սպիտակը...

Վայրենին խլում է նամակը, մօտեցնում ականջին, բիշ սպասում ու տարակուսանքով գցում գետին.

—Բաս ինձ ոչինչ չի ասում:

բ.

Մի քանի ամիս անց՝ տէրը կրկին նոյն վայրենուն տալիս է մի բանի շիշ գինի ու նամակ և հրամայում է տանի իր բարեկամին: Ծամփին վայրենին ուղում է անպատճառ գինու համը տեսնի, բայց վախենում է ձեռքի բռնած «սպիտակից» վայրէջ նորից իմաց տայ: Բայց յանկարծ ուրախ վեր է թռչում. հնարքը գտել էր:

Հէնց որ հասնում է մի ամայի տեղ, հանում է նամակը, կոխում մի մեծ քարի տակ, չորս բուրն էլ ածում է չորացած տերևներ, որ նամակը ոչ մի ծակից դուրս չընայի. իսկ ինքը վեր է կենում, բաւական հեռանում, մի թփի տակ ցած է դնում իր բեռը, հանում մի շիշ ու փառաւոր անուշ անում... Քէփը չաղանում է, երգում, պարում, յետոյ էլ պառկում, մի լաւ քնում:

Քունն էլ որ առնում է, վեր է թռչում, վերցնում է զամբիւղը, հանում է քարի տակից նամակը ու շարունակում ճամփան ուղիղ իր տիրոջ բարեկամի ագարակը. «Դէ, հիմի թող ասի, տեսնեմ՝ ինչ պիտի ասի»,—մտածում է վայրենին ու իրեն իրեն ժպտում:

գ.

Տեղ հասնելուն պէս պարոնը նամակը կարդում է, հաշւում է շիշերը ու բարկացած աղաղակում է վայրենու վրա.

—Սպիտակ գինուց մի շիշ խմել ես նորից, անպիտան:

Վայրենին լսում է թէ չէ, թողնում է փախչում: Ու այն օրից սարսափահար պատմում է իր ցեղի մարդկանց, թէ ինչպէս սպիտակամորթները մի տեսակ ճերմակ կաշու պէս բան ունեն, որ ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ լսում, ամեն ինչ իմանում և սպիտակամորթներին պատմում, իսկ սեամորթներին ոչինչ չի տսում:

1) Եւրոպացիք միշտ են գիր ունեցել: Ի՞նչ բան է գիրը:

2) Ի՞նչն է ստիպել մարդկանց, որ գիր հնարեն:

3) Թղթի հետ խօսող եւրոպացին ի՞նչ պիտի թայ վայրենու աչքին:

22. Ժամանակը

«Թիկ-թակ, թիկ-թակ»։—Ո՛վ է այդ։

«Ժամանակն է, գնում է.

նրա ոտքի ձայնն է այդ,

թիկ-թակ, թիկ թակ,

որ լրսւում է շարունակ»։

—Ժամանակը, ո՞վ է այդ։

«Ցուպը ձեռին մի խուլ մարդ,

շալակն առած մի մեծ պարկ,

թիկ-թակ, թիկ-թակ,

որ գընում է շարունակ»։

23. Քարը

ա.

Տիգրանը այդ օրը շատ ուրախ էր։ Ուրախութիւնից չէր իմանում ինչ անի. իջել էր պարտէզ ու քարեր էր շարաւում ճնճողուկների վրա։ Թէև ոչ մէկին էլ չըդիպաւ, բայց խեղճ ծտերը շատ էին վախենում և նրա ձեռքի ամեն շարժումից վեր էին թռչում ծառի ճիւղերից, նստում էին տանիքի վրա ու նորից իջնում ցանկապատին։ Նրանց այդ վախեցած թռուչ-կոտելը շատ էր զարճացնում Տիգրանին։

Այդպէս ճնճողուկների ետևից ընկած միջոցին յանկարծ, նկատեց, որ դարպասի առջև մի աղջիկ էր կանգնած՝ կարճ, նկատեց, որ դարպասի առջև մի աղջիկ էր կանգնած՝ կարճ, պատուտած շորերը հագին ու ոտաբոբիկ։ Նրա մազերը խիտ-խիտ փունջերով թափւում էին կեղտոտ ճակատին, այտերին և ուսերին։

—Աղա՛, քեզ մատաղ...—կամացուկ ու երկչոտ ձայնով կըմկըմաց աղջիկը։


Տիգրանը հէնց այն է ուզում էր քարը նետի ճնճողուկներին, կանգ առաւ ու մօտեցաւ աղջկան։

—Դու աղքատ ես,—հարցրեց նա, ձեռքով ճակատի քրքր-տինքը սրբելով։

—Այո՛... աղքատ եմ... խեղճ եմ... Պատիկ աղա, մի ողոր-մութիւն արա՛, —կրկնեց աղջիկը։

Տիգրանը հետաքրքրութեամբ նայում էր նրան։

Աղջիկը այնպէս տգեղ էր, այնպէս փոքր, նիհար, այնպէս արևից սևացած. նրա մեծ, ներս ընկած աչքերի մէջ և ամ-



բողջ գէմջի վրա մի հիւանդոտ, ողորմելի բան կար։

—Դու համց ես ուզում, համ,—հարցրեց նա, քարը իր բռան մէջ ամուր սեղմելով։ —Ապա, ձեռքդ պահի։

Աղջիկը վստահ պարզեց իր փոքրիկ, չորացած ձեռքը։

—Ա՛ռ,—ասաւ գիժ տղան և նրա ափը դրաւ դեղին քարի կտորը։

Աղջիկը բարը դէն չը նետեց և ոչինչ էլ չասաւ. նայեց քարին, յետոյ արտասուալից աչքերը բարձրացրեց Տիգրանի վրա ու գլուխը կախած դուրս գնաց փողոց:

Ոչ մի խօսքով, ոչ մի շարժումով, ոչ մի հայեացքով նա չըկշտամբեց Տիգրանին. բայց Տիգրանի ուրախութիւնը յանկարծ չքացաւ, դէմքը մոռայլեց: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ: Արևը առաջւայ պէս պայծառ էր, երկինքը առաջւայ պէս ջինջ, ճնճողուններն էլ առաջւայ պէս թռչկոտում էին և ճըլլըլում, բայց Տիգրանը էլ ոչինչ չէր տեսնում:

Յանկարծ վազեց խոհանոց, ինքն իր ձեռքով կտրեց մի մեծ կտոր հաց և դուրս նետեց դարպասից: Նայեց աջ, նայեց ձախ, աղջիկը չէր երևում, գնացել էր: Տիգրանը վազեց փողոց, նայեց մէկի, միւսի բակը, — չըկար...

Տիգրանը վերադարձաւ իրենց բակը և հացը ձեռքին կըրթնեց դարպասի անկիւնին:

Կարծես մի բան ծանր նստել էր նրա կրծքին: Ախ, Աստուած, գուցէ այսպէս ծանր չըլինէր, եթէ աղջիկը ետ շարժուած լինէր բարը, եթէ հայհոյած, մի բան ասած լինէր: Բայց աղքատ աղջիկը արտասուալի աչքերով նայել էր նրան ու լուռ գնացել. ուրիշ ոչինչ:

Նրանցից յետոյ ամեն անգամ աղքատի ձայն լսելիս սեղմում էր Տիգրանի սիրտը, դուրս էր նետւում, որ տեսնի՝ կտրելի է այն աղջիկն է:

Ո՛չ. այն աղջկան էլ երբէք չըտեսաւ: Աղջիկը անհետ չքացել էր, տանելով իր հետ դեղին բարը. կորել էր, կարծես իսկի աշխարհիս երեսին ծնւած էլ չըլինէր...

- 1) Ի՞նչու յանկարծ կորաւ Տիգրանի ուրախութիւնը:
- 2) Վնաս տղայ է Տիգրանը. ո՞րն է նրա մեծ թերութիւնը:

Կարծես տարիներ չեն անցել, կարծես հէնց երէկ լինէր: Ես տեսնում եմ իմ պառաւ տատին, նստած իր սովորական տեղում, մեր խրճիթի դռան դէմ: Վիթխարի ընկուզենին պատըսպարում է նրա ալեոր գլուխը ամառային արեգակի կրակոտ ճառագայթներից: Նա նստած է, ինչպէս միշտ, լուռ ու մտախոհ:

Տատու կոչւում էր Շուշան. նա ժառանգել էր իր մօր անունը: Չընայելով պատկառելի տարիքին, ամեննին չէր կորցրել իր ժրութիւնը. առաւօտից մինչև երեկոյ անդադար շարժման մէջ էր: Նրա ամենատես աչքերը ամեն բան կընկատէին, նրա անհանգիստ լեզուն ամեն բանի մասին հաշիւ կը պահանջէր: Մինչև մահը նա չըթողեց ձեռքից իր կառավարութեան գաւազանը, ահագին փայտէ շերեփը, որով նա ընթրիքի ու ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում: Մինչև իր մահը մեր տան թէ մեծը և թէ փոքրը ամենայն խոնարհութեամբ հպատակւում էինք նրա հեղինակութեանը:

Տատու շատ աշխատասէր կին էր: Յիշում եմ, գիշերւայ մեծ մասը, նստած այծի մորթու վրա, դնում էր իր առջև մանելու մեքենան և ոսկրացած ձեռքով պտոյտ էր տալիս ճախարակի թևը, բամբակից թել էր պատրաստում: Եւ ինձ թւում է՝ թէ դեռ զարկում է ականջիս պառաւի տխուր ու դողդոջուն երգը, ինձ թւում է՝ թէ դեռ լսում եմ նրա նահապետական մեքենայի խուլ ճոճոցը:

Մեր գիւղում տատու համարւում էր խելացի պառաւններից մէկը, իսկ իր տան մէջ նրա իմաստութիւնը հասնում էր անսխալականութեան: Ծշմարիտն ասած՝ ես էլ փոքր ժամանակս հիացած էի նրա իմաստութիւնով: Նա ամեն բան գիտէր: Նա գիտէր՝ թէ ինչ նշանակութիւն ունեն այս ու այն

երազները: Նա գիտէր՝ թէ ինչ խորհուրդ ունի, երբ մարդու մարմնի այս կամ այն մասը «խաղում է»: Նա հասկանում էր կաշաղակի լեզուն և բացատրում էր, թէ ինչ լաւ լուրեր է բերում նա, երբ մեր պատի վրա նստած կըշկըշում է: Նա լսել չէր կարող բուռի շարագուշակ ձայնը և պատւիրում էր ինձ՝ բարով սպանեմ, երբ նստի մեր պատին: Նա գիտէր՝ թէ ինչու Սողոմոն իմաստունը անիծեց ճնճողակներին, կամ ո՞վ դրեց յոպոպի գլխին այն գեղեցիկ փետուրէ սանրը:

Այո, տառա շատ բան էր իմանում: Նա պատմում էր ինձ՝ թէ ինչպէս կը հասնի աշխարհի վերջը, կամ երբ կը յայտնւի Նեուր: Նա ասում էր, թէ անիծւած Նեուր կըգայ մի անգին էշի վրա նստած, թէ նրա աւանակի ականջները այնքան երկար կըլինեն, որ մի ականջի ծայրը կը հասնի մինչև արևկամուտը, իսկ միւսինը մինչև արևելք: Նա ասում էր՝ թէ այն ժամանակ կըյայտնւեն «աջուջ մաջուջները», թէ նրանք այնքան փոքրիկ թզուկներ են, որ իմ կօշիկները կարող էին նրանց համար բնակարան դառնալ:

Բայց ես աւելի սիրում էի տատիս հեքիաթները, որ գիշերները պատմում էր: Երբեմն մի անգամ սկսած հեքիաթը հազիւ վերջանում էր մի ամբողջ շաբաթեայ ընթացքում: Ա՛խ, ինչ լաւ պատմում էր նա. ես միշտ ուրախութեամբ էի լսում: Բայց երբ պատմում էր դեերի, սատանաների, գրողների ու գժոխքի մասին՝ ես սարսափում էի, և աւելի շատ էի վախենում, երբ խօսում էր մեռելների մասին:

Իսկ երբ տառա ինքը մեռաւ, նրանից չէի վախենում: Նա այնպէս հանգիստ պառկած էր դագաղի մէջ, կարծես քնած լինէր: Նրա գէմբը էլի այնպէս բարի էր, ինչպէս միշտ: Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղայ:

1) Պատ խողը ինչո՞ւ մեծ ժամանակ էլ հիացած չէ իր տատի իմաստութիւնով:

2) Այդ տեսակ իմաստութեան մենք ի՞նչ անուն ենք տալիս, եւ ինչո՞ւ:



25. Մկների ժողովը

Սով է, սով է Մկաստան,
կատուի ձեռքից լգստան:
Գլխին ընկաւ դռնէ դուռ,
գիւղամէջը շուռ ու մուռ:
Էլ չըթողեց դուռ-կտուր,
շահել, անեղ գեղովի,
շոջերին շոկ, տեղովի
կանչեց բերեց ժողովի,
թէ ինչ անեն որ կատէն
մի հնարքով ազատեն:

Եկան գիւղի շոջերը,
երկար բարակ պոչերը,
մասնակցեցին խորհրդին:
Մի շոջ խօսեց իր հերթին.
«Լսէք, մկներ ցեղակից,
չունեմ որդի, կողակից.
Ես մի անտէր ծերուկ եմ,
բայց պատւաւոր մի մուկ եմ:
Պակսեց ուժը իմ ոտի,
պէտք է մեռնեմ անօթի.
Էլ չեմ կրժի չորթանը,
էլ չեմ ծըծի ես թանը.
մահս է կանգնել դռանը,
սով է դրկել Մուռանը:
Ա՛խ, Մուռանը, մուռանը,

վէր է ընկնում մառանը՝
հէշ նման չի գազանի.
ինչքան ասես նազ անի,
ստից սատկի, տազ անի,
մեղի տեսնի, վազ անի,
գլխից բռնի, կախ անի,
թաթովը տայ, խաղ անի,
ուտի, բէֆը չազ անի:
Էսպէս գուլում ու կրակ...
դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:
Բայց թէ ազնիւ մեր ցեղը
կորչելու չի գուր տեղը.
ցաւն էլ ունի իր դեղը:
Այ բերել եմ
ես մի գանգ.
Ծափ-ծրընգոց,
մէջը զընգոց.
մենք կախ տանք
կատուի վզից,
որ ինչքան էլ օրօրայ,
որ ինչքան էլ շորորայ,
ստից սատկի,
տազ անի,
գալն իմանանք
գազանի:
Է. գանգը ո՞վ կախ անի»:

—Այ՛, դ՛հւ:
 «Այ՛ն տանի»:
 —Բայ՛, դ՛հւ:
 «Բայ՛ն կախէ»:
 —Չայ՛, դ՛հւ:
 «Չայ՛ն կաղ է»:
 —Մստ՛, դ՛հւ:
 «Մստ՛ն կարճ է»:
 —Փոստ՛, դ՛հւ:
 «Էտ էլ խի՛ղճ է»:
 —Համբ՛, դ՛հւ,
 «Ես տկար եմ»:
 —Չամբ՛, դ՛հւ:
 «Ես տանտէր եմ»:
 —«Սաղ՛, դ՛հւ:

«Ասենք տարայ.
 բա որ կատուէն
 գայ ինձ վրա»:
 —Բտ՛ն, Թտ՛ն թող մէկից
 բռնեն կատուին քամակից:
 «Ի՞նչ է խօսում չոր գանգը.
 լաւ է դու տար էտ գանգը.
 էլ ի՞նչ Բտ՛, ի՞նչ Փստան»,
 ճստաց Բտ՛ն ճստան:
 —Լռի, յանդուգ,
 կոտորէք դուք.
 վախկոտներիդ ես թաղեմ.
 ճառ ասեմ թէ՛ գանգ կախեմ,—
 գոչեց շոջը,
 բաշեց պոչը:

26. Տատիկը

—Տատիկ, ինչի՛ցն է, որ բո մազերն այդպէս սպիտակ են.
 —Չմեռն է, տղաս, տարիների ձիւնն է այդ:
 —Տատիկ, ինչի՛ցն է, որ ճակտիդ վրա խոր ակօսներ կան:
 —Վիշտն է փորել բոլոր այս խոր ակօսները:
 —Տատիկ, ո՞վ է քո գլուխն այդպէս շարժում:
 —Դա մի հով է, որ երկնքից է պալիս. մահս մօտ է,
 թռնիկս:
 —Ինչի՛ցն է, որ բո աչքերը պղտորւել են, տատիկ ջան:
 —Շատ դառն արտասուք թափելուցս է:
 —Ինչի՛ համար այդպէս ցած, կռացած ես պահում բո
 ճակատը:
 —Որ լաւ նշմարեմ այն հողը, ուր իմ ոսկորներն են շու-
 տով հանգստանալու:
 —Եւ ի՞նչ ես մրմնջում միշտ, սիրելի տատիկ, երբ թու-
 նիկդ քեզ գրկում է:
 —Քեզ նոր կեանքի բարի լոյս, իմ անգինս:



27. Ճախարակ

Մանի, մանի, ճախարակ,
 նըստենք բանի, ճախարակ,
 անտէրին տէր, ճախարակ,
 որբերին հէր, ճախարակ:

Լուսնեակը դուրս է եկել,
 աչքերիս լոյս է եկել:
 Լուսնի լոյսով մանեմ ես,
 սպիտակ ոստեր անեմ ես,
 աղքատ օրով ու լացով
 որբեր պահեմ մանածով:

Մանի, մանի, ճախարակ,
 նըստենք բանի, ճախարակ,
 անտէրին տէր, ճախարակ,
 որբերին հէր, ճախարակ:

- 1) Ինչո՞ւ այրի կինը լուսնի լոյսով է մանում, եւ ինչի՞նչ ցերեկը:
- 2) Ինչո՞ւ աշխատանքի գործիքը անտէրի տէրն է ու որբի հէրը:

28. Ամենալաւ վկայականը

Մի վաճառական լրագիրներում յայտարարել էր, թէ իր խանութի համար ուզում է մի աշակերտ վարձի:

Շատ մարդ եկաւ գնաց, վերջապէս վաճառականը ընտրեց մէկին:

—Ասա, խնդրեմ, հարցրեց մի ծանօթ,—ինչո՞ւ զրան ընտրեցիր: Ոչ վկայական ունէր, ոչ էլ ճանաչում էիր: Ուրիշները հրաշալի վկայականներ բերին, բայց դու ճամփու զրիր:

—Սխալւում ես,—ասաւ վաճառականը:—Այս տղան շատ վկայականներ ունէր: Սենեակը մտնելուց առաջ ոտները լաւ սրբեց ու դուռը ծածկեց առանց թրրիկացնելու. ուրեմն մաքրասէր է ու կարգապահ: Իր նստած աթոռից վեր կացաւ ու տեղ տւաւ ներս մտնող կաղ մարդուն. ուրեմն բարեսիրտ է ու յարգում է աւելի հասակաւորին: Դեռ շէմքին գլխարկը հանեց, արագ ու կտրուկ պատասխաններ էր տալիս իմ հարցերին. ուրեմն քաղաքավարի է ու աչքաբաց: Կռացաւ, բարձրացրեց գիրքը, որ դիտմամբ ձգել էի յատակին, մինչդեռ ուրիշները դէմ էին ընկնում գրքին կամ կողքից անցնում: Հանգիստ սպասում էր իր հերթին, չաշխատելով ուրիշների առաջը կտրի. ուրեմն լաւ կրթւած տղայ է: Շորերը լաւ սրբւած էին, իսկ երեսն ու ձեռքերը մաքուր: Ի՞նչ ես կարծում, այս բոլորը միասին լաւագոյն վկայականը չի:

Ուրեմն ո՞րն է մարդու ամենալաւ վկայականը:

29. Ճպուռն ու մրջիւնը

Թրուի-վրուի մի ճպուռ

ողջ ամառը շուռ ու մուռ

երգեց, ճռաց,

ճրոճրոաց:

Մին էլ, ըհը՛, ձմեռը

փռեց իրա թևերը,

բացեց գորգը սպիտակ,
դաշտերն առաւ ձիւնի տակ:
Անցան պայծառ օրերը,
էլ որն ասեմ, էլ որը,
երբ ամեն մի թփի տակ
թէ սեղան կար թէ օթեակ:
Եկան օրեր ցրտաշունչ,
ճպուռն ընկաւ լուռ ու մուռը.
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ.
ցուրտը տարաւ ոտ ու ձեռք:



Ձընգըր-զընգըր դողալով,
ծանր ծանր սողալով,
նա մըջիւնին ասում էր.
«Գլխիդ մատաղ, սանամէր,
մի ճար արա՛ շունչ առնեմ,
ցրտից սովից չը մեռնեմ:
Կերակրի, տաքացուր,
մինչև զարուն ապրեցուր»:
—Ի՞նչ խաբար է, սանիկըս,
զարմանում եմ, ջսնիկս.
չաշխատեցիր ամառը,
ասա, ի՞նչ էր պատճառը:
—Էտպէս բանի, սանամէր,

էլ ժամանակ ո՞վ ունէր:
Էն խոտերում բուրաւէտ
երգում էինք մերոնց հետ:
«Ուրեմն դու...»—Այո՛, ես
ողջ ամառը դէն ու դէս
երգ երգեցի մշտապէս:
—Երգեցիր, հա՛. շատ բարի.
այժմ էլ բռնի վերվերի,
քամին ծափ տայ՝ դու պարի:

30. Բեզակի լապտերը

ա.

Կատարինէ Բեզակը ապրում էր ծովեզերքի մօտ մի բլրի վրա: Նա այրի կին էր և անգաւակ: Բեզակը վարում էր առանձնացած կեանք և պէտք է շատ աշխատէր, որ իր աղքատիկ գոյութիւնը մի կերպ պահպանէր:

Մի գիշեր, երբ ոռնալով փչում էր քամին և ալիքները բախում էին բլրի ժայռերին, Բեզակը իր գործին նստած, ինքն իրան ասում էր.

— Մենակ եմ այստեղ. մէկը չունեմ, որ իմ մասին մտածէր, մէկը չունեմ, որի մասին ինքս էլ մտածէի... Ո՞ւր համար եմ ապրում...

Յանկարծ նա յիշեց, թէ ինչքան նաւեր խորտակւելու են այդ փոթորկալից գիշերը ծովափին, ոչ հեռու իր տնակից. մի փարոս չրկար այդտեղ, որ փրկէր նրանց վտանգից, թանձր խաւարի մէջ:

— Ինչո՞ւ մի վառ լապտեր չը պահեմ ամեն գիշեր իմ պատուհանում: Թող նաւորդները տեսնեն այդ ճրագը և իմանա, որ մօտենում են ծովափի ժայռերին:

Այրու սիրտը այս մտքից անհուն ուրախութիւնով լցւեց: Նա սկսեց հաշւել ու գտաւ, որ ինքը եթէ ամեն գիշեր մի ժամ աւելի աշխատի, պիտի կարողանայ այնքան վաստակել, որ բաւական կըլինի լապտերի նաւթը գնելու համար:

Նա աւելի ոգևորւած սկսեց աշխատել: Մի շաբաթից յետոյ նա գնեց մի ածան լապտեր ու տեղաւորեց իր պատուհանում:

բ.

Այդ օրւանից ամեն գիշեր, մթնում էր թէ չէ, Բեզակի տնակից պսպղում էր լոյսը և ճամփայ ցոյց տալիս նաւորդներին: Հարեանները հարցնում էին.

— Բեզակ մայրիկ, այդ ո՞ւմն ես սպասում, որ ամեն գիշեր պատուհանումդ լապտեր ես վառում:

Նա, բարի ժպիտը դէմքին, ցոյց էր տալիս հեռուն, տարածւող լայնարձակ ծովն ու շշնջում.

— Իմ եղբայրներին, սիրելիներս, իմ եղբայրներին...

Եւ երբ կատաղի մրրիկը ծառացնում էր անագին ալիքներն ու նաւը շարտում վեր ու վար, նաւի ուղեցոյցը տեսնում էր բլրի գագաթին փայլող լոյսն ու կանչում.

— Տեսէք, Բեզակի ճրագն է վառւում այնտեղ: Զգո՛յշ, ժայռեր են այստեղ:

Շատ տարիներ վառւեց այդ լապտերը Բեզակ մայրիկի պատուհանում: Օրէցօր աւելի ու աւելի էր կռանում պառակի մէջքը, աւելի ու աւելի ցած էր նայում նրա ճերմակած գլուխը, աւելի ու աւելի էին դողում նրա չորացած ձեռները, բայց նրա լապտերը շարունակ դեռ վառւում էր...

Եւ երբ մի առաւօտ նրան մեռած գտան, ողջ գիւղը հաւաքւեց նրան թաղելու: Գերեզման իջեցնելիս, երբ արդէն նա յաւիտեան պիտի ծածկւէր մարդկանց աչքերից, քահանան յանկարծ բացականչեց.

— Մնաս բարով, Կատարինէ քուրիկ, էլ ո՞վ պիտի վառի քո լապտերը, էլ ո՞ւմ ճրագը պիտի ճամփայ ցոյց տայ խաւարի մէջ նաւորդին:

Ամեն կողմից կանչեցին՝ «Մենք, տէր հայր, մենք»:

Մինչև այսօր էլ այն բլրի գագաթին, բարձր շինութեան գլխին, գիշերւայ մթնում վառւում է լապտերը, Բեզակի լապտերը: Մինչև այսօր էլ նաւորդը հեռից նկատելով լապտերի ճրագը՝ կանչում է.

— Տեսէք, Բեզակի ճրագն է վառւում այնտեղ: Զգո՛յշ, ժայռեր են այստեղ:

Ո՞վքեր են Բեզակի «եղբայրները»:



31. Չաղացապանի երգը

Ձուրն է թշուում,
 ջուրն է խշուում.
 ու չաղացում
 ալեկոծում,
 իրարանցում.
 և կարծես թէ
 հազար կանայք
 լաց են լինում
 ու հեծեծում.
 Երեք չորս հատ
 չաղացաքար
 իրենց անդուլ
 չախչախներով
 պըտըտում են
 հա անդադար:

*
 Դուրսը,
 ներսը
 հարայ-հրոց,
 սայլի ճռինչ,
 քարի գրռոց:
 Մինը բեռը
 ներս է կրում,
 մինը ներսն
 դուրս է բերում.
 մինն աղունը
 վրա անում,
 ցորեն տալիս
 ալիւր հանում:

*
 Տես և մի կողմ
 չաղացապանը
 ալրաթաթախ՝
 ալրատանը,

քարը տեղից
 իջեցրած,
 նրա տակը
 վրէն արած
 հա տալիս է
 քարին մուրճը
 և կայծեր է
 թափում շուրջը,
 և ծնկները
 քարի վրա՝
 նա երգում է
 երգը իրա.

*
 «Արի, իմ քար,
 չաղացաքար,
 քեզ կըռանեմ,
 խոր փոսիկներ,
 սուր ատամներ
 կուռ կըռանով,
 ծանր մուրճով
 լանջիդ հանեմ,
 որ դու աղաս
 բընաղունը,
 բընաղունը,
 չոր աղունը,
 ալիւր, ալիւր
 տաս աշխարհին,
 և ծառային,
 և՛ արքային:
 Աշխարհը լայն
 մեր տեղը նեղ,
 հալւենք, մաշւենք
 մենք միատեղ:

քեզ կըռանեմ,
 սուր ատամներ,
 խոր փոսիկներ
 կըրծքիդ հանեմ:
 Ես քո տէրը,
 ես քո գերին,

արի հաց տանք
 ողջ աշխարհին:
 Աշխարհը լայն,
 մեր տեղը նեղ.
 հալւենք, մաշւենք
 մենք միատեղ:

Ինչո՞ւ է ասում՝ «ես քո տէրը, ես քո գերին»: Ծիջտ է:

32. Դեղձանիկն ու տատրակիկը

Դեղձանիկը մի թակարդում
 գարնւում էր ու թըփըրտում:
 Մի տատրակիկ՝
 պուճուր ձագիկ՝
 ծիծաղում էր նրա վրա:
 «Բա ամօթ չէ՞,
 ասում էր նա,
 օր-ցերեկով
 բաց-բաց աչքով
 ընկար էտպէս

դու կոյրի պէս:
 Ես լինէի,
 չէի խաբւի,
 իմ արեւ...»
 Մին էլ, ըհը՛,
 ոտն ու թեք
 սընապանծը
 գըցեց ցանցը:
 Տեղն էր, տեղը էն տատրակին.
 Ինչո՞ւ ծաղրեց դեղձանիկին:

33. Հօր հիւանդապահը

ա.
 Մի գիւղացի տղայ կանգնեց հիւանդանոցի դռանը, դռնա-
 պանին մի տոմսակ ցոյց տւաւ ու խնդրեց, որ թոյլ տան ի-
 րեն տեսնի հիւանդ հօրը:
 —Ե՞րբ է եկել քո հայրը,—հարցրեց դռնապանը:
 —Մի հինգ օր առաջ: Նա այստեղ բաղաքում մշակու-
 թիւն էր անում, հիւանդացի է ու եկել ձեզ մօտ: Մեզ
 իմաց տւին. ես այժմ գալիս եմ գիւղից: Խնդրում եմ, ցոյց
 տւէք, որտեղ է:
 —Հա, հա, իմացայ. պառկած է չորրորդ սրահում, ամե-
 նից վերջը,—ասաւ սպասաւորը:—Արի:
 Ու ներս տարաւ տղային: Նախ գնում էին երկար մի-
 ջանցքներով, յետոյ մտան մի մեծ սրահ ու անցան մահճա-

կանների շարքերի միջով: Չորս կողմը մաշկած ու դեղնած դէմքեր էին. օդը լիքն էր դեղերի հոտով: Սպիտակ հագած գլխովեան քոյրերը մի հիւանդի մօտից անցնում էին միւսին:

—Ահա հայրդ,—ասաւ սպասաւորը, ցոյց տալով մահճականներից մինը:

Հիւանդի ձեռքը անշարժ ընկած էր վերմակի վրա: Տղան բռնեց այդ ձեռքը ու հեկեկալով գլուխը խոնարհեց հօր ուսին: «Ապի, ապի...» Հիւանդը շարժեց, շուռ եկաւ, երկար նայեց տղային, կարծես թէ ճանաչեց, բայց ոչինչ չասաւ:

Խեղճ հայրիկ, ինչպէս փոխել էր: Մօրուքը երկարել, սպիտակել, երեսը ուռել, թխացել, աչքերը կուչ էին եկել, շրթունքները կախ ընկել: Ուղղակի չէր կարելի նրան ճանաչել:

—Ապի, ապի,—կանչում էր տղան:—Էս ես եմ, չե՞ս ճանաչում: Յակոբն եմ, քո Յակոբը: Գիւղիցն եմ եկել, մայրիկը ուղարկել է որ քեզ տեսնեմ: Գոնէ մի խօսք ասա:

Հիւանդը լուռ նայեց, նայեց ու աչքերը խփեց:

Այդ միջոցին էր որ զանգը տւին ու մտաւ բժիշկը իր օգնականի հետ: Հերթով նայեց հիւանդներին, վերջապէս մօտեցաւ Յակոբի հօրը: Բռնեց հիւանդի զարկերակը, ճակատը շօշափեց ու մտածեց:

—Սա հիւանդի որդին է, նոր է եկել գիւղից,—բացատրեց գլխովեան քոյրը,

—Ինչպէս է հայրս,—հարցրեց տղան:

—Մի վախենայ, տղաս,—պատասխանեց բժիշկը:—Դեռ տեսնենք. կը լաւանայ, եթէ լաւ խնամւի:

—Ես ինքս կը մնամ այստեղ, պարոն բժիշկ, ու կը խնամեմ,—պատասխանեց տղան:

Բժիշկը ժպտաց:

—Դու ի՞նչ կարող ես:

—Ինչո՞ւ չեմ կարող: Եւ վերջապէս հօրս ես այսպէս երեսի վրա մենակ չեմ թողնի,—ասաւ տղան վճռապէս:

Բժիշկը մի սուր հայեացքով չափեց նրան ոտից գլուխ, բիշ մտածեց ու ասաւ:

—Լաւ, հիւանդի սրտին գոնէ մխիթարանք կը լինի, երբ տեսնի որ դու մօտն ես:

բ.

Տղան դարձաւ հիւանդապահ: Ուղղում էր հօր բարձն ու

վերմակը, ճանճերն էր քշում, տալիս էր դեղը որոշւած ժամերին և կատարում էր ճշտութեամբ այն ամենը, ինչ որ բժիշկն ու զրթութեան քոյրը պատահրում էին: Գիշերներն էլ քնում էր նրա կողքին, երկու աթոռի վրա:

Անցնում էին օրերը. հիւանդը մէկ լաւանում էր, մէկ վատանում. կարծես գիտակցութիւնը վրան էր,

բայց այնքան նւազած էր, որ ոչինչ չէր խօսում ու մեծ մասով թմրած պառկած էր:

Այդ թմրութիւններից յետոյ, երբ հիւանդը աչքերը բաց էր անում, տղան թեքւում էր հօր վրա, խօսում էր, պատմում իրենց տնից, իրենց կեանքից, մօր մասին, քոյրերի մա-



սին, աշխատում էր ուրախացնի հօր սիրտը:

Եւ հիւանդը նայում էր, նայում ու լսում: Մի անգամ Յակոբին այնպէս թւաց, թէ հօր դէմքը ցնցւեց ու աչքերում արցունք փայլեցին: Կարծես ճիգ էր անում, որ շրթունքը շարժի, մի բան ասի...

Յաջորդ առաւօտը բժիշկը յայտնեց, որ հիւանդի դրութիւնը աւելի վատացել է: Յակոբի սիրտը սաստիկ կոտրւեց, բայց ամեն կերպ զսպում էր իրեն, որ հայրը ոչինչ չը նըկատի: Միւս կողմից իրեն այնպէս էր թւում, որ հիւանդը հիմա աւելի հաստատ էր նայում, աւելի ազդու ու քնքուշ: Նա աւելի յաճախ փորձեր էր անում մի բան ասելու:

«Էհ, բժիշկը սխալւել է», իրեն յոյս էր տալիս տղան, բռնում էր հօր ձեռքն ու անդադար կրկնում:

—Հանգիստ եղիր, ապի ջան, հանգիստ եղիր: Ա՛յ, շուտով կառողջանաս, այստեղից կերթանք. կերթանք մայրիկի մօտ: Մայրիկը, Մարթան, Աննան հիմի մեզ են սպասում. մի բիշ էլ համբերի, մի բիշ էլ...

Գ.

Հիւանդը մրափում էր: Ու Յակոբը տխուր ու տրտում, վախով, յոյսով ու չարչարած հոգով նստել էր նրա կողքին, ձեռքերը կրծքին, գլուխը կախ արած: Յանկարծ կից սենեակի դռնից լսեց մի ծանօթ ձայն, որ ասում էր.

—Մնաս-բարով, բուրիկ, շատ շնորհակալ եմ:

Չայնը շատ էր հարազատ: Տղան ետ նայեց. տեսաւ մի մարդ անագին կապոցը կոնատակին, ետեիցն էլ գթութեան բոյրը:

—Յակոբ, — աղաղակեց մարդը ու վրա վագեց:

—Ապի, ապի, — պռուց տղան ուրախութիւնից խեղդելով ու ընկաւ հօր գիրկը:

Գթութեան քոյրը, սպասաւորները, բոլոր այնտեղ գլտնւողները մնացել էին ապշած:

—Որդի ջան, — խօսեց հայրը, — դու էստեղ ի՞նչ ես շինում:

Ես էնքան սպասեցի բեզ. մայրդ գրել էր, որ գալու ես:

—Ես հինգ օր է էստեղ եմ, ապի: Բայց, տես... էստեղ...

Ու մատով ցոյց տաւ հիւանդը:

—Քեզ բերել են ուրիշի մօտ. էտ ի՞նչպէս է պատահել, — գլխի ընկաւ մարդը. բիշ մտածեց զարմացած ու աւելացրեց, — ինչ և է. դէհ, գնանք. ես արդէն հիւանդանոցից դուրս եմ գալիս: Աստուած իմ, ո՞վ կարող էր էս տեսակ բան երևակայել:

Յակոբը առանց հօրից պոկ գալու՝ կրկնում էր միայն.

—Որչափ ուրախ եմ, որչափ ուրախ եմ. այն ինչ սարսափելի օրեր էին:

—Դէ, գնանք, — կրկնեց հայրը: — Իրիկունը տանը կըլինենք. մայրդ հիմի անհանգիստ կըլինի:

Տղան շուռ եկաւ, նայեց հիւանդին, որ այդ րոպէին աչքերը բաց էր արել ու նմանապէս նրան էր նայում:

—Չէ, ապի: Տես այդ ծերունին. ես դրան հինգ օր խնամել եմ. ես քո տեղն էի դրել նրան. տես, ինչպէս ինձ է նայում. մեղք է. լաւ չէ, որ ես նրան մենակ թողնեմ: Ես գիտեմ՝ նա պիտի մեռնի: Ապի, թող ինձ նրա մօտ. թող մենակ չըմեռնի...

Մարդը մին նայեց որդուն, մին նայեց հիւանդին. դժւարանում էր վճռի:

—Ո՞վ է այդ մարդը, — հարցրեց նա:

—Քեզ պէս մի գիւղացի, — պատասխանեց բժշկի օգնականը, որ վրա էր հասել: — Նա էլ օտարական է ու քեզ հետ նոյն օրն է մտել հիւանդանոց: Ուշքը վրան չէր, որ բերին:

—Մնա, Յակոբ, — վճռեց վերջապէս հայրը կարճ վարանումից յետոյ:

Մարդը գրկեց որդուն, կրկին-կրկին համբուրեց ու գնաց:

Դ.

Յակոբը վերադարձաւ անկողնի մօտ և վերսկսեց իր հիւանդապահի պաշտօնը. էլ առաջւայ պէս սիրտը չէր ճըմլւում, էլ առաջւայ պէս ծածուկ լաց չէր լինում գիշերը, բայց դար-

ձեալ առաջւայ պէս սիրով ու համբերութեամբ խնամում էր հիւանդին, ժպտում, խօսում:

Երկու օր էլ անցաւ: Հիւանդը քանի գնում վատանում էր. դէմքը բոլորովին մթնել էր, շնչառութիւնը ծանրացել: Երեկոյան բժիշկը յայտնեց, որ չի լուսացնի: Յակոբը կրկնապատկեց իր հոգատարութիւնը: Հիւանդն էլ չէր հեռացնում իր աչքերը տղայի դէմքից. ինչ գգւանք, ինչ գորով կար այդ աչքերի մէջ... Այդ գիշերը տղան բուն չեղաւ:

Լուսաբացին հիւանդը յանկարծ աչքերը բաց արաւ ու նորից նայեց տղային:

Տղան կռացաւ ու բռնեց հիւանդի ձեռքը:

—Ձեռքս սեղմեց,—գոչեց յանկարծ ուրախացած:

Մօտ վազեց գթութեան քոյրը, նայեց, կամաց բռնեց տղայի թևից ու հեռացրեց անկողնից:

—Ինչո՞ւ,—գարմացաւ տղան:

—Գնա՛, որդիս, բո սուրբ գործը վերջացաւ,—պատասխանեց գթութեան քոյրը:—Գնա՛, բախտաւոր եղիւր. դու արժանի ես բախտաւոր լինելու:

Բժիշկը, օգնականը, ծառաները իսկոյն իրար ետևից եկան ներս ու մօտեցան ծերունու անկողնին: Յակոբը նոր գլխի ընկաւ որ հիւանդը մեռել էր: Ու հեկեկալով կրկնում էր.

—Ապի, միաս-բարով, ապի...

34. Յորնատէրն ու ջաղացպանը

ա.

Մէկը ցորեն տարաւ ջաղաց,

էտ ցորենից ալիւր աղաց.

Ջաղացպանն էլ բաղարջ եփեց,
թոնրից հանեց, մէջտեղ դրեց.

—Արի պատմենք մի-մի լաւ բան.

ու՛մը լինի սուր, դուրեկան,

էս բաղարջը թող նա ուտի.

ու չընայենք դորդի, սուտի:

բ.

Յորնատէրը՝ թէ ես ասեմ,

Ջաղացպանը՝ թէ կըլսեմ:

—Մենք ունէինք մի մեծ աքլար,

որին ընկեր մի տեղ չըկար.

հերու էր թէ մէկէլ տարին՝

հայրս հեծաւ էտ աքլարին,

գընաց Լօռի, ցորեն բերի:

Ճանապարհին չի նկատում՝

մի գալլ ձիու կողն է ուտում.

գընում հէրրս ուռ է բերում

ու աքլարի կողը գործում,

լւանում է ու ջուր ածում,

նորից հեծնում է աքլարին,

ման է գալի կըլոր տարին

ու հազար փութ ցորեն բարձած,

ինքն էլ բեռան վրա նստած,

գալիս կանգնում է մեր դռան:

Մենք շինեցինք մի ելարան,

եւանք, հօրս ներքե բերինք,

բեռով ցորենն էլ ներս դրինք.

էն ցորնիցն է, որ դու ահա

էս բաղարջն ես թխել հիմա:

գ.

Ջաղացպանը՝ թէ ես ասեմ,

յորնատէրը՝ թէ կըլսեմ:

—Մենք ունէինք մի մեղրաճանճ,

համ պող ունէր, համ էլ աւանջ:

Մէկ օր ճանճը փախաւ տանից,
 հօրս պարապ արաւ բանից.
 խեղճը գընաց, շատ ման եկաւ,
 բայց գիժ ճանճը էլ ձեռք չընկաւ.
 Վերջը հայրս դարձաւ գեղը,
 մօրիցս առաւ մեծ ասեղը,
 տարաւ տնկեց գոմի կտրան
 ու ջուխտ ոտով ելաւ վրան.
 մէկ էլ տեսաւ դաշտի միջին
 որ գութան են լծել ճանճին.
 Տուն տընովի դաշտ վազեցինք,
 ճանճին գութնից արձակեցինք
 ու տուն բերինք բըռնած պոչից,
 բըռնած գըժի ջուխտ ականջից:
 Բայց արի տես՝ մեր առիւծը,
 որ չէր տեսած գոմշի լուծը,
 տըրորել էր իրա ուսը.
 հայրս բաշեց իր դմբուզը,
 ջարդեց մի մաղ տան ընկուզը
 ու ընկուզից հանեց եղը,
 քըսեց ուսի ցաւած տեղը:
 Ամռան օր էր, սիրուն, պայծառ,
 իսկոյն ուսից բուսաւ մի ծառ.
 ծառը տեսաւ մի մեծ ագռաւ,
 իսկոյն ճիւղքի վըրա թառաւ:
 Մի հողի կոշտ հայրս առաւ,
 էն ագռաւին վրա արաւ.
 կոշտը ցըրւեց, դարձաւ մի հող՝
 մի օրավար վարելահող:
 Երբ որ եկաւ հասաւ մարտը,
 ցորեն արինք մենք էն արտը.
 մտանք յունիս՝ ընկաւ բաղը,

ես վեր առայ սուր մանգաղը,
 մըտայ արտը՝ որ բաղեցի,
 բայց մի սաստիկ ճիչ լըսեցի:
 Խեղճ աղւէսը, էն անմեղը,
 ցորնի միջին բնած տեղը,
 իմ մանգաղին դարձել էր զոհ:
 Իմ արածից ես էլ դժգոհ՝
 բերի խեղճին ու բերթեցի,
 մորթին մսից բաժանեցի.
 Բայց ի՞նչ կասես՝ մորթու տակից,
 ետի ոտքի աջ կրունկից,
 մի թուղթ ելաւ ձեռքով ծալած
 ու միջին էլ գրչով գըրած.
 «Այ, ցորնատէր, գնա քո բանին,
 բաղարջը տուր ջաղացպանին»:
 Ցորնատէրը գլուխը ցած՝
 ալիւրն արաւ, գընաց բաղցած:

Ո՞րն է էստեղ ամենից թունդ սուտը. որն է ամենից ծիծաղելու
 սուտը. ո՞րն է ամենից գեղեցիկ սուտը:

35. Չնագնդի

ա.

Բաղայն ու ես վաղուց թշնամի էինք: Դեռ անցեալ գար-
 նան էր, որ նա իմ կոճիները չուռ առաւ ու փախաւ: Էն օր-
 ւանից մենք թշնամիներ էինք և միշտ առիթ էինք փնտոռում
 իրար վնասելու, իրարից վրէժ հանելու: Ամառը մի բանի ան-
 գամ ես նրանց արտը արածեցրի, նա մեր բոստանը քանդել
 տաւ. աշնանը մի անգամ տաւար արածացնելիս միմեանց
 հայհոյեցինք, քիչ մնաց կուէինք, բայց միւս տաւարածները
 չըթողին: Այս վերջին դէպքից յետոյ թշնամութիւնը սաստ-
 կացաւ ու երկուսս էլ սպասում էինք, թէ երբ կըլինի՝ որ մի

օր իրար պատահենք: Եւ մի անգամ «իրար պատահեցինք», ու շատ զօռ պատահեցինք...

Սպիտակ ամպը բռնել էր երկինքը, սարերը չէին երևում, կարծես թէ երկինքն ու երկիրը մօտեցել էին և ուզում էին գրկախառնել: Լեռնային ձիւնի թաւ փաթիլները արագ-արագ փրթում էին. բոլք ու բամբի չըկար և ձիւնը հանդարտ դիզւում էր ու դիզւում:

Ես, Կօստին, Ալէքն ու Խէչանը մտադրել էինք այդ օրը աղբիւրի սառածի վրա կոճի խաղանք, բայց որովհետեւ թագա ձիւն էր գալիս, պէտք էր ուրեմն ձնագնդի չաղացնէինք: Այդ դէպքին ես վաղուց էի սպասում, որ կարողանամ իմ հակառակորդի քիթ ու պոռնգը արնացնեմ: Դրա համար էլ առաւօտեան հացից յետոյ ուրախ-ուրախ տրեխներէս մէջը խոտ գրի, արխալուխիս կոճակները պնդացրի, գառան մորթէ գդակը գլուխս պնդացրի, մոթալի մորթուց իմ ձեռքով կարած թաթմաններս անցկացրի ու դուրս թռայ:

—Պա, պա, պա, երեխէք, ինչ ձիւն է... —ասաւ Կօստին:

—Աչք ու ականջ պիտի լցնեմ հա, —ասաւ Ալէքը, ձիւնագնդեր պատրաստելով:

—Ո՛չ, տղերք, երեքով շատ քիչ ենք, խաղը համ չի ունենայ: Դու մեզանից պուճուր ես, — դարձաւ ինձ Կօստին, — գնա գեղամէջը, երեխաներին ասա՝ գան:

Ճամփին ինքս ինձ մտածում էի. «Ախ, ինչ լաւ կըլինի, որ Բաղալն էլ գայ, ինչ լաւ կըջարդեմ նրան. Կօստին հօ չի թողնի, որ նա ինձ ծեծի»:

Բ.

Տասը ըռպէից յետոյ մենք մօտ քսան հոգի հալա-հալա էինք եկել և Կօստինի ու Ալէքի մայրութեամբ, իբրև երկու թշնամի բանակներ, կանգնած էինք իրար դէմ:

—Դէ, երեխէք, վրա տւէք, — հրամայեց մեր հրամանատար Ալէքը:

Ձիւնի գնդակները կարկտի նման թափւում էին երկու կողմից. մի բանի ըռպէ ոչ ոք չէր կարողանում յաղթի. յետոյ սկսեցինք քիչ-քիչ միմեանց մօտենալ. Հետզհետէ մեր գնդակները կորցրին իրանց ձևը, մենք ուղղակի ձիւնի ահագին կտորներ էինք թափում իրար վրա: Նրանց կողմից Բաղալը մի գնդակով աչքիս խփեց. ես էլ չըհամբերեցի, հասայ բռնեցի նրան և ձիւնի մէջ գլորեցի:

—Մեռելթաղուկն սկսեց, — գոչեց Կօստին, և ամեն մէկս մէկին բռնած գլորում էինք ձիւնի մէջ: Երես, քիթ, պոռնգ,



գլուխ, ամեն ինչ սպիտակ էր, միայն ձիւնն էր, որ երևում էր:

Ես ու Բաղալը ոչ թէ խաղում, այլ կուռում էինք. ձիւնի մէջ թաղւած քլուում էինք իրար, այլ և կրծոտում միմեանց. բոլորը թափւել էին մեզ վրա միմեանցից ազատելու. չէինք պոկւում, կպել էինք և ձիւն էինք ճխտում միմեանց քիթ ու բերան: Վերջապէս հեռացրին իրարից: Բաղալի քիթը արիւն էր գնում և ներկում սպիտակ ձիւնը: Ոչ ոք ուշադրութիւն չըդարձրեց այդ բանի վրա: Ոչինչ չէի գգում. ոչ միայն

ձեռներս ու ոտներս, այլ և ամբողջ մարմինս թմրել էր: Ընկերներին բոլորի շրթունքներն էլ կապտել էին, այտերը կարմրել:

—Հերիք է, երեխէք,—ձայնեցին մայրերը և մենք ստիպւած էինք ետ դառնալ:

Իրարից հեռացանք, տեսայ թաթմաններս չըկան, և ձախ աչքիս մէջ ինչ որ բուրթ ցաւ էի զգում:

—Երեխէք, հում աչքն է ցաւում,—ասաւ Ալէքը.—թող գնայ, աղբիւրումը լւանայ:

Ես ու մի ուրիշը վազեցինք, սառը ջրով լւացեցինք. և իրաւ, ցաւն անցաւ. բայց այժմ էլ ձեռներս ու ոտներս սկսեցին մըժմըժալ, մոմոալ,

—Կօստի, Բաղալն ու Սիմակը կուած են, արի նրանց հաշտեցնենք,—ասաւ Ալէքը:

—Դէ, հաշտեցէք, երեխէք, թէ չէ ականջներդ կը բոքեմ,—հպարտ ու հրամայող ձայնով ասաւ Կօստին:

—Հիմի էս է փէտացել ենք, հիմի գնանք տուն. ճաշից ետը կը հաշտեցնենք,—վճռեց Ալէքը.—Երեխէք, ճաշից ետը էլի ետ կը գաք. նշանի խփենք, իմացա՞ք, կը գաք հա...

Այս հրամանից յետոյ ցրեցինք: Ձեռներս ծոցս դրած, վազեցի մեր գոմը Նարգիզ կովի շնչով տաքանալու: Վազում էի ու յամառութեամբ մտածում:

«Տեսներ, հնց էք հաշտեցնում»:

դ.

Ճաշից յետոյ մէկ ասի՝ չը գնամ, բայց վերջը չը համբերեցի ու գնացի: Բոլորը կալերումն էին:

Նշանի պիտի խփէինք: Մայրերը հերթ նշանակեցին՝ թէ ով ումնից յետոյ պէտք է խփի նշանին: Ապա սկսեցինք նշանը շինել:

Նշանը ձիւնից շինած մի մարդ էր, մի ձիւնէ ահագին արձան. հինգ ընկերներ շինեցինք:

—Դէ, երեսին ցեխ բսենք ու նշան դնենք:

Բայց ցեխ գտնելը այնքան էլ հեշտ չէր, որովհետեւ ձիւնը խոր էր և գետինն էլ սառած:

—Աղբիւրումը կըլինի, աղբիւրումը,—ասաւ մէկը և բոլորս էլ վազեցինք դէպի աղբիւրը:

Մեր խաղերին նայելու էին եկել հասակաւորները և նոյնիսկ մասնակցում էին և նշանի խփելիս քաջալերում աջող խփողին:

Իրիկնադէմին հասակաւորները որ տուն գնացին ու մնացինք մենակ երեխաներս, մէկ էլ լսեց Ալէքի ձայնը.

—Դէ, տղերք, եկեք Բաղալին ու Սիմակին հաշտեցնենք:

—Հաշտեցնենք, հաշտեցնենք,—կանչեցին ամեն կողմից:

Ես ոտն առայ, սկսեցի փախչել դէպի մեր տունը: Բաղալն էլ ուզեց ծլկւի իրենց տունը: Մեր ետևից հասան, բռնեցին:

—Չեմ, ուզում. չեմ ուզում, չեմ հաշտւի:

—Բա մայրերն ի՞նչացու են, թէ որ նրանց հրամանին լսելու չես:

Ձօռով քաշեցին ու կանգնեցրին ինձ ձիւնի արձանի առջև. միւս կողմից էլ ձիւնի մէջ թրեւելով՝ բերում էին Բաղալին:

—Խռովելը լաւ բան չի. խռովկաններին՝ տեսնում էք՝ տանը հաց չեն տալիս,—խրատում և յորդորում էին Ալէքն ու Կօստին, որոնք ամենից հասակաւորներն էին մեր խաղընկերների մէջ.—Համբուրեցէք:

Ամենքը մեր շուրջը հաւաքուեցին:

—Չեմ ուզում: Սիմակը ի՞նչու մեր արտը արածացրեց,—ասում էր Բաղալը:

—Աբա, դժ չէիր, որ իմ կոճին չուռ արիր:

—Կոճու ժամանակը չէ, կոճու ժամանակը չէ,—աղաղակեցին ամեն կողմից.—կոճի չենք ուզում. հիմա ճնագնդի ենք խաղում: Հաշտեցէք, հաշտեցէք, թէ չէ՝ էս է ճնագնդին գալիս է, էս պապը վկայ,—հանաք էին անում մեր ընկերները և ինձ ու Բաղալին իրար կողմը հրում, իրար սեղմում: Այնպիսի

աղմուկ աղաղակ բարձրացաւ, որ շշկուեցի. էլ չիմացայ, թէ
ինչպէս Բաղալի ձեռքն առած համբուրւեցինք:

—Հուռն, հաշտեցին, տղերք, հաշտեցին,—ծափ տւին
բոլորը ու առաջւանից աւելի եռանդով ձիւնին կպան:

Դ.

Արդէն մթնում էր. ցրտից սառել կապտել էինք, երբ ձիւնէ
արձանը քար ու քանդ անելով՝ վազեցինք ամեն մէկս մեր
տաւարը ջուր տալու:

—Իմ գլխին էս թնշ բերին Կօստին ու Ալէքը, է,—ասում
էի կատաղած ինքս ինձ՝ Նարգիզ կովին ջուր տալիս:—Էգուց
ես նրանց հախիցը էնպէս գամ ճր...

Այնուամենայնիւ, երբ առաւօտեան դուրս վազեցի ու տե-
սայ, որ ձիւնը երէկւանից շատ է եկել, գետինը փափուկ
փափուկ ծածկել՝

—Հայ, հայ,—ձայն տւի ուրախ-ուրախ:

—Հէյ, հէյ,—լսեց այն կողմից Բաղալի ձայնը:—Բարի
լոյս, Սիմակ: Էսօր ձնագնդի պիտի խաղանք:

—Բնս,—կանչեցի ես:—Եւ դեռ ճնց...

Այդ օրը այնպէս չաղացրինք ձնագնդին, որ իրիկունը
միայն տուն վերադառնալիս յիշեցի թէ ուզում էի Ալէքից և
Կօստինից վրէժ առնելի: Համա թէ պրծան իմ ձեռքից, հն...

36. Պոչատ աղւեսը

Փախաւ աղւեսը,
փախաւ թակարդից,
բայց պոչի կէսը
թողեց նա ներսը:
Էտպէս պոչատ,
պոչից անջատ,
գնաց ասաւ ընկերներին.

—Այ ձեզ մատաղ, ես ձեր գերին,
դէն գցեցէք ձեր պոչերը,
ինչո՞ւ ես պէտք էտ փչերը.

դրանք զարդ չեն ու զարդարանք,
այլ մեր գլխին պատիժ, փորձանք,

գետնի տւել,

վազքի խափան,

մեզ անվայել,

աւելորդ բան:—

Էտտեղ մի ծեր վարպետ աղւէս

ասաւ նրան՝ «Ապրե՛ս, ապրե՛ս,

այ ծակամուտ թոռիս թոռ.

էտքան չեն տայ խելքին զօր.

բա քանի որ տեղն էր պոչըդ,

ինչո՞ւ չարիր դու էտ կոչըդ»:

Աղւեսը ինչո՞ւ է ուզում միանների պոչերն էլ կտրել տալ:

37. Քրագրի տղան

ա.

Յովսէփը ծխական զպրօցի վերջին դասարանի աշակերտ
էր: Հայրը երկաթուղու վարչութեան մէջ գրագրի պաշտօն
ունէր: Ընտանիքը մեծ էր, ռոճիկը աննշան, խեղճ էին ապրում:

Հայրը որդուն շատ էր սիրում, գգւում, միայն թէ շատ
խստապահանջ էր ուսման կողմից: Անհրաժեշտ էր որ Յովսէ-
փիկը շուտ պաշտօն գտնէր, իսկ պաշտօն գտնելու համար
պէտք է որ լաւ սովորէր: Թէև տղան ծոյլ չէր, բայց հայրը
դարձեալ շարունակ դրդում էր նրան:

Ինքը հայրը արդէն հասակն առած և անժամանակ ալևո-
րած մի մարդ էր: Ընտանիքի ապրուստը հոգալու համար՝
նա պաշտօնից դուրս էլ գրագրութիւն և ուրիշ գործեր էր

յանձն առնում և գրեթէ ամեն գիշեր գրում էր: Վերջերս մի գրավաճառ, որ գրքեր ու շաբաթաթերթ էր հրատարակում, նրան յանձնել էր բաժանորդների հասցէներ գրելը: Թղթէ գօտիների վրա հայրը պիտի գրէր ստացողի անունը, ազգանունը, քաղաքը, փողոցն ու տան համարը: Խոշոր ու պարզ գրւած հինգ հարիւր հասցէի համար վճարում էին երկու ռուբլի: Հայրը յաճախ գանգատւում էր ճաշի ժամանակ.

—Աչքերս տկարանում են. մաշւեցի այս գործի վրա:

—Թող, հայրիկ, ես քո տեղը արտագրեմ,—ասաւ մի օր տղան.—մեր ձեռքը իրար նման է:

—Ո՛չ,—պատասխանեց հայրը կտրուկ.—դու սովորում ես. քո ուսումը հասցէներից աւելի կարևոր է. դու քո գործը տես:

Յովսէփիկը ճանաչում էր հօր բնաւորութիւնը, էլ այդ մասին ոչինչ չասաւ, բայց ահա թէ ինչ արաւ:

Հայրը սովորաբար ուղիղ կէս գիշերին թողնում էր գրելը, ետ էր հրում աթոռը ու հանդարտ քայլերով գրասենեակից անց էր կենում ննջարան: Մի գիշեր որդին զարթուն սպասեց անկողնում մինչև հօր պառկելը. յետոյ կամացուկ վեր կացաւ, հագաւ շորերը, խարխափելով մտաւ գրասենեակը ու լամպը վառեց: Գրասեղանի վրա դրւած էր գօտիների մի դէզ և հասցէների ցուցակը: Յովսէփիկը սկսեց արտագրել, աշխատելով հօր ձեռագրին նմանեցնել: Աշխատում էր հաճութեամբ, ուրախութեամբ, բայց և վախով. երբեմն երբեմն կանգ էր առնում, ակնջ էր դնում ու նորից սկսում էր գրել աւելի մեծ եռանդով: Այսպէս նա արտագրեց հարիւր եօթանասունը հինգ հասցէ, վաստակել էր ուղիղ տասը շահի: Էլ թողեց գրելը, ամեն բան սեղանի վրա կարգի բերաւ, լամպը մարեց ու ոտի մատներէ վրա գնաց մտաւ անկողին:

Հայրը ուրիշ հոգսերով զբաղւած՝ առհասարակ մեքենաբար էր արտագրում և իր աշխատանքը միայն ժամերով էր

չափում, ուստի և չընկատեց որդու արած խաղը: Միւս օրը ճաշին հայրը լաւ էր տրամադրւած:

—Երէկ գիշեր մի երկու ժամում ամբողջ գործիս կէսը աւարտեցի: Դեռ երբեք այդպէս չի եղած. ուրեմն դեռ ձեռքս աջող է ու աչքս սուր:

Յովսէփիկը հրճւում էր սրտի խորքում ու վճռեց այդպէս էլ շարունակել:

բ.

Եւ ամեն գիշեր, ժամը տասներկուսը խփեց թէ չէ, հէնց որ հայրը գնում էր պառկելու, ինքը անցնում էր նրա տեղը ու սկսում արտագրութիւնը: Բայց այդպէս իր բունը կարճելով՝ առաւօտները ուշ էր զարթնում, յոգնած էր վեր կենում ու դասերն էլ կարծես ակամայ էր սովորում. քունը տանում էր գրքի վրա: Հայրը նկատեց, նախ քիչ խոժոռեց ու վերջապէս յանդիմանեց.

—Դու փոխել ես, Յովսէփիկ. ծուլանում ես, լաւ չէ: Ամբողջ մեր ընտանիքը ապրում է քո յոյսով... Ես քեզից դժգոհ եմ, հասկանում ես:

Այս առաջին խիստ կշտամբանքը շփոթեց տղային:

«Ձէ, մտածեց նա, այսպէս շարունակել չի կարելի. այսպէս խաբելը լաւ չէ»...

Բայց նոյն օրը ճաշի վրա հայրը յայտնեց ուրախ-ուրախ, որ այդ ամիսը տասներորս ռուբլի աւելի է աշխատել, քան նախորդ ամիսը: Ամբողջ տասներորս ռուբլի:

—«Ձէ, սիրելի հայրիկս,—մտածեց տղան.—ես քեզ նորից պիտի խաբեմ: Յերեկները կըջանամ դասերս աւելի լաւ սովորեմ, իսկ գիշերներն էլ մեր տան համար փող կաշխատեմ»:

Ու սկսեց բոլոր ուժով աշխատել: Բայց քանի գնում յոգնութիւնը աւելի էր սաստկանում ու գաղտնիքը պահելն էլ օրէցօր աւելի դժւարանում: Այսպէս անցաւ երկու ամիս:

Հայրը շարունակ տրտնջում էր որդու ցրածութիւնից ու ծուլութիւնից, կշտամբում էր և վերջապէս գնաց դպրոց վարժապետից տեղեկութիւն հարցնելու:

—Նա ուրիշներից ետ չի մնում,—պատասխանեց վարժապետը.—ետ չի մնում, որովհետև ընդունակ է, բայց առաջ-ւայ պէս ուսման սէր ցոյց չի տալիս: Պատահում է որ դասի ժամանակ բնում է, յօրանջում է, անուշադիր է: Շարադրութիւնները շատ կարճ է գրում, վայրիվերոյ. կարող էր շատ աւելի լաւ պարապել...

Նոյն իրիկունը հայրը մի կողմ տարաւ Յովսէփիկին և խստութեամբ ասաւ.

—Տեսնում ես որ ես չարչարւում, մաշւում եմ մեր ընտանիքի համար: Դու ինձ օգնելու մասին բնաւ չես մտածում. դու անսիրտ ես: Քո փոյթը չէ ոչ հայրդ, ոչ մայրդ, ոչ փոքրիկ եղբայրներդ...

«Ո՛չ, ոչ, հայրիկ, այդ մի ասի»,—ուզում էր աղաղակել Յովսէփիկը, բայց ինքն էլ չէր իմանում ինչպէս մնաց լուռ, գլուխը բաշ արած, ծնօտները սեղմած ու հեկեկանքը կոկորդումը խեղդելով:

Հէնց որ հայրը հեռացաւ, արցունքները թափւեցին աչքերից:

—Բան չըկայ, թող նա այդպէս մտածի,—ասաւ տղան ինքն իրեն,—բաւական է, որ ես թեթեւացնում եմ նրա ծանր ու մաշող աշխատանքը...

Եւ օրերը անցնում էին՝ գիշերները աշխատելով, ցերեկները յոգնած ու վշտացած: Ամենից ծանրը այն էր, որ հայրը քանի գնում, այնքան սառչում էր որդուց ու շատ քիչ էր հետը խօսում:

Յովսէփիկը անքնութիւնից ու վշտից հետզհետէ աւելի էր նիհարում ու նւագում և դպրոցում էլ աւելի վատ էր պարապում:

Մի երեկոյ մայրը նկատեց, որ երեխան հիւանդ է:

—Ի՞նչ ունես, Յովսէփիկ, ի՞նչ է պատահել,—հարցրեց նա կարեկցութեամբ ու դառնալով ամուսնուն աւելացրեց.—Յովսէփիկը հիւանդ է, տես՝ ինչպէս գունատւել է:

—Շատ աշխատելուցը կըլինի,—ծաղրեց հայրը առանց գլուխը շուռ տալու:

—Բայց տղան հիւանդ է,—առարկեց մայրը:

—Է՛, հիւանդ է՝ կառողջանայ, շատ հարկաւորս է,—վրա բերաւ հայրը անտարբեր:

Այս բառերը փշի պէս ծակեցին Յովսէփիկի սիրտը: Պարզ զգաց, որ կորցրել էր հօր սէրը:

Ո՛չ, սա արդէն իր ուժերից վեր էր. սխալ էր իր բռնած ճամփան. և վճռեց դադարեցնել գիշերւայ արտագրութիւնները, որ կարողանայ նորից իր դասերովը զբաղւի. թող հայրը նորից իրան սիրի, ինքը յետոյ ուրիշ կերպով կաշխատի նրան օգնել:

Գ.

Բայց ընդհատելուց առաջ կամենում էր մի վերջին անգամ, գիշերային լռութեան մէջ, տեսնել այն սենեակը, ուր այնքան թաքուն աշխատել էր որդիական ջերմ սիրով:

Վառեց լամպը: Ահա գօտիները, էլ չի գրելու այդ տեղերի անունները, այդ մարդկանց հասցէները... Նա անգիր գիտէր արդէն բոլորը: Մի տխրութիւն իջաւ նրա սրտին: Վերցրեց գրիչը և ուզում էր սկսի իր սովորական գործը մի վերջին անգամ, երբ յանկարծ դիպաւ մի գրքի. գիրքն ընկաւ ու աղմուկ հանեց: Յովսէփի արիւնը խփեց գլուխը. հապա եթէ հայրը գարթնէր: Շունչը բռնած ականջ էր դնում: Լռութիւն: Ականջը մօտեցրեց դռան. ամենքն էլ քնած էին: Տղան միամըտեց, եկաւ, նստեց ու սկսեց գրել:

Գրւած գօտիների թիւը աւելանում էր: Նա լսում էր, թէ ինչպէս գիշերապահ ոստիկանը կանոնաւոր քայլերով անց էր կենում դատարկ փողոցով և թէ ինչպէս ճոնչալով հանգարտ գնում էին սայլերը: Յետոյ դարձեալ խոր լռութիւն. միայն

հեռուից լսում էր շների հաչիւնը: Իսկ հայրը արդէն կանգնած էր նրա ետեւը...

Նա զարթել էր գրքի ընկնելու աղմուկից, քիչ էլ սպասել էր ու ներս մտել: Սայլերի ճոխնչը ծածկել էր նրա քայլերի ձայնը ու դռան թեթեւ ճռուցը: Ալեոր գլուխը Յովսէփի սեռու գանգուր գլխի վրա կախ արած՝ դիտում էր նրա գրչի սահելը թղթի վրայով: Իսկոյն ամեն բան հասկացաւ, ամեն բան յիշեց: Նա գամւել մնացել էր իր տեղում. հայրը դողդոջ ձեռքերով փարւեց նրա վզովը:

—Ներիր ինձ, հայրիկ,—աղաչեց մանուկը:

—Դու ինձ ների,—պատասխանեց հայրը հեկեկալով ու նրա երեսը հազար անգամ համբուրելով:—Այժմ իմացայ, այժմ գիտեմ. ես, ես եմ քեզնից ներողութիւն խնդրողը, ով իմ սուրբ երեխաս:

Որդին ինչո՞ւ համար էր ներողութիւն խնդրում. հապա հայրը ինչու համար:

38. Զմեռ

Աշնան վերջին քամին եկաւ սրբեց դաշտերը, ձոր ու լեռ ու ամենքին համբաւ բերաւ թէ գալիս է ցուրտ ձմեռ:
Ու մռայլեց երկինք, գետինք, մէզը պատեց դաշտ ու սար, ցուրտը եկաւ տիրեց երկրին, ճերմակ հագաւ մեր աշխարհ:
Մարդ, անասուն ծերուկ հիւրից վախվիւթելով մտան տուն.
գետն էլ լռեց ցրտի ահից.
անի, հեռու է դեռ գարուն...

39. Աշկերտ Օհանը

ա.

Ծնունդի թաթախման իրիկունն էր: Գասպարենց Օհանը, ինը տարեկան մի տղայ, որին երեք ամիս է ինչ աշկերտ էին տւել դերձակ Զաքարի մօտ, մենակ էր մնացել տանը: Դերձակն ու իր կինը, ինչպէս և բոլոր տանեցիք, ժամ էին գնացել, նրան էին յանձնել տունը պահել: Օհանը հէնց որ համոզւեց թէ էլ ոչ ոք չըկայ տանը և երեխան էլ հանգիստ քնած է օրօրոցում, գգուշութեամբ բարձրացաւ նստարանի վրա, ցած բերաւ վարպետի թանաքամանը պահարանից, գտաւ մի տեղից ժանգոտած գրիչը ու մի կտոր ճմուռած թուղթ ծոցից հանելով՝ ուղղեց ու փռեց իր առջև: Բայց առաջին տառը դուրս բերելուց առաջ, մի քանի անգամ վախվիւթելով նայեց դռան ու պատուհանների կողմը ու ծանր հոգոց հանեց: Թուղթը դրել էր նստարանի վրա, իսկ ինքը չոքել յատակին:

Սկսեց գրել.

«Իմ կարօտալի Գասպար պապի, էս գիրը ես եմ քեզ գրում, բո թող Օհանը: Ծնորհաւոր Ծնունդ և Մկրտութիւն, Աստուած քեզ շատ տարիներ պահի ինձ համար: Ոչ հէր ունեմ, ոչ էլ մէր, դու ես մենակ ինձ մնացել»:

Օհանը աչքը դարձրեց պատուհանին, որի ապակու մէջ արտացոլում էր կեղտոտ լամպի լոյսը, և նրան այնպէս թւաց թէ տեսնում է այնտեղ Գասպար պապին: Նիհար, կարճիկ ծերունին ահա կանգնած է եկեղեցում, դռան մօտ, զգգլւած փափախը դրած գետնին, ոտների մօտ. սուրբերի պատկերի առջև վառուղ իստակ մոմերը լուսաւորում են նրա նիհար, դեղնած բարի դէմքը. բարակ շրթունքները անխօս աղօթք են մըմնջում: Զորացած ձեռները վերև պարզած, պղտոր աչքերը մի կէտի յառած՝ նա կարծես քարացել է:

—Երևի, հիմա ինձ համար է աղօթք անում,—մտածեց տղան ու շարունակեց գրելը:

«Երէկ ինձ լաւ դնքսեցին: Խաղէյինը քաշէքաշ թրև տալաւ ինձ դուրս և դնքսեց, որ երեխին օրօրելիս բունս տարել էր: Անցած կիրակի էլ կնիկը տալ էր մի չորացած ձուկ, որ իստակեմ. պոչիցն էի սկսել իստակելը. ձեռքիցս ձուկը խլեց ու մէկ թէ երկու, էնպէս տալաւ ըթիս, որ դունչ ու պոռնգս արնոտեց: Աշկերտներն էլ վրաս ծիծաղում են, պապիրոսի են ղրկում, խանութից արաղ են բերել տալիս, մազերիցս քաշքշում են, իսկ խաղէինս ամեն օր հազար անգամ ծեծում է: Առաւօտը մի կտոր չոր հաց, կէսօրին մի աման ապուր, իրիկնապահին էլ մի կտոր չոր հաց, իսկ իրենք առաւօտ իրիկուն ուտում տրաքում են: Քնացնում են սառը հաշտում. երեխէն որ լաց է լինում, հօ իսկի չեմ քնում, երեխին եմ օրօրում: Պապի ջան, Աստծու սիրուն, ան ինձ էստեղից, տար գեղը, էլ չեմ դիմանայ: Ձեռքդ եմ պաշում, աղաչում, տար ինձ էստեղից»:

Օհանի բերանը ծուկեց. մրոտած բոռնցքով աչքի արտասուքը սրբեց, հեծկտաց, յետոյ նորից շարունակեց.

«Ես գեղի ոչխարը կարածացնեմ, քո տեղակ Նաղացում ծառայութիւն կանեմ, Աստծուն բեզ համար աղօթք կանեմ. թէ որ մի վատութիւն տեսնես՝ ծեծի, մեր բակի շան պէս ծեծի:

«Թիֆլիսը մեծ քաղաք է: Էստեղ ոչ ոչխար կայ, ոչ էծ, ոչ կով, ոչ գոմէշ:

«Ո՛ւֆ, հիմի ով գիտի ինչ ձիւն է մեր կտուրներին, կալերում, դաշտերում... Էգուց տէրտէրը կըգայ՝ տնօրհնէք. երանի կըհարցնի՞ Օհանի մասին, երանի կըյիշի՞, ինչպէս էր ինձ դաս տալիս և գրել կարգալ սովորեցնում»:

Օհանը ծնօտը դրաւ ավին ու քիչ մտածեց. մտաբերեց իր հանգուցեալ մօրը, և յետոյ յանկարծ գրիչը վերցրեց ու շարունակեց.

«Արի, պապի ջան, թէ Աստուած կըսիրես, ինձ էստեղ մի թող, մեղք եմ: Սիրտս փակւել է, աշխարհը աչքիս չի երևում,

ողջ օրը մէկ գլուխ լաց եմ լինում: Պապի ջան կորած եմ... Կարօտով բարենքս յիշի Հոռոմսի մօքիւրին, շղիկ Պէտօին, պաշ արա մեր Ասլան շան դունչը, իսկ իմ մեծ շին ոչ ոքի չըտաս: Մնամ՝ Գասպարենց Օհան: Պապի ջան, շուտով արի»:

Օհանը չորս տակ ծալեց խաղմզած թուղթը ու դրաւ ծրարի մէջ, որ նախորդ օրը մի կոպէկով առել էր... Մի քիչ մտածելուց յետոյ գրիչը թաթախեց՝ և խոշոր տառերով գրեց հասցէն.

«Մեր գեղը, Գասպար պապիս:

Յետոյ գլուխը քորեց, մի քիչ մտածեց ու ժպտաց. նա շատ գոհ էր, որ ոչ ոք իրան չըխանգարեց գրելիս, գլխարկը ծածկեց ու շապկանց դուրս վազեց փողոց:

Նրան ասել էին թէ նամակները պէտք է փոստարկղը գցել. այնտեղից յատուկ մարդիկ հանում են, աշխարհի ամեն

կողմը տանում կառքերով ու երկաթուղիներով: Օհանը վազէվազ մօտեցաւ առաջին փոստարկղին ու ձգեց թանկագին նամակը նրա ճեղքի մէջ...

Քաղցր յոյսերով օրօրած, մի երկու ժամ յետոյ ամուր քնած էր...

Երազում տեսնում էր բուրսին, Պապը նստած է բուրսու տակին ու լսում, իսկ գիւղի տիրացուն կարդում է նամակը: Ասլանն էլ շուրջը պտտւում է ու պոչը շարժում...




- 1) Օհանի երազը պիտի իրականանայ:
- 2) Ի՞նչ տեսակ մարդիկ էին դերձակ Ձաքարենք:
- 3) Ո՞րն էր Օհանի գլխաւոր դժբախտութիւնը:

40. Ագոսան ու աղեսար

Բախտի բերամար
 թէ պատահմամբ,
 մի մեծ ագոսաւ
 մի գունդ պանիր
 դաշտում գրտաւ,
 կրտուցն առաւ,
 ծառին թառաւ,
 Օ, ի՞նչ պանիր, դեղին ոսկի...
 Բայց դեռ չառած համը իսկի,
 աղւէսն անցաւ
 ծառի մօտով,
 գերեց,
 էրեց
 պանրի հոտով:
 Վազեց գնաց բերնի ջուրը
 և թուլացաւ կուռն ու ճուռը:
 Էն ժամանակ, իրա ձեռն,
 ծառի տակից, աչքն ագոսաւին,
 հեզիկ-նազիկ,
 փափկամազիկ,
 բացեց լեզուն
 անուշ-մեղուշ,
 թափեց-չափեց
 շաքար ու նուշ.
 —«Ի՞նչքան լաւն ես,
 ես բո գերին,
 քո էտ սեղիկ

վառ աչքերին,
 նուրբ ծալքերով
 զոյգ թևերին:
 Մի դու մըտիկ,
 էտպէս քըթիկ,
 էտպէս ճըտիկ,
 մախմուր ազին,
 խաս ու դումաշ
 ատլասն հագին:
 Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
 ձայնն էլ կըլի հըրեշտակի:
 Երգի, քուրիկ, մի ամաչի,
 իմ ուզածը մի մեծ բան չի:
 Թէ որ չըքնաղ էտ տեսքի հետ
 երգելում էլ եղար վարպետ,
 օ, կը դառնաս, իմ սըբուհի,
 թըռչունների մայր թագուհի»:
 Ագոսաւ ազին
 իրա մասին
 գովեստներից
 շըշմած, ուռած,
 ագոսաւային
 բըկովը մին
 որ չը կըռռաց,
 պանիրն ընկաւ կտցիցը
 ցած,
 շողորթը ռըխեց, գնաց:



41. Անտառում

ա.

Եղնիկները մըսում էին: Երկուսն էին, սեղմւում էին իրար
 մի ահագին եղնու տակին: Յուրտ ու մութ գիշեր էր, ու
 ձիւնը գալիս էր անդադար, գալիս ու իր սաւանը փռում
 անտառի ծառերին, գետնին ու եղնիկների վրա: Եղնիկները
 սեղմել էին իրար, պառկել էին ու դունչ դունչի տւել:

Ի՞նչ սև գիշեր էր. ի՞նչ անախորժ ձայներ էր հանում սան-
 ձարձակ բամին. ծառերի մերկ գագաթները շփւում էին իրար
 և օձի նման սըւսըւում ու երկուսի կուրծքն էլ անորոշ եր-
 կիւղ էր մտել:

Հսկեց բուռի ձայնը. խուլ անտառը մի այլանդակ արձա-
 գանք տւաւ: Եղնիկները սրեցին ականջները: Բուռի ձայնը
 կրկնեց և ձիգ տարածեց սառած օդի մէջ:

Ի՞նչ վատ գիշեր էր... Քամին փչում էր, բռնելով ձիւն
 էր լցնում եղնիկների ականջը ու ոռնում:

Եւ հեռից բամուլ հետ յանկարծ լսեց մի ուրիշ ոռնոց. —
 «Ուռւ, ուռւ, ուռւ»...

Եղնիկների շունչը կտրեց ու վախից քարացան:

—Ուռւ, ուռւ,— լսեց հակառակ կողմի սարերից, իբրև
 պատասխան առաջին ոռնոցին:

Ձիւնի ծանրութեան տակ ահա կոտորեց մի չոր ճիւղ ու ճըռճըռալով ընկաւ գետին: Եղնիկները ցնցեցին սարսափահար ու ոտքի թռան:

—Ու՛հ, ու՛հ,—կրկնում էր զարհուրերի ոռնոցը միշտ աւելի ու աւելի մօտիկ:

Մի անսանձ երկիւղ տիրեց եղնիկներին, խելագար նայեցին դէս ու դէն և յանկարծ երկուսը միասին միանգամից առաջ նետուեցին ու սկսեցին փախչել: Փախչում էին նետի պէս, ծառերի բների արանքով, ընկած կոճղերի ու դիզւած ձիւների վրայով, փախչում էին դէպի ցած, դէպի ձորը...

բ.

Իսկ վերը, ծառերի մէջ փայլեցին շարժուն կայծեր, առաջ մէկը, երկուսը, բայց շուտով շատացան ու մօտեցան:

Եւ այնտեղ, ահագին եղենու տակ, ուր քիչ առաջ պառկել էին եղնիկները, կանգ առաւ քաղցած գայլերի խումբը:

Նրանք անհանգիստ փնտրել սկսեցին. առել էին եղնիկների հոտը: Մէկը վազեց աջ ու ձախ ծառերի մէջ. իսկ միւսները վրա ընկան ձիւնին, ետևի ու առջևի ոտներով սկսեցին փորել ձիւնը ու ետ ածել: Ոչինչ չըկար: Կանգ առան բոլորը միասին, ձայն ձայնի տւին. Ու՛հ, ու՛հ...

Նրանցից մէկը լռեց աւելի շուտ, վեր բարձրացրեց իր սուր բիթը, սկսեց սառն օդը ներս ծծել, կարծես իր բիթն հարցնելիս լինէր, թէ ուր են գնացել եղնիկները: Բայց օդից ոչինչ չըհասկանալով՝ նորից կոխեց բիթը ձիւնի մէջ, քիչ էլ փորփորեց ու գտաւ եղնիկների բռնած ճամփան:

Ընկերները հետևեցին, ու անդադար հոտոտելով գնացին եղնիկների հետքով, մինչև նորից կանգ առան:


Կատաղի քամին աւելել էր ձիւնը, տարել դիզել էր ով գիտի՝ ուր. սրբել էր և եղնիկների հետքն ու հոտը: Փչում էր ու փչում և ոռնում էր մերկ ծառերի տակ...

Ոռնում էին և գայլերը՝ իրար կողքի՝ պրպրգած, դնչները քամուն, քաղցած ու խաբւած:

Եւ հեռւից, բարձր սարերի վրայից գալիս էր նրանց պատասխանը.

«Ու՛հ, ու՛հ», երկար ու չարագուշակ:

Սարսափելի գիշեր էր...



42. Քուն

Մէզ ու մշուշ, ձիւն ու ձմեռ...

Մունջ երկիրը բուն մտաւ,

ու ամեն ինչ խորին գիշեր

իր սև թևի տակն առաւ:

Ծառ ու անտառ սառուց հագած՝

քնած են լուռ ու շւար,

սառ վերմակը գլխին քաշած՝

մեռել են դաշտ, ձոր ու սար...

Ու մի շշուկ, ոչ մի ծպտուն,

ամենքը խոր մտել են քուն:

Ի՞նչ տարբերութիւն կայ այս գիշերայ ու նախորդ յողածի գիշերայ մէջ, ինչի՞ցն է առաջանում այդ տարբերութիւնը:

43. Պայտառ Աւօն

ա.

Թրախկ-թրոխկ, զրախկ-զրոխկ... Դեռ հեռուից լսում էին պայտառ Աւօնի ծանր մուրճի հարւածները, որ իջնում էին սալի վրա:

Ուրախ էր պայտառ Աւօն. ոչ մի հոգս չուներ: Վաղուց վճարել վերջացրել էր հօր թողած պարտքը և ընդարձակել պապական դարբնոցը: Նրա համբաւը հեռու տարածւել էր շրջակայ գիւղերում և ամեն օր տասնեակ գիւղացիք խոնւում էին նրա մօտ, անասուններին պայտել տալիս կամ որևէ կոտրած ծռած բան դարբնել տալիս:

Հանաքների տոպրակ էր պայտառ Աւօն: Ամեն անգամ մի ձի պայտելիս այնքան կատակներ էր անում, որ ձիատէրը ծիծաղու ձեռքից բաց էր թողնում կենդանու ոտը:

Մենակ ժամանակն էլ նա անվերջ խօսում էր իր կռանի, սալի, հնոցի, փուքսի կամ կայծերի ու շիկացած երկաթի հետ և զիլ ձայնով բարձր երգում էր նրանց գովքը:

Լուսաբացից մինչև մթնելը նա մի րոպէ չէր հեռանում իր դարբնոցից. կիրակի օրերն էլ, երբ չէր աշխատում, կանգնած էր լինում իր դարբնոցի դռանը ու գիւղացիներին զարձացնում իր սրախօսութիւններով:

բ.

Այպէս անցան շատ տարիներ, ուրախ ու երջանիկ:

Բայց մի օր հնոցից դուրս պրծած կայծերով անզգուշութեամբ կոպերը այրեց: Կոպերը բորբոքւեցին և աչքերը կուրացան:

Աւօն ստիպւած էր դարբնոցը կապալով տալ ուրիշին:

Լուեց նրա անհոգ երգը, դադարեցին կատակները... և Աւօն մի անգամից ծերացաւ:

Ամեն օր ձեռքի փայտով ճամփան շօշափելով՝ առաւօտ-լանից գալիս նստում էր դարբնոցում և ականջ դնում իր

փոխանորդի մուրճի կուռ հարւածներին: Սուր ականջով նա ջոկում էր՝ թէ ինչ է անում դարբինը, և մէկ-մէկ կանչում.

—Գլխին տուր, գլխին...

Կամ՝

—Կրակը գցի, թող փափկի...

Ապա դառնում էր փուքս փչող պատանուն.

—Փչի, փչի, հոգուդ մատաղ, փչի: Ժաժ եկ, որդի, մի ամաչացնի:

Ու չէր համբերում. վեր էր կենում տեղից. խարխափելով մօտենում էր փուքսին, առնում էր պատանու ձեռքից կոթերը և սկսում ինքը փչել:

—Տեսնում ես, մեր տղայ, ոնց պէտք է փչես,—կրկնում էր երիտասարդ դարբինը:—Սովորի, ապօրից սովորի:

—Ձան-ջան, Աւօ ապէր,—քաջալերում էին դարբնոցում նստած գիւղացիք.—ափսոս ջահելութիւնդ, հա...

—Հէրիք է, հէրիք, շէն կենաս, ապէր,—վերջապէս ընդհատում էր դարբինը.—յոգնեցիր, թող էտ ջահիլը փչի:

Պատանին նորից առնում էր ձեռունուց փուքսի կոթերը և շարունակում գործը:

Իսկ Աւօն քրտինքը սրբելով, դանդաղ գնում էր իր սովորական տեղը, ծանր իջնում էր գետին ձեռնափայտի կողքին, երկու ափով բռնում էր գլուխը ու խորը «ախ» քաշում:

Թրախկ-թրոխկ, զրախկ-զրոխկ, փուհ հա փուհ, փուհ հա փուհ:

Կռանը զարկում էր, փուքսը փչում ու նրանց ձայների հետ միախառնւում էին դառն հոգոցները, որ դուրս էին թռչում կոյր դարբնի տանջած կրծքից:

1) Աւօն սկզբում ինչո՞ւ էր այնպէս ուրախ ու երջանիկ:

2) Կուրանալուց յետոյ ի՞նչն էր նրան տանջում:

3) Ինչո՞ւ էր ամեն օր գալիս դարբնոցը նստում:



44. Դարբին

Կըռանը ձեռքին, զընդանն առաջին,
քիթ-երես մըրոտ, դարբնոցի միջին,
կաշէ գոգնոցը առաջը կապած,
լոխկ կանգնած է մեր Խէչօ ամին:

Փուքսը — փո՛ւհ հա փո՛ւհ,
փշում է, փշում,
կայծեր ու մոխիր դէս ու դէն փռում.
Երկաթի մի շերտ հընոցը կոխած,
սաստիկ տաքիցը վառւում, կարմրում:

Խէչօն հանում է երկաթի շերտը,
զընդանի վրա կռանով ծեծում,
շինում նրանից պայտ, մեխ ու կացին
և իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,
ամպիպէս փռւում տաք-տաք գոլորշին,
կրկին պնդանում, կրկին փափկանում,
մինչև որ պատրաստ, շարտւում գետին:

Կռում է Խէչօն, տքնում, աշխատում
մըրոտ ու նեղլիկ դարբնոցի միջին,
կաշէ գոգնոցը առջևը կապած,
կըռանը ձեռքին, զընդանն առաջին:

Ինչո՞ւ է Խէչօն տքնում ու աշխատում. մարդիկ ինչո՞ւ են աշխատում:

45. Աբու-Հասանի մաշիկները

ա.

Ո՛վ չէր ճանաչում Բաղդադում Աբու-Հասանի հոշակա-
ւոր մաշիկները, այն կողմերում համընթացաբար չէին Աբու-Հա-
սանի երևելի մաշիկները:

Քիթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը
ծռւած, հազար տեղից ծակ-ծուկ, գոյնը վաղուց թռած, քր-
քրւած, կեղտոտ մաշիկները նմանը չունէին ամբողջ Բաղ-
դադում:

Ծերունիները հազիւ էին յիշում այն օրը, երբ այդ կօ-
շիկները առաջին անգամ զարդարեցին Աբու-Հասանի ոսկրոտ
ոտները: Այն ժամանակ Աբու-Հասանը թէև նոյնչափ բարձ-
րահասակ ու բարակ էր, բայց դեռ չորացած, չմըշկած
չէր, մօրուքը թէև նոյնչափ երկար ու փառաւոր էր, բայց
դեռ ոչ մի սպիտակ մազ չէր երևում:

բ.

Աբու-Հասանը մի օր գնացել էր բաղանիք:
Հանւելիս ծանօթներից մէկը նայեց և ասաւ.

— Պատւելի Աբու-Հասան, երանի երբ և իցէ դէն կըզգե՞ս
էտ մաշիկները, որ ոտքիդ փթել են:

— Հա, հա, ես էլ եմ տեսնում մի քիչ մաշւել են, — մըրթ-
մըրթաց Աբու-Հասանը և շտապով ներս մտաւ բաղանիք:

Բաղանիքից դուրս գալուց յետոյ, հագնւելիս Աբու-Հա-
սանը իր բըբըրած մաշիկների կողքին նկատեց մի զոյգ նոր,
սիրուն, գողտրիկ մաշիկներ: Ու բացականչեց.

— Անշուշտ, բարեսիրտ ծանօթս է էս մաշիկները ինձ
նւիրել: Ալլահը նրան բարի տայ, մէկ օրը հազար անի, ան-
սպառ լաւութիւնով լցնի նրա տունը...

Ու անմիջապէս օրհնելով առատաձեռն ծանօթին, Աբու-Հա-
սանը հագաւ նոր կօշիկները ու երջանիկ դուրս գնաց բաղա-
նիքից:

Դու մի ասա, այդ մաշիկները դադիրեն է եղել:

Դուրս է գալիս դադիրն բաղանիքից, դէս մաշիկ, դէն մաշիկ, չըկայ: Գոռգոռում է դադիրն: Բաղնիսպանը, ծառաները գլուխները կորցրած ուրոնում են: Մէկ էլ ահա բերում են Աբու-Հասանի փառաւոր մաշիկները, բթերը թափած, կրունկները մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկները:

— Էս հօ Աբու-Հասանի գլուխի մաշիկներն են, — գոչում է դադիրն. — Էն ժխտը գողացել է իմ նոր մաշիկները: Շուտով, հասէք, բռնեցէք:

Հասնում են Աբու-Հասանին հէնց իր տան դռների առջև, բռնում են տանում դատարան: Կարող էր արդարանալ որ... Գողացած մաշիկները ոտքին էին: Եւ Աբու-Հասանը պէտք է բանտ նստէր, և, ո՞հ սոսկալի բան, տուգանք վճարէր, և նորից իր հին մաշիկներով տուն վերադառնար:

Այդ օրւանից Աբու-Հասանը ատեց իր հին հոշակաւոր մաշիկները. չէ՞ որ բոլոր դժբախտութիւնների պատճառը նրանք էին եղել:

Տուն վերադառնալուն պէս հանեց մաշիկները ու շարտեց առուն, որ հոսում էր տան առջևից:

Երեք օր յետոյ ձկնորսները ուռկանով ձուկ որսալիս ջրից հանեցին ձկան տեղ, մաշիկներ. բթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

— Էս հօ Աբու-Հասանի անպիտան մաշիկներն են, — պոռացին նրանք ու բարկացած տարան ձգեցին Աբու-Հասանի բաց պատուհանից ներս: Մաշիկներից մէկը դիպաւ հնուց մնացած թանկագին յախճապակի սափորին ու փշրեց:

Մօտ վազեց Աբու-Հասանը, տեսաւ իր հին հոշակաւոր մաշիկները, տեսաւ փշրւած սափորը, երկու ձեռքով գլխին

տւաւ. էլ ի՞նչ: Առաւօտը, լոյսը բացւելուն պէս իջաւ այգին ու թաղեց, խորը թաղեց մաշիկները մի ծառի տակ, որ ազատի ու էլ նրանց երեսը չը տեսնի:

Հարևանը կտուրից նկատեց ու մտքումը ասաւ.

— Էս լաւ է, վերջապէս իմացայ՝ որտեղ է պահում Աբու-Հասանը իր ոսկիները:

Ու հէնց նոյն գիշեր ծածուկ մտաւ Աբու-Հասանի այգին: Փորեց, փորփրեց, արմատահան արեց թփերը, վերջապէս ծառի տակից դուրս եկաւ մի ինչ որ բան:

Կուսնեակի լուսով լաւ զննեց և տեսաւ՝ մաշիկներ էին, բթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

— Էս հօ Աբու-Հասանի գարշելի մաշիկներն են, — կանչեց հարևանը ու զայրացած այնպէս տւաւ մաշիկները Աբու-Հասանի տան դռան, որ խեղճ ծերուկը վեր թռաւ տեղից ու դողդողալով շապկանց վազեց տեսնելու՝ գողերը հօ չէ՞ն մըտել իր սնդուկները փախցնելու:

Վախից դուռը բաց չարաւ. բայց էլ քուն կը գաւ աչքերին:

Առաւօտեան, երբ դուռը բաց արաւ՝ ապշած մնաց. իր հին հոշակաւոր մաշիկները ընկած էին շեմքին, իսկ այգին, իր աչքի լոյս այգին տակնուվրա արած:

Աբու-Հասանի ծնկները դողացին, աչքերը դէպի երկինք դարձան, ձեռքերը վեր պարզեցին ու նա կարողացաւ միայն բացականչել.

— Ալլահ, այս ի՞նչ պատիժ է:

Ամբողջ օրը խանութում Աբու-Հասանը միմիայն մի բանի մասին էր միտք անում՝ թէ ինչպէս ազատի իր հին հոշակաւոր մաշիկներից:

Եւ երեկոյեան դէմ կամացուկ դիմեց քաղաքից դուրս:

—Այ հրաշք, Աբու-Հասանը գրասենյուկ է գնում, — ասում էին զարմացած նրան պատահող ծանօթները:

Աբու-Հասանը գնաց հեռո՛ւ, գետի ափով, շուրջը նայեց, տեսա՛ւ՝ մարդ չըկայ, ու շուրջը նետեց իր մաշիկները:

—Գնացին, — ուրախանում էր նա, — ծովը գնացին:

Եւ հանգիստ սրտով վերադարձաւ տուն ու անուշ բնեց:

Գետից շուր էր բերած բազաբի հրապարակները: Միւս օրը, Բաղդադի կանայք երբ գնացին աւազանից շուր առնելու, տեսան որ շուրը կտրւել է, աւազանը դատարկ: Կանչեցին քաղաքապետին, բանդուտեցին խողովակները և յանկարծ խողովակների մէկից դուրս եկան մաշիկներ, բթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, բրբրւած, կեղտոտ մաշիկներ:

—Էս հօ Աբու-Հասանի բորբոսնած մաշիկներն են, — պուռացին ամենքը, — բերէք Աբու-Հասանին, քաշ տւէք Աբու-Հասանին դատաւորի մօտ, էտ անպիտան շուր ապականողին:

Դարձեալ կանգնեց Աբու-Հասանը դադիի առջև: Ի՞նչ պիտի ասէր. բազմութիւնը իր աչքովն էր տեսել նրա մաշիկները ջրի խողովակի մէջ: Աբու-Հասանը պիտի վճարէր մեծ տուգանք և ուտէր մօրակի յիսուն հարւած:

—Մեռայ, — աղաղակում էր նա, — վայ մեռայ...

Տնքալով անիծելով այն օրը, երբ գնել էր իր հռչակաւոր մաշիկները, անիծելով իր սև բախտը, նա վերադառնում է տուն ու կրկնում:

—Ուրիշ ճար չը կայ, ուրիշ ճար չը կայ, պիտի այրեմ, կրակը պիտի գցեմ...

ը.

Բայց մաշիկները այնպէս թաց էին: Աբու-Հասանը դրաւ պատուհանին, որ չորանան: Տան կատուն ցատկեց պատուհանը՝ արևի տակ տաքանալու համար, կպաւ մաշիկներին, մաշիկները գլորեցին ցած՝ փողոցը, ընկան ուղղակի տակովն

անցնող կնոջ գլխին:

Կինամարդը ցաւից ճչաց. հաւաքեց ժողովուրդը և ի՞նչ տեսնի: Ճակատը ճղւել է, արիւնը կաթիլ-կաթիլ ծլծլում է, իսկ գետնին ընկած են մաշիկներ, բթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, բրբրւած, կեղտոտ մաշիկներ:

—Տեսէք, էս հօ Աբու-Հասանի զազրելի մաշիկներն են, — գոչեցին ամեն կողմից: — Այ Աբու-Հասան, այ Աբու-Հասան, դուրս արի, մարդասպան:

Աբու-Հասանի դէմքը երևաց պատուհանից և մի ակնթարթում կտաւի պէս գունատեց:

Ամբոխը քաշէքաշ տարաւ նրան նորից դադիի մօտ:

—Արդար դատաւոր, ողորմի, — աղերսում էր Աբու-Հասանը՝ գետնին տարածւած, — լսի ինձ: Իմ մաշիկները, իմ անիծած մաշիկներն են ինձ էս տեղը հասցնողը: Հոգիս դուրս եկաւ, ճար չունեմ: Ինչքան ոսկի ուղում ես վերցրու, միայն թէ փրկի ինձ մաշիկներիս ձեռքը:

Ղադին չը կարողացաւ ծիծաղը պահի:

—Վեր կաց, Աբու-Հասան, — ասաւ նա, — տես, առաջ դու չէիր ուղում քո հին հռչակաւոր մաշիկներիցը բաժանւես, հիմա էլ մաշիկներդ չեն ուղում քեզից ձեռք վերցնեն: Ներողութիւն խնդրիր այս կնոջից, բժշկի վարձը տուր ու ճանապարհ դիր, ինքդ էլ գնա քո բանին: Մաշիկներիդ համար էլ դարդ մի անի:

Ու հրամայեց Աբու-Հասանի մաշիկները կախեն Բաղդադի մեծ հրապարակի վրա:

Ո՞վ չէր ճանաչում Բաղդադում Աբու-Հասանի այդ մաշիկները, բթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, բրբրւած, կեղտոտ մաշիկները, որ ժլատը չէր սարսափում դրանց մօտիցն անցնելիս:

Մաշիկները ինչո՞ւ կախեցին մեծ հրապարակի վրա:



46. Առաջին ձևադրվածքը

ա.

Երկար ու սպիտակ միրուքով մի ծերունի նստել էր ու յօն-
բերը կիտած մտածում էր: Մութ ու ցուրտ էր նրա շուրջը:
Կատարեալ խաղաղութիւն էր տիրում շուրջը, բայց յան-
կարծ ինչ որ աղմուկ ընդհատեց ծերունու մտածումները:

«Այս ի՞նչ բան է, Ո՛վ է համարձակում ինձ խանգարել:
Ես ամենքին հրամայել եմ լռել ու անշարժ մնալ... Այս ձայնը
կարծես ջրի կարկաչը լինի, բայց չէ՞ որ ես հրամայել եմ
ջրին, որ էլ չը խոխոջի: Իսկ սա ի՞նչ բան է. Ասես թռչունների
երգը լինի... Բայց չէ՞ որ ես թռչուններին էլ ուղարկել եմ
հեռաւոր հարաւը», — ասում էր ծերունին՝ աւելի և աւելի
կիտելով թաւ յօնքերը:

Այդ ժամանակ տեսաւ իր առաջ կանգնած մի պատանի,
ոսկեփայլ գանգուրներով ու կարմրաթուշ դէմքով:

— Քեզ հիվ թոյլ տւաւ այստեղ գալ, — բարկացած փրնթ-
փրնթաց ծերունին:

— Ի՞նչ դժգոհ ես երևում, պապի, — ասաւ պատանին. — Նե-
րքը որ եկել եմ առանցքո թոյլտւութեան. Բայց նայիր, տես՝
ինչ ուրախ են ամենքը գալուս. կարծում էի դու էլ...

— Ո՛չ, հչ, ես ուրախ չեմ, — մըրթմըրթաց ծերունին:

— Ես շատ եմ լսել մեծամեծ գործերիդ մասին, — շարու-
նակեց զւարթադէմ պատանին, — և եկել եմ հաստատ իմա-
նալու, ճիշտ է արդեօք այն ամենը, ինչ որ պատմում ենք
մասին:

— Ես արել եմ աւելին, քան թէ դու կարծում ես, տղայ,
ոչ ոք չի կարող թւել իմ կատարած բոլոր հրաշքները...

— Ասա, ծերուկ, ի՞նչ է արածդ. ես կարծում էի թէ բացի
ինձանից ոչ ոք հրաշք չի գործում:

բ.

— Ես կը փչեմ գետին, ունա կը ծածկւի սառուցով, — սկսեց
ծերունին:

— Իսկ ես կը փչեմ սառուցին ու կազատեմ կաշկանդւած
գետը, — պատասխանեց պատանին:

— Ես կը թափահարեմ ալեգարդ գլուխս, ու երկիրը կը
ծածկւի ձիւնով:

— Ես կը թափահարեմ ոսկեհեր գանգուրներս, և պայծառ կը
ժպտայ արեգակը ու կը հալւի ձիւնը:

— Ես կը հրամայեմ թռչուններին լռել և չլել այստեղից
ու թւերը բանալով՝ նրանք կը դիմեն դէպի հեռաւոր երկիր-
ներ:

— Իսկ ես կասեմ՝ «Թռչուններ, վերադարձէք». կը գան
նրանք, կը պտտեն գլխիս ու օդը կը լցնեն զիլ երգերով:

— Ոչ ոք չի կարող մէկ մէկ համարել այն բոլոր տերե-
ւները, որ սարսափից դողդողալով թափւում են գետին, երբ
ես կաշում եմ նրանց իմ սառցէ մատներով կամ փչում եմ
իմ ցուրտ շունչը: Տեսե՛ր ես դու այդ երբ և իցէ:

— Ես երբէք չեմ տեսել տերևները ծառերից թափւելիս,
ես տեսել եմ նրանց միշտ դալար, միշտ մատղաշ, իմ երևա-
լուս ուրախ դողդողալիս, — առարկեց պատանին:

Եւ ծերն ու պատանին խօսում էին ամբողջ գիշեր: Ծե-
րունին սկսեց յոգնել, իսկ պատանին հետզհետէ աւելի զւար-
թանալ:

Լուսաբացին արևը փայլեց օդը լցւեց թռչունների ու-
րախ ծըլւոցով:

Պատանին հասկացաւ, որ արդէն ամենքն հասկացել էին իր
գալու մասին ու իրար ողջունում էին ուրախ զւարթ: Երջա-
նիկ ժպիտով նա նայեց իր շուրջը, ապա դարձաւ ծերունու
կողմը, որ գնաս բարեւ ասի նրան...

Բայց ծերունին էլ չը կար:

Այնտեղ, ուր նա նստած էր մի քիչ առաջ, երևում էին մի քանի սպիտակ բծեր, ձիւնի վերջին մնացորդները:

Պատանին մօտեցաւ նրան ու ժպտաց: Բծերը ոչ թէ ձիւնի մնացորդներ էին, այլ սպիտակ ձնծաղիկներ, գարնան առաջին ծաղիկներ, որոնք դեռ յիշում էին ձմեռը:

Էլ ի՞նչ ծաղիկներ զիտէք, որ քացում են ձիւնի հաւելումն պէս:

47. Յոգնած երկիրը

Յուրուն աստղերը կապոյտ երկնքում
երգում են անուշ միասին խմբւած,
և ըզգուշութեամբ կամաց են երգում,
չը զարթեցնեն երկիրը նիրհած:

Այս, ամբողջ օրը շրջող ոտներից,
անվերջ աշխատող կուռ բազուկներից,
ամուր բաբախող մարդկանց սրտերից
խեղճ մայր-երկիրը սաստիկ է յոգնած...

48 Արեւի սօտ

ա.

Մի անտէր երեխայ՝ ցնցոտիներ հագած կուշ էր եկել պատի տակ: Գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր նրան:

—Կարմիր արև, բարի արև, դու ես միայն ինձ տաքացնում,—մտածում էր խեղճ մանուկը.—դու ես միայն ինձ զգւում, համբուրում, ինչպէս երբեմն իմ անգին մայրս: Եթէ չէ՝ մարդիկ աչք են դարձնում վրաս:

Բայց կամաց-կամաց արևը թեքւում էր կանաչ սարերի ետևը, երեխան կարօտով ու արցունքով նայում էր նրան, մինչև որ ոսկեհեր արևը սահեց ու անցաւ սարի այն կողմը...

—Չէ, ես չեմ կարող առանց արևի,—վճռեց մանուկը,—ես պիտի երթամ արևի մօտ. ես գիտեմ ճամփան. ա՛յ, այս սարի ետևը:

Վճռեց ու ճամփայ ընկաւ:

բ.

Մութը ընկնում էր և կանաչ սարը սևով ծածկում:
Ճամփին մարդիկ էին հանդիպում և հեռից ձայն տալիս.
—Է՛յ հէ՛յ, հի՛վ ես դու:

—Ճամփորդ տղայ եմ,—պատասխանում էր տղան:

—Ո՛ւր ես գնում:

—Արևի մօտ. ա՛յ, այս սարի ետևը:

—Յիմար տղայ,—ասում էին նրանք ու հեռանում:

Բայց երեխան ուշք չէր դարձնում. նա պարզ զգում էր, որ արևը այս սարի միւս երեսին է. մի քիչ էլ, մի քիչ էլ, ու կը լինի արևի մօտ:

Ու անվախ, վստահ քայլերով գնում էր վերև, բարձր, միշտ բարձր:

գ.

Բաւական ուշ էր արդէն, երբ լսեց մօտիկից շների հաչոց ու տեսաւ՝ շատ մօտիկ մի կրակ է շողշողում:

—Ո՛վ ես,—լսեց խաւարի միջից մի ձայն.—հըր ես գնում:

—Անտէր ճամփորդ տղայ եմ. գնում եմ արևի մօտ: Ասա, հրն է արևի ճամփան. մութն է, էլ սարերը չեմ տեսնում:

Ճրազը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ, նայեց նրան ու ասաւ բնքուշ ձայնով.

—Դու դադրած կը լինես ու քաղցած, գնանք ինձ մօտ:

Ասաւ բարի անծանօթը, բռնեց երեխայի ձեռքից ու տարաւ տուն:

դ.

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր. մէջտեղում վառւում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդու կիներ

և երեք փոքր երեխաներ, որոնք համարեա հասակակից էին ճամփորդ երեխային: Խրճիթին կից մի մեծ սրահում որոճում էին ոչխարները: Նա հովիւ էր, սարի հովիւ:

— Սիրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել: Թող չը լինէք երեք եղբայր, լինէք չորս: Երեքին հաց տւող ձեռքը չորսին էլ կը տայ: Սիրեցէք սրան. եկէք համբուրեցէք ձեր եղբոր ձեռքը:

Ամենից առաջ հովւի կինը մօտ եկաւ, գրկեց երեխային և մօր պէս ջերմ-ջերմ համբուրեց. յետոյ երեխաները եկան և եղբոր պէս համբուրեցին նրան:

Երեխան իր սրտում մի քաղցր տաքութիւն զգաց, և նրան այնպէս թւաց՝ թէ արևը հէնց ուղիղ խրճիթի վերևն է վառւում...

Ե.

Ուրախութիւնից լաց եղաւ, անուշ-անուշ լաց եղաւ և պատմեց բոլոր իր գլխի եկածները:


Յետոյ օջախի առջև սեղան նստեցին. կերան, խմեցին, ծիծաղեցին: Մայրը նրանց համար անկողին շինեց և ամենքին քնեցրեց իր կողքին: Երեխան շատ էր յոգնած, տեղը մտաւ թէ չէ, իսկոյն աչքերը խփեց ու քնեց...

Երազի մէջ ժպտում էր ուրախ:

Իբրև թէ ինքը արևի մօտ էր, գրկել էր նրան ամուր ու պառկել էր նրա գրկում, տաք ու երջանիկ...

Մէկ էլ սրտի ուրախութիւնից վեր թռաւ, զարթնեց ու տեսաւ որ արևի փոխարէն իր մօր գրկումն էր: Եւ նրան թւաց, որ արևը ոչ թէ այս խրճիթի վերևն է, այլ հէնց այս խրճիթի մէջը, որ ինքը ուղիղ հէնց արևի գրկումն է...

Այս պատկածքի մէջ ո՞րն է հոգու արեւը եւ ինչո՞ւ:



49. Սասունցի Դաւիթը գառնարած

Մեր Դաւիթ հրսկան
մի մանուկ էր դեռ եօթ-ութ տարեկան.
մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
որ նրրա համար թէ մարդ, թէ մըժեղ:
Հօրեղբայր Օհանն երեխի ոտի
մի գոյգ ոտնաման բերաւ երկաթի,
երկաթի մի կող շալակին գրած,
ու արաւ Սասմայ քաղքին գառնարած:

*

Քըշեց գառները մեր հովիւ հրսկան,
եկաւ Սասունի սարերն աննրման.

«Է՛յ ջան, սարեր.
Սասման սարեր...»

որ կանչեց, նրա ձենից ահաւոր
 դրդորդ-դրմբդրմբոցն ընկաւ սար ու ձոր.
 վայրի գաղաններ բըներից փախան,
 քարէքար ընկան, դատարկուն եղան:
 Դաւիթը ընկաւ նրբանց ետեից,
 որին մի սարից, որին մի ձորից,
 աղւէս, նապաստակ, գայլ, եղնիկ բըռնեց,
 հաւաքեց, բերաւ, գառներին խառնեց,
 իրիկւան քչեց ողջ Սասմայ քաղաք:
 Կաղկանձ ու ոռնոց, աղմոկ, աղաղակ...
 Քաղբցիք յանկարծ մին էլ էն տեսան՝
 գալիս է հըրէս անհամար գազան.

«Վայ, հարայ, փախէք...»

Մեծեր, երեխէք

սըրտաճաք եղած,

գործերը թողած,

հըր տուն ընկաւ, հըր ժամ, խանութ,
 ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
 Դաւիթը եկաւ, կանգնեց մէյդանում.

— Վահ, էս մարդիկը ինչ վաղ են քընում:

Հէյ ուլատէր, հէյ գառնատէր,

եկէք շուտով, բացէք դըռներ.

ով մինն ունէր, տասն եմ բերել,

ով տասն ունէր՝ քըսանն արել...

Շուտով եկէք, եկէք, տարէք,

ձեր գառն ու ուլ գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
 ինքն էլ մեկնըւեց քաղբի մէյդանում,
 գլուխը դրաւ մի քարի՝ մընաց
 ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:

*

Լուսին՝ իշխաններ ելան միասին
 գընացին Ձէնով Օհանին ասին.

«Աման, քեզ մատաղ, այ Օհան ախպէր,
 մեր գառն ու մեր ուլ թող մնան անտէր,
 միայն սըրանից ազատ արա մեզ.
 Ի՞նչ գառն է ջոկում, ոչ գայլն ու աղւէս,
 էս քաղբի գլխին փորձանք կը բերի,
 գայլերոց կանի, կը տայ՝ կաւերի»:

Ելաւ Դաւիթ մօտ գնաց Օհանը.

— Հը, Դաւիթ, ասաւ, հնց է քո բանը:

— Հօրեղբայր Օհան, շատ է դժար բան.

էն կարմիր, անպոչ գառները որ կան

խելօք են, ամա պոչաւոր գառներ

ցըրւեցին, փախան ողջ սարերն ի վեր.

էնքան վաղեցի, որ ելաւ հոգիս,

էլ իսկի տըրեխ չը մնաց հագիս:

— Դաւիթ ջան, ասաւ, էտ շատ է դժար,

նետ աղեղ եմ ես շինել քեզ համար,

նետ-աղեղդ ան, գընա որս արա,

ման արի ազատ սարերի վըրա:

Նետ-աղեղն առաւ Դաւիթն Օհանից

հեռացաւ քաղբից, քաղբի սահմանից

ու դառաւ որսկան:

50. Դեպի քաղաք

ա.

Մեծ պասի վերջին շաբաթւայ օրերից մէկն էր: Այս շա-
 բաթ գիւղացիները իրենց բոլոր բարին կրում են քաղաք, որ
 ծախեն:

Աւետ ապէրն էլ, աքաղաղը կանչելուն պէս, վեր կացաւ
 կէս գիշերին, ճրագը վառեց, լւացւեց, երեսը խաչ հանեց ու
 սկսեց իր էջերը համետել:

Ամբողջ ընտանիքը դեռ քնած էր, միայն Նղիսաբէթը օգնում էր ամուսնուն: Նա դեռ մի օր առաջ պատրաստել էր երկու տիկ իւղ, մի բեռ նոր պանիր, երկու կթոց ձու և մի քանի հատ հաւ, որ մարդը քաղաք էր տանելու:

Աւետը բեռները կապելու վրա էր, որ մուկ անկիւնում, անկողինների միջից վեր բարձրացաւ մի փոքրիկ գլուխ:

Նայեց, իսկոյն գլխի ընկաւ ու ասաւ.

—Հօրեղբայր, ինձ էլ պիտի տանես. ես էլ կը գամ:

—Ձէնդ կտրի, վէր ընկի, քաղաք գնալդ էր պակաս,—պատասխանեց Աւետը իր գործը շարունակելով:

Տղան լռեց, գլուխը դրեց բարձին, երեսը թաքցրեց վերմակի տակ ու սկսեց խուլ ձայնով լաց լինել: Լացի ձայնից զարթնեց պառաւ Շուշանը, որ պառկած էր միենոյն անկողնում իր թոռնիկի հետ: Նա իմացաւ Կալօի լացի պատճառը:

—Աւետ, որդի, ինչի՞ ես լացացնում խեղճ տղին,—միջամտեց պառաւը:—Տար. էլ ինչո՞ւ ես սիրտը կոտրում:

—Ախար, նրա ինչ քաղաք գնալու ժամանակն է,—պատասխանեց Աւետը աւելի մեղմ ձայնով:

—Հրէն, Պետրոսենց Գիւրին էլ է գնում. նա ինձանից խօսե՞ծ չի,—լսելի եղաւ վերմակի տակից Կալօի լալագին ձայնը:

—Տար քեզ հետ, որդի,—կրկնեց պառաւը համոզելով:—Տար, թող աշխարհ տեսնի. խօսողիկ չէ, որ միշտ առիթի տակը մնայ, տնից դուրս չը գայ, տղայ է՝ սիրտը ուզում է, բան կը սովորի, աչքը կը բացւի:

Պառաւի խօսքերը առանց հետեւանքի չը մնացին:

—Դէ, վեր կաց գնանք, մի ուշանայ—վճռեց վերջապէս Աւետ ապէրը:

բ.

Առաջին անգամն էր, որ Կալօն քաղաք պիտի տեսնէր. նրա ուրախութեանը չափ չը կար: Ծտի պէս դուրս թռաւ քնաշորերի միջից, մի քանի րոպէ այս ու այն կողմ վազեց,

ինքն էլ չիմանալով ինչ բանի համար, և յետոյ սկսեց իր երկար ցուպը փնտռել: Կալօի համար երկար պատրաստութիւն պէտք չէր. իր սովորութեան համեմատ առանց հանելու էր քնել. պէտք է միայն տրեխները հագնէր ու ամեն ինչ վերջացած էր: Արագութեամբ կատարեց բոլորը, մօտեցաւ պառաւ տատին ու փաթաթեց վզովը:

—Քեզ համար ի՞նչ բերեմ քաղաքից:

Պառաւը ոչինչ չը պատասխանեց, միայն ժպտաց ու համբուրեց նրան:

Աւանակները արդէն բեռնած պատրաստ էին բախումը:

Նղիսաբէթը ճրագը ձեռին կանգնած էր այնտեղ, իսկ Աւետը մտել էր ոչխարների գոմը: Նա շուտով դուրս եկաւ, բերելով մի չաղ գառը ու կապեց բեռան վրան:

Դեռ բաւական ժամանակ կար մինչև լուսանալը, երբ փոքրիկ քարաւանը ճամփայ ընկաւ:

Շուտով նրանց միացան մի քանի ուրիշ գիւղացիներ, որոնք նոյնպէս ծախելու բան էին տանում քաղաք:

գ.

Եղանակը հանդարտ էր: Աստղերը անուշ ժպիտով փայլում էին պարզ երկնքին: Օդի մէջ տիրում էր գարնանային թարմութիւն:

Կալօն մի քանի հասակակից և իրենից մեծ տղաների հետ քշում էր աւանակները: Նրանց ետևից կամաց-կամաց գալիս էին մեծերը, գալիս էին ու խօսում իրենց ցաւերից, իրենց հոգսերից, իրենց պարտքերից:

Բայց Կալօի ուրախ խումբը առաջ ընկած քշում էր աւանակների քարաւանը, զբաղւած իր խօսակցութեամբ:

—Սաքի,—հարցնում էր Կալօն,—դու քաղաք տեսել ես. ասա տեսնեմ, էստեղ գառները ճրտեղ են արածում:

Սաքին, որ տարիքով իր ընկերներից մեծ էր ու մի քանի տարի մնացել էր քաղաքում, պատասխանեց.

—Քաղաքացիք ոչխար չունեն, գառներ չեն պահում:
—Բա՛ նրանց տղերքը ի՞նչ են շինում, որ գառներ չեն արածացնում,—կրկին հարցրեց Կալօն:

—Կարդում են:

—Նրանց տէրտէրը ինչո՞վ է ծեծում, երբ դասը չեն իմանում:

—Նրանք տէրտէրից դաս չեն առնում, դպրոցումն են կարդում:

—Դպրոցն ինչ է:

Սաքին չը գիտէր ինչ պատասխանի և ասաւ.

—Դպրոցը դպրոց է, չէ՞ս իմանում:

Մի ուրիշ երեխայ հարցրեց.

—Քաղաքի տղերքը, ո՞վ գիտի, ինչ լաւ տրեխներ կունենան, չէ՞:

—Նրանք տրեխներ չեն հագնում, կօշիկ են հագնում,—պատասխանեց Սաքին:

—Կօշիկն ինչ է:

—էն էլ քաղքի տրեխ է:

—էնտեղ մօշ կա՞յ, զկեռ կա՞յ,—հարցրեց մի ուրիշը:

—Չը կայ, ծմակը հեռու է քաղաքից:

—Բա՛ քաղաքի տղերքը ի՞նչ են ուտում:

Սաքին չէր իմանում, ինչպէս գոհացնի ընկերների հետաքրքրութիւնը: Նա կարճ նկարագրեց քաղաքի կեանքը, ասաւ՝ թէ այնտեղ մեծ մեծ տներ կան, շուկայ կայ, թէ եզան ու գոմէշի տեղ ձի են լծում, սայլերը ուրիշ տեսակ են, կառք են ասում, ու բանեցնում են միայն նստելու համար: Յետոյ էլ աւելացրեց, թէ քաղաքի տղաները գիւղացի տղաներին ծաղրում են և պատահած ժամանակ էլ ծեծում:

Վերջին խօսքերը գրգռեցին Կալօի բարկութիւնը և նա իր երկայն ցուպը բարձրացնելով սպառնաց.

—Տեսնո՞ւմ ես մահակս: Էնպէս կը չափեմ նրանց բարակ մէջքին, որ «վայ, նանի» կանչեն:

Իսկ հեռուն նրանց առաջ երևում էին արդէն կանաչների միջից եկեղեցիների գմբէթները ու մինարէների սուր ծայրերը: Մօտենում էին քաղաքին:

1) Կալօն ի՞նչ պէտք է պատմի տանը իր նոր տեսած բաների մասին:

2) Ինչպէ՞ս կը նկարագրի քաղաքացի տղան զիւրի կեանքը:

51 Ուռնի

Սիրո՛ւն ուռնի,	որ էտքան ջահել
կանաչ ուռնի,	զլխիկդ ես ծռել,
ճիւղերդ կախ-կախ,	վշտոտ ես դառել,
ինչո՞ւ չես ուրախ:	ծնկիդ ես խփում,
Սիրո՞ղ է ծարաւել,	արցունք ես թափում:
արե՛ն է վառել,	

52. Քաւոր մեր տալիս

Կէսօր է արդէն. կանաչ Լաւարից իջնում է հանգիստ ոչխարը կըթի. կըթւելով մաս-մաս, անցնում է բերից, լըսւում է անուշ փըշշոցը կաթի: Հովիւ, հովուհի նստոտած շարքով կըթում են ուրախ խաղ ու ծիծաղով: Ահա՛ վերջացաւ ոչխարի կիթը, կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը. մէկն էլ գդակը շարժելով օդում, դեռ գառնարածին «հէյ, եկ» է կանչում:

Ու երկար չանցած՝ սարի գագաթին
 գառների կայտառ հօտը երևաց,
 խառնելով իրանց մայրերի հօտին
 բերկրանքի յոյզով մայրում են ցրլած:
 Կանչում են, բայում գառն ու մաքին,
 անուշ ձայներով փրնտրոում միմեանց.
 Իրը գըտնելով իրա գառնուկին՝
 ծըծել է տալիս, փայելով սրտանց.
 Իրը խաղում է մօր հետ կուշտ փորով,
 Իրն էլ մընում է տըխուր մայելով.
 և ամեն անգամ գառը մէր տալիս,
 կարծես թէ անուշ համերգ են տալիս:

Ինչո՞ւ են ջոկ-ջոկ արածացնում գառներն ու մաքիները:

53. Զատիկ

— Զատիկ, Զատիկ, — լսում ես ամեն կողմից:

— Զատիկը գայ, գարունը բացւի, ծառերը ծաղկեն, քեզ
 համար նոր շորեր կարեմ, — յոյս է տալիս մայրը իր սիրասուն
 գաւակին:

— Զատիկը կը գայ, օրերը կը քաղցրանան, շուտով կառող-
 ջանաս, մայրիկ ջան, — մխիթարում է աղջիկը հիւանդի ան-
 կողնի կողքին նստած:

— Զատիկը գայ, օրերը ջերմանան, ձեզ հետ միասին գը-
 նանք հանգը, վարենք, աշխարհքը լիացնենք, իմ սեուկ գոմ-
 շուկս, իմ պոչը ծաղիկ եզներս, — փաղաքշում է գիւղացին իր
 հաստավիզ լծկանների մարմինը քորելով:

— Զատիկը կը գայ, գաշտերը կը կանաչեն, ծաղիկներով կը
 զարդարեն, կերէք անուշ խոտը, տըղեկեք ու առատ կաթ
 տւէք, — սիրտ է տալիս խաշնարածը թէ իր հօտին, թէ իրեն:

— Թող մի Զատիկը գայ, պինգ-պինգ ձւերը ջոկենք, ներ-

կել տանք, շխկացնենք, կուեցնենք. — օրեր են համարում
 մանուկները:

Մարդ չը կայ, որ Զատիկ չը կանչի: Սմենքը սպասում են
 նոր կեանքի, նոր յոյսերի, նոր ուրախութեան ու բնութեան
 նոր զարթնումին:

Հը՛, հը՛, դէհ, մեծ պասը գլորւեց. էլի միայն երկու շաբաթ,
 մի շաբաթ. ան քեզ Աւագ հինգշաբթին, Աւագ ուրբաթը և
 ահա արդէն իւղահոտը քթներիս դիպաւ. նաւակատիկն է:

Մեր դրացի ազգերը դեռ մի գիշեր էլ պիտի լուսացնեն,
 կիրակիի սպասեն Զատիկը տօնելու, իսկ մենք, հայերս, շա-
 բաթ օրը, ճաշը թեքւեց թէ չէ, տալիս ենք իրար կեանքի
 զարթնումի, Քրիստոսի յարութեան մեծ աւետիսը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

1) Դո՛ւ էլ սպասում էիր Զատիկն: Զատիկը քեզ ի՞նչ բերաւ:

2) Ի՞նչ ասել է «Քրիստոս յարեաւ ի մեռելոց». ի՞նչ լեզուով է.
 այդ լեզուն հիմա իրտեղ ենք գործ ածում:

54. Գարուն առաւօտ

Բարի լուսի զանգեր զարկին
 զընգզընգալէն անո՛ւշ, անո՛ւշ.
 լուսը բացւեց մեր աշխարհքին
 ճըղճըղալէն անո՛ւշ, անո՛ւշ:

Հովտում առուն խոխոջում է
 գըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ.
 բամին բարակ շընկշընկում է
 գըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ:

Կռունկն եկաւ երամ կապած
 կըռկըռալէն անո՛ւշ, անո՛ւշ:

կաքաւ քարին տաղ է կարդում
կըղկըղալէն անոնշ, անոնշ:

Հարսն ու աղջիկ հանդերնելան
շորորալէն անոնշ, անոնշ:
Ժողկանց բուրմունքն անմահական
սըլսըլալէն անոնշ, անոնշ:

55. Ծիլն ու ապառաժը

.ա

Լերկ ապառաժի տակ, երկու քարերի մէջ, վաղ գարնան
բուսել էր մի սէզ, մի պարզ, հասարակ, փոքրիկ խոտի շիւղ:

Օրօրւում էր նա նոր ծագող լոյսի մէջ ցօղով փայլփր-
լուն, յանկարծ աչքն ընկաւ ժայռի մութ ճեղքին և նկատեց
այնտեղ նոր ելած մի ծիլ:

—Այ, —գոչեց նա. —դու ո՞վ ես, հրտեղից եկար:

Ծիլը, որ արդէն կէս մատնաչափ կար, ցած նայեց, տե-
սաւ վտիտ սէզին ու ասաւ.

—Բարեւ, բարեկամ, միթէ ուրախ չե՞ս, որ բեզ ընկեր եկայ:

—Օ, ուրախ եմ, սաստիկ ուրախ, բայց ո՞վ բերաւ բեզ, և
ինքզի ո՞վ ես:

Ծիլը ժպտաց. ժպտաց, օրօրւեց ու այսպէս երգեց.

Ծառի ծիլն եմ ես,

ելայ անտառից,

քամու թևովը

թռայ դաշտերից,

անցայ սար ու ձոր

եկայ բեզ դրկից:

Յետոյ երգը կարեց ու հարցրեց.

—Իսկ դու ո՞վ ես, ընկեր, դու որտեղից եկար:

—Օ, —ասաւ սէզը, —ես ծնւել եմ այստեղ, իմ մօր կըրծ-

քից, մտել եմ հողի մէջ, բնել ձմեռը, այժմ դուրս եմ եկել,
եղել տանս տէր:

—Դու ուրեմն տուն-տե՞ղ ունես այդտեղ:

—Ունեմ. մի կտոր հող. շատ պահանջկոտ չեմ:

—Տեսնում եմ. իսկ իմ տեղը չափազանց նեղ է և ես
ստիպւած եմ բոլոր ուժս գործ դնելու, քարի կուրծքը մտնե-
լու, որ տեղս քիչ լայնացնեմ:

—Եւ կարողանում ես, —հարցրեց սէզը զարմացած:

—Դժւար է. բայց ուրիշ ճար չը կայ. թէ չէ կը մեռնեմ:
Իսկ ես ապրել եմ ուղում:

բ.

Եւ ծիլն աշխատում էր. աշխատում էր մեծանալ, ուժե-
ղանալ ու քարից իրա համար տեղ խլել. նա աշխատում էր
անվերջ, անդադրում, գիշեր ու ցերեկ, անկոտորում յամա-
ռութեամբ:

Ու այդպէս ամիսներ, տարիներ, շատ-շատ տարիներ:

Ձմեռը քնում էր, կազդուրւում, իսկ երբ գարունն էր
գալիս, ելնում էր աշխուժ, նոր ուժ ստացած արմատները
մեկնում, գործը սկսում:

Երբեմն սնունդը քիչ էր լինում. քամիների բերած հողն
ու փոշին հերիք չէր անում, երբեմն ամառները անձրևներ
չէին գալիս, քիչ էր մնում յուսահատւի ու չորանայ:

Բայց նորից նոր սիրա էր առնում. Հէնց որ քիչ կազդուր-
ւում էր, նուրբ ու բարակ արմատները խրում էր, խրում ու
աւելի-աւելի խորքերը գնում:

Եւ ինչքան արմատները տեղ էին գրաւում, այնքան բուռը
ամրանում էր ու հաստանում, այնքան էլ հպարտ գլուխը վեր
էր բարձրանում դէպի երկինքն ու դէպի արեւ...

—Տես բարձրը, բարափի ծայրին. տեսնում ես այն խոշոր,
հսկայ ծառը:

Նախկին ծիլն է. նա յաղթել է արդէն. նա ապրել էր ու-
ղում և կապրի:



56. Գութան

Լուսը լուսացաւ,
բարին շատացաւ.
Վաղ լուսաբացին
գութան լծեցին.
հորովէլ հօ...

Գութանը լարած,
հօտաղը շարած,
մաճկալը մաճին,
ձեռը աւանջին.
հորովէլ հօ...

Գութան ջան, վարի.
աւօսը շարի.
Թափ տուր, թեւարա,
շուռ տուր, սեւ արա.
հորովէլ հօ...

Ցանենք, արտ անենք,
հնձենք, տուն տանենք,
ամբարենք մեր հաց.
օրհնեալ է Աստուած.
հորովէլ հօ...

57. Ծոցանուկի

ա.

Գարունըացել էր, աշխարհը կենդանացել: Արևը ծիծաղում էր սաք ու դաշտի երեսին և ամենքին տանից դուրս հանում, ուղարկում էր բան ու գործի:

Թաղի գրեթէ բոլոր գեղջկուհիները, մօտ տաս-տասնըհինգ հոգի, կալապանի տակ մի կարպետ էին փռել, վրան ծալապա-

տիկ նստոտել և երանգով աշխատում էին:

Իրար հետ մրցելով՝ որը գուլպայ էր անում, որը գուլպան ասղաբուր նախշում, մի երկուսը սանդերբոյ բուրդ էին գզում, միւսներն էլ ճախարակով թել մանում:

— Անո՛ւշ ջան, Անո՛ւշ, արի ես ու դու «ծոցանուկի» տանք. տեսնենք՝ ով շուտ կը պրծնի իր բանը, — ոգևորւած առաջարկութիւն արաւ չալտիկ Մանուշը:

— Աչքիս վրա, — պատասխանեց Անուշը — դու էն չուստիկը չես, որ բեզանից քաշեմ:

— Դէ, գուլպիդ նշան արա, ես թելս կապ տւի, տեսնենք՝ ով շուտ կը հասնի գուլպի թաթին:

— Շատ լաւ, թող էս կարմիր ծաղիկն էլ իմ նշանը լինի, — ցոյց տալով իր գուլպի նկարը՝ համաձայնեց Անուշը:

Նրանք սկսեցին մէկ-մէկու հետ ձեռագործով մրցել: Երկուսն էլ ճիգ էին թափում, որ միմեանցից առաջ վերջացնեն գործը. ով շուտ կը հասնի պայմանաւորւած նշանին՝ նա էլ կը լինի յաղթողը:

Շէկիկ Շուշիկն էլ գրազ մտաւ Նուշիկի հետ:

— Աղջի Նուշիկ, արի ես մանեմ, դու ինձ համար փաթիլներ գզի, տեսնենք՝ կարամ ինձ հետ լուծը քաշես:

— Օհօ, ինչ մի դօշաղն էլ դու ես, որ չը կարենամ քեզ փաթիլ հասցնեմ, — պատասխանեց Նուշիկը և սանդերբոյ առաջը քաշելով, մի գունդ բուրդ դրեց կողքին և սկսեց ամենայն արագութեամբ գզել:

Նա գզում էր, Շուշիկը նրա փաթիլները ճախարակով մանում: Երկուսն էլ այնպիսի արագութեամբ էին գործում, որ շատ դժւար էր իմանալ՝ թէ ով ունից առաջ կանցնի:

Բոլորն էլ յափշտակւած աշխատում էին մեքենայի պէս. աշխատելու ժամանակ էլ շուտ-շուտ կրկնում էին.

«Ով շուտ ու շուտիկ,
նա կուշտ ու կուշտիկ,

ով կամաց-թամբալ,
նա պառաւ-համբալ»:

բ.

Երկար ժամանակ գգեցին ու մանեցին, գործեցին ու կա-
րեցին, և մէկ էլ յանկարծ Մանուշը նշանին հասնելով՝ ոգե-
ւորւած ճչաց.

—Անհւշ, Անհւշ, պառաւը ծոցդ, քո պառաւը ծոցդ, ես
պրծայ:

Այսինքն թէ՛ «Արդէն պառաւել ես և անշնորհքութիւնը
ծոցդ է թափել ու թուլացրել քեզ»:

—Ես էլ պրծայ, հրէսիկ պրծնում եմ,—կարմրած պատաս-
խանեց Անուշը:

Բայց ընկերներն էլ էտ էին ուզում. դէհ, ծափ տւին ու
ասին. «Անուշը պառաւել է, մեր պառաւից առաւել է»:

Ասին ու կրկնեցին և կուշտ-կուշտ ծիծաղելով՝ այնուհետև
սպասում էին ուրիշի յաղթւելուն...

Օրը թեքւել էր, արևը յոգնել և չէր կարողանում այլևս
իրիկնադէմի զով քամուն դէմ դնել, իսկ Շուշիկն ու Նուշիկը
դեռ շարունակում էին իրենց մրցութիւնը. այնպէս էլ ոչ
մէկը չը կարողացաւ միւսին «պառաւը ծոցն» անել:

Գեղջկուհիները ուրախ-ուրախ վերջապէս ցրւեցին իրենց
տները. ամեն մէկը գրեթէ երկու աշխատաւորի ձեռագործ
էր արել:

Իսկ տղերքը աշխատանքի ի՞նչ տեսակ մրցութիւններ ունեն:

58. Փոքրիկ երկրագործ

Եկաւ գարուն, եկան հաւքեր,
տաքցաւ արև, գըլգըլան ջրեր:
Եկան վարի-ցանքի օրեր:

Կռուկն ամուլ արեցի,
սագերն հորիք լրծեցի,

Ճնճղուկն հօտաղ վարձեցի,
կաքաւն հացւոր բռնեցի,
արտ ունէի՝ վարեցի,
ցորեն, գարի ցանեցի:

Ռրտեղ էր նրա արտը:

59. Մի կտրիճ

ա.

Գարնանամուտ էր:

Բարձր սարերում հալւում էր ձիւնը և հազարաւոր խըշ-
խըշուն վտակներ աղմկում էին, գլորւում ցած:

Գետը ազատւել էր սառցէ կապանքից, փրկել, վարարել:
Բարձր կոհակները գնում էին գալիս, ելնում ու իջնում ահա-
գին աղմուկով:

Գետի վրա ձգւած էր մի կամարակապ երկար հին կա-
մուրջ:

Ահա մօտենում է կամուրջին մի գիւղացի. հետն է կիներ՝
մանուկը գրկած: Ուզում են անցնեն էն միւս ափը:

—Է՛յ, գիւղացի, զգո՛ւշ, կամուրջը խարխուլ է:

Սառուցի կոյտերը գալիս են զարնւում կամարների քա-
րերին, դիզւում ու դիզւում. ջուրը յորդանում է:

Եւ գիւղացին շտապում է, որ շուտով անցնի:

Արդէն քիչ էր մնացել, մի տասը քայլ, որ հասնէին ափին,
յանկարծ պոկ է գալիս ու փլւում է կամարի այն մասը, որ
միացած էր հողին: Գիւղացին ու կինը սարսափահար վազում
են դէպի հակառակ կողմը: Բայց հազիւ են մի քանի քայլ
անում, նրանց առջև դղրդիւնով քանդւում է միւս կողմի կա-
մարն էլ:

«Աստուած իմ, դու փրկես մեզ,—կանչում է խեղճ գիւղացին յուսահատ. լալիս է կինը, ճշում երեխան: Ոռնում է գետը, սուլում է քամին, և այդ աղմուկի մէջ կորչում են թշուառների աղեկտուր ձայները:

Մէջտեղը կանգուն է միայն հիմնական սիւնը, որի վրա յենած էին երբեմն երկու կողմից զոյգ կամարները: Յւսահատ այդ կտորի վրա պատսպարւել, կուչ են եկել գիւղացին ու կինը՝ երեխան գրկած:

բ.

Գետի երկու ափին խմբւել են մարդիկ: Գոռում են, գոչում, դէս ու դէն վազում. բայց նրանցից ոչ ոք չի համարձակւում օգնութեան հասնել...

Ահա նժոյգ ձին հեծած, սրարշաւ գալիս է իշխանը ու ձեռքին բռնած մի քսակ ոսկի՝ բարձր ձայն է տալիս:

—Հարիւր ոսկի նրան, ով որ կը փրկի այդ զժբախտներին: Ամբոխը կարկամած ու լուռ կանգնել է: Մեծ է վտանգը և վարանելու ժամանակ չը կայ. վարարած գետը ցնցում է վերջին սիւնը:

—Է՛յ, մարդիկ, ով է սրտոտը ձեր մէջ,—կրկնում է իշխանը ու թափահարում քսակը ձեռքին:

Հսում են ամենքը, լուռ են ու անշարժ, կարծես քարացած...

դ.

Ափով գալիս էր մի յոգնած ձիաւոր, մի յաղթանդամ երիտասարդ, գալիս էր հեռուններից: Նա տեսաւ թէ չէ սոսկալի պատկերը, վայր թռաւ ձիուց, խաչ հանեց երեսը, ցատկեց ափին կապած նեղ ու փոքրիկ մակոյկը ու սկսեց թիավարել:

Խփում են ալիքները, զարնւում են սառուցի խոշոր կրտորները, ծռում նաւակը, քշում դէս ու դէն. բայց երիտա-

սարդը թիավարում է, թիավարում է անընդհատ, ուժեղ ու յամառ...

Ահա հասաւ կամուրջի մնացորդին: Ափից ամենքը ուրախութեան ճիչ են արձակում: Երիտասարդը ամուր բռնած սիւնի քարերից՝ օգնում է որ մակոյկն իջնեն գիւղացին, կինն ու երեխան:

Նստեցին թի չէ՝ առնում է նորից թիերը. և հազիւ հեռացած կամուրջից, ուժգին թափով շուռ է գալիս ահագին



սիւնը ու թաղւում ջրի մէջ:

Իսկ ամբոխը շունչը պահած հետևում է նաւակին, որ հոսանքի հետ կուելով, կուելով սառուցի կոյտերի հետ, աշխատում էր եղբրքին մօտենալ:

Բերկրանքի աղաղակը դուրս է թռչում հարիւրաւոր բերաններից. ամենքը շտապում են օգնեն մակոյկը դէպի ափը բաշելու և հարիւրաւոր բերաններ երիտասարդ օտարականի գովքն են անում:

—Մօտեցիր այստեղ,—կանչում է իշխանը.—դ՛ու, բաջ մարդ ու անվեհեր հերոս. առ այս քսակը. թող սա լինի քեզ պարգև:

—Իմ կեանքը, իշխան, ես ոսկով չեմ ծախում. տւէք այդ ոսկին թշուառ գիւղացուն,—ասում է անցորդը, հեծնում է իր ձին, քշում ու անհետ կորչում բլուրի ետև:

—Ո՛վ է դա, հրտեղից և հըր չքացաւ,—հարցնում էին ամենքը իրար:

Եւ մէկ պատասխան ունէին միայն.

—Մի կտրիճ էր...

1) Ի՞նչ տարբերութիւն կայ իշխանի ու այս օտարականի մէջ:

2) Ինչի՞ մէջն է օտարականի կտրճութիւնը, իսկ ինչի՞ մէջն է նրա մեծութիւնը:

60. Ա՛յ, սեւ ամպեր

Ա՛յ, սե ամպեր, վա՛յ սե ամպեր,
սիրտս պատեց սե ու մութ.
արդեօք ի՞նչ էք դուք ինձ բերում,
գարնան անձրե՞թէ կարկուտ...

Յոսոով-լուսով արտ եմ ցանել,
արիւն թափել ու բըրտինք,
ողջ սուրբերին մոմ եմ վառել,
աղօթք արել, որ երկինք
արտիս նայի, տանս խնայի,
օր տայ, կեանք տայ իմ հացին.
վա՛յ բալէքիս... Աստուած չանի,
թէ որ անհաց մնացին...

Ա՛յ, սե ամպեր, ի՞նչ էք գոռում,
սիրտըս պատեց սե ու մութ.
արդեօք ի՞նչ էք արտիս բերում,
գարնան անձրե՞թէ կարկուտ...

61. Կարկուտը

ա.

Սե ու ծանր ամպերը սարի ետևից դանդաղ եկան, դիգ-
ւեցին ու կախ ընկան երկնքից. խորին մթութիւնը ամեն ինչ
պատեց:

Յանկարծ որոտաց երկինքը, երկիրը դղրդաց, ցուաց փայ-
լակը, կայծակը խփեց, մռնչեց քամին, ծառերը դողացին, թե-
քեցին գլուխները. խոշոր ու ծանր կաթիլները ընկան տերե-
ներին:

Անձրեք սաստկացաւ. անձրևի ետևիցն էլ սառցէ գնդակ-
ներ, շրըճիկ հա շրըճիկ, թակեցին գետինը յորդ և ուժեղ:
Թակում են, թակում, սար ու ձոր ծածկում, ո՛չ դաշտ են
հարցնում, ո՛չ արտ ու այգի:

բ.

Ամեն տեղ շփոթ ու իրարանցում: Հօտը ցրւում է, նա-
խիրը փախչում, ձիերը խրտնած դէս ու դէն են վազում,
թռչունները պահւում իրենց բներում. հորթարած, փայտ-
հատ, ամենքը իրենց գործերը թողած՝ թփերի տակին ապաս-
տան են փնտռում:

«Կարկուտ, անի ինչ կարկուտ,—կանչում են գիւղացիք ի-
րենց դռանը կանգնած,—այս ինչ պատիժ է»:

Ծերը ծնկաչոք, արցունքը աչքին Աստուած է կանչում.
պառաւր երկաթէ կասկարան հանում շարտում է բակը ու
նզովք է կարդում. հարսներն ու աղջիկները պատի տակ շար-
ւած սուր դանակներով կարկուտ են կտրում ու նայում եր-
կինք. իսկ երկրագործը կանգնած է անձար, ձեռքը ծոցում,
շարժում է գլուխը ու անի բաշում:

գ.

Կարկուտը դադարեց, լռեց որոտը, ամպերի ճեղքից նա-
յեց արևը, երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ:
Այգեպանը վազեց իր այգին, նայեց իր շուրջը և գլխին

տւաւ: Ծառերը տերեւթափ ու ճղակոտոր, պտուղները փրու-
ւած գետնին...,

—Ափսոս իմ այգի, ափսոս իմ աշխատանք,—հեծեց նա
յոռսահատ ու աչքերը լցւեցին:

Արտատէրը վազէվազ իր արտը հասաւ: Հասկերը ջարդ-
ւած, հողին հաւասար, ցեխն ու աւազը արտումը կիտւած...
Ոտքերը թուլացան, աչքերը սկացան. քարացած մնաց:

1) Էլ ուրիշ ի՞նչ մեծ չարիքներ գիտես, որոնք ոչնչացնում են
հողագործի աշխատանքը:

2) Մարդիկ կարողանում են կուել այդ չարիքների դէմ, եւ ինչո՞վ:

62. Ճանճ

Խոնարհ ու հեզ
մի յոգնած եզ
արօրն ուսին,
ճանճը պողին,
մի իրիկուն
գալիս էր տուն:
Մին էլ ճամփին
մի ուրիշ ճանճ
էն նստածին

ասաւ. «Տօ մանչ,
էս եզան հետ
հրտեղից էտ»:
Նա՛ ցից արած
քիթը ասաց.
«Մենք որտեղից.
վարում էինք,
վարատեղից»:

Էս առակը ի՞նչ է ուզում ասել:


63. Փակւած ու ազատ

Փակւած վանդակում
սոխակ էր երգում,
նրա երգերից
լաց-ողբ էր լըսւում:

Ազատ երկնքում
ծիծառ էր թռչում
նրա երգերից
բերկրանք էր հընչում:

64. Բանտի պատուհանին

ա.



Մի մեծ քաղաքում, նեղ
ու ամուր բանտի մէջ նըս-
տած էր մի խեղճ բանտար-
կեալ: Երկար տարիներ
նստած էր նա այնտեղ,
հիւանդ ու տրտում: Ամ-
բողջ օրը կանգնում էր
նեղիկ պատուհանի առջև,
նայում էր դրսի աշխար-
հին ու կարօտով մտածում
իր սիրելիների մասին, իր
փոքրիկ զաւակների մա-
սին: Մտածում էր՝ գուցէ
վաղուց արդէն ամենքը
մոռացել են իրեն ու մե-

ռած են համարում: Մտածում էր՝ արդեօք ի՞նչ է կատար-
ւում այնտեղ, դուրսը, իր հայրենիքում:

Մի երեկոյ էլ, երբ արևը մայր էր մտնում, նա մօտե-
ցաւ պատուհանին: Պատուհանի դիմաց հանդարտ սաւառնում
էր արծիւը:

—Արծիւ, արծիւ,—կանչեց բանտարկեալը.—Արի, նստի
պատուհանիս, պատմի՛ թէ ինչ է կատարւում աշխարհում, մի
երգ երգի ինձ համար:

—Ոչ,—պատասխանեց արծիւը,—բո պատուհանը շատ է
նեղ, նստելու տեղ չը կայ ինձ համար: Ես չեմ կարող քեզ
պատմել թէ ինչ է կատարւում աշխարհում: Ես սակաւ եմ
իջնում ներքև: Ես իմ բունը շինում եմ բարձր ժայռերի ու
գարաւոր կաղնիների վրա: Ես թռչում եմ բարձր, բարձր, և
իմ երգը միայն անմահ արևն է լսում:

Ու լայն թևերը թափահարեց, վերացաւ դէպի ամպերը։
Բանտարկեալը դարձաւ ծրտերին, որոնք պատուհանի
շուրջը գնում էին գալիս։

— Ճնճողուկներ, այ ճնճողուկներ, եկէք նստեցէք պատու-
հանիս, դուք պատմեցէք՝ ինչ է կատարւում աշխարհում։ Մի
երգ երգեցէք ինձ համար։

— Ծիւ, ծիւ, մենք ժամանակ չունենք։ Մենք գործ ու-
նենք։ Մենք գնում ենք հաւաքելու շաղաքպանի թափած հա-
տիկները, — ծլւլացին ճնճողուկները ու փախան։

բ.

Այն ժամանակ թռաւ եկաւ մի գեղեցիկ թռչնակ, պտըտ-
ւեց բանտի պատուհանի առջև ու նստեց երկաթէ ձողի վրա։

— Բարով եկար, իմ սիրուն սոխակ։ Շնորհակալ եմ որ ինձ
այցելեցիր։ Պատմի՛ ի՞նչ է կատարւում աշխարհում, մի երգ
երգի ինձ համար։

— Ես կը պատմեմ քեզ, թէ ինչ է կատարւում աշխար-
հում, ես կերգեմ քեզ համար, — պատասխանեց սոխակը։

Եւ այնպէս սրտալի երգեց, որ խեղճ բանտարկեալը ու-
րախութիւնից լաց եղաւ։ Ընկաւ ծղօտի վրա, անվերջ լաց էր
լինում ու լաց էր լինում։

«Երէկ, լուսադէմին, — երգում էր սոխակը, — այնպէս գով
էր ու թարմ։ Ես թռայ իջայ քո տնակի առջև, պարտէզը,
նստեցի կանաչ թփին, բաց պատուհանի դէմ ու երգում էի։

«Նոր զարթնել էր քո փոքրիկ տղան ու հարցնում էր՝
հըր է հայրիկս, մայրիկ, երբ կը գայ հայրիկս»։

«Քո հարազատները միշտ յիշում են քեզ ու լաց են լի-
նում, քեզ շատ են կարօտել։ սպասում են քեզ ամեն օր։

«Մի վհատի. Աստուած տեսնում է, որ անմեղ ես դու. կա-
զատւես այս բանտից, կը տեսնես քո տունը, քո ընտանիքը,
ու գարձեալ կապրես, ինչպէս ապրում էիր մի ժամանակ։

«Ամառայ խաղաղ երեկոներին քո կնոջ հետ կը նստես

ձեր դռանը, երեխաներդ աղմուկով շուրջդ կը խաղան, իսկ
պարտէզում, կանաչ թփի վրա կը թառեմ ես ու կերգեմ ձեզ
համար»...

Սոխակը երգում էր, իսկ բանտարկեալը երեսնիվայր ըն-
կած իր ծղօտէ անկողնի վրա լաց էր լինում, լաց էր լինում
յուսով ու կարօտով...

Սա ի՞նչ սոխակ է, որ այդպէս բանտարկեալի սրտիցն է խօսում,
եւ ո՞րտեղ է ապրում այդ սոխակը։



65. Արտուտի երգը

Մի մարդ տեսաւ գարնան մարգում
ոնց է արտուտն անուշ երգում,

վեր ճախրելով,
ճուղղելով։

«Սա որ, ասաւ, էս վայրի տեղ
երգ է ասում էսքան շքեղ,
հապա թէ մեր տանը լինի,

ի՞նչ գրախտի ձայն կը հանի»։
Բռնեց մարգի սիրուն երգչին,
տարաւ փակեց վանդակի մէջ։
Թռչնակը լուռ նայում էր խեղճ
հեռո՛ւ, հեռո՛ւ ճոխ մարգերին։

միտն էր բերում կեանքը նախկին,
ու էն կեանքի հուր կարօտով,
նեղ վանդակում, կոտորած
սրտով,

երգում էր երգն իր գերու-
թեան։

66. Մայիսը

Ճամփայ տւէք, սա ու դաշտեր,
ճամփայ բացէք էն հիւրին,
նա բերում է ձագեր, թիթեռ,
նաշխուն օրեր մեր երկրին:

Ալան-չալան գորգի վրով
տեսէք հով է գալիս էս.
նուշիկ-մուշիկ, նազ ու թուզով,
սիրուն դէմքով ժպտերես:

Դուրս են գալի նրա առաջ
գառնուկ, թռչնիկ, մարդ, ծաղիկ,
հազար գոյնի շորեր հագած,
երգ ու տաղով գեղեցիկ:

Ճամփայ տւէք, ծառեր ու խոտ,
մեր անուշիկ էտ հիւրին,
նա մայիսն է ցօղոտ-շաղոտ,
ամիսների թագուհին:

67. Ճերմակը

ա:

Արագած սարի լանջին երամակի ամենից գեղեցիկ ձին,
ամենից կայտառ ճերմակն էր:

Երբ արշալոյսին պահապանները հեռու էին քշում ձիերը
օրաների մօտից և օդի մէջ թրխկում էին նրանց երկար մըտ-
րակները, ամբողջ երամակը սլանում էր լայնատարած մարգա-
գետնով. ու ամենից առաջ սլանում էր ճերմակը նետի պէս,
ոտները գետնից կտրած, փարթամ բաշն ու ճոխ պոչը տւած

բամուն: Սլանում ու յանկարծ կանգ էր առնում, բարակ ոտ-
ներով գետինը փորում, ականջները սրում, լայն կրծքով խո-
րը ներս ծծում առաւօտեան թարմ օդը և ուրախ խրխնջում
արևի առաջին շողերի հանդէպ:

Նրա ողորկ մազը պողպատի պէս փայլւում էր արևի ոս-
կեգոյն ճառագայթների տակ և աչքերը վառւում էին ազա-
տութեան բոցերով:

Մէկ էլ ծառս էր լինում, թափէթափ էր տալիս լայն ճա-
կատը, ցատկում ընկերներից հեռու ու վստահ առանձին ա-
րածում: Ոչ գայլը, ոչ էլ մի ուրիշ գազան չէր համարձակ-
ւում մօտենայ. նրա քացին պառկեցնում էր յանդուգնին
տեղն ու տեղը:



Եւ ուժեղանում էր ու օրէցօր գեղեցկանում ճերմակը,
Արագածի դալար բարձունքներում, ազատ ու երջանիկ:

բ.

Մի օր մի խումբ ձիաւորներ մտան երամակը ու աշխա-
տում էին մօտենան ճերմակին: Մէկ թռիչքով խոյս տւաւ
նրանցից. ձիաւորները ընկան ետևիցը. ճերմակը քամու պէս
սլանում էր: Ճկուն մարմինը ծածկւեց սպիտակ փրփուրով.
խսկ ետևից շարունակ լսում էր հետապնդողների սմբակների
դոփիւնը. Հետզհետէ դանդաղում էր նրա վազքը ու մի ձիա-
ւոր արդէն հասնելու վրա էր: Ճերմակը յանկարծ մի այն-
պիսի բացի հասցրեց նրան, որ մարդն ու ձին միասին գլոր-
ւեցին գետին: Հպարտ, իր յաղթութեամբ զմայլւած, վերբարձ-

րացրեց Ճերմակը իր գեղեցիկ գլուխը: Եւ հէնց այդ րոպէին պարանի մի կլոր օղակ օդի մէջ վզգաց ու գրկեց նրա երկար վիզը:

Նժոյգը փորձում էր փախչի, թափ էր տալիս պարանը վզից. օդի մէջ քացի էր տեղում, բայց քանի աւելի էր ճգնում պարանը կտրի, այնքան աւելի ու աւելի ուժեղ էր թուել սեղմում նրա կոկորդը ու խեղդում: Ճերմակի շունչը կտրում էր, կուրծքը փքւում, աչքերը լցւեցին արիւնով. ազատ սարերը, պայծառ աշխարհը մթնեց գլխին, և նա ուժասպառ չորեց...

Իսկոյն նրան շրջապատեցին, կապեր ձգեցին նրա դնչին, բերանը մի կտոր երկաթ դրին ու պարանը թուլացրին: Երբ Ճերմակը նորից վեր թռաւ, մի մարդ ամուր բռնել էր սանձի ծայրից և փաղաքշելով շոյում էր նրա ճակատը, դունչը, լայնացած ունգները:

Ճերմակը սաստիկ յոգնած էր ու հեռում էր. իսկ երկաթը սեղմում էր լեզուն, ցաւեցնում: Բաւական ժամանակ մանածեցին նրան, տարան գետը ջրելու, ապա ոտները բխովեցին, հանեցին սանձը ու թողին, որ արածի:

Ճերմակը գլուխը դարձրեց հեռուն, ազատ արածող իր ընկերներին, կանչում էր նրանց ու խրխնջում այնպէս կարօտով, այնպէս սրտառուչ...

Գ.

Ամեն օր գալիս էր մի մարդ, սանձը գցում նրա բերանը ու երկար պարանի ծայրից բռնած՝ ստիպում էր Ճերմակին որ պտոյտ-պտոյտ շրջան անի, չարչարում էր, յոգնեցնում, յետոյ շոյում, փաղաքշում, ջրում, նորից բխովում և թողնում որ արածի:

Մէկ անգամ էլ եկաւ մարդը, ձիու մէջքին մի ծանր բան գցեց ու փորից կապեց: Ճերմակը հետաքրքրութեամբ նայում էր թէ ինչ պիտի լինի. յանկարծ մարդը թռաւ, հեծաւ թամբին, ոտներով ամուր հուպ տւաւ Ճերմակի կողերը

ու քաշեց սանձը...

Ճերմակը կատաղեց: Նրա սիրտը լցւեց մի անզուսպ ցանկութեամբ. ուզում էր կտրտի, պատառ-պատառ անի գլխի, բերնի, փորի կապանքները, վայր գցի մէջքի ծանրութիւնը, ազատի ու փախչի ազատ մարգագետինները, գնայ խառնի իր ընկերների երջանիկ երամակին:

Ծառ-ծառ էր լինում, քացի էր տեղում, ամբողջ մարմինը թափ էր տալիս, ատամներով փորձում էր հեծնողի ոտները կծի, ետևի սմբակներով աշխատում էր փորի գօտին արձակի...

Բայց մարդը ամուր կպած էր նրա մէջքին, սեղմում էր կողերը, ձիգ բաշում էր սանձը, պատռում շրթունքները, ցաւեցնում լեզուն...

Այն ժամանակ Ճերմակը խելակորոյս առաջ նետեց, սլացաւ արագ, ինչպէս այն երջանիկ օրերին, երբ սլանում էր ընկերների հետ ազատ երամակում. սլացաւ՝ գլուխը կորցրած, խրտնած, սարսափահար...

Դ.

Անցան օրեր, տարիներ, ազատասէր Ճերմակը, էն Արագածի պարծանք Ճերմակը, այժմ սանձած, պայտած, թամբած, հանգիստ կանգնած էր մութ ախոռում. իր բարի աչքերը շարունակ դարձնում էր դէպի դուռը և անհամբեր սպասում է տիրոջ երևալուն:

Եւ հեռից լսում է թէ չէ տիրոջ ոտնաձայնը, ազնիւ Նժոյգը բարձր խրխնջում է ուրախութիւնից, խրխնջում է ու կանչում, կանչում է որ գայ, իրեն շոյի, փաղաքշի ու հանի դուռս, լոյս աշխարհը...

1) Չին ինչո՞ւ է ուզում ազատ լինել: Մարդն ինչո՞ւ է ուզում նրան սանձել:

2) Մարդիկ ինչպէ՞ս են անւանում ազատ կենդանիներին, ինչպէ՞ս են անւանում հպատակ կենդանիներին:

68. Վարդը



Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
տեսաւ մի վարդ դաշտի միջին.
վարդը տեսաւ, ուրախացաւ,
մօտիկ վազեց սիրուն վարդին.
սիրուն վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին.

Տղան ասաւ. — «Քեզ կը պոկեմ,
այ կարմիր վարդ դաշտի միջին»:
Վարդը ասաւ. — Տես, կը ծակեմ,
որ չը մոռնաս փըշոտ վարդին.
փըշոտ վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին.

Ու անհամբեր տղան պոկեց,
պոկեց վարդը դաշտի միջին.
փուշը նըրա ձեռը ծակեց,
բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.
քնքուշ վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին.

Փուշն ինչի համար է:

69. Թաւառագ մեղուն

ա.

Անտառի խորքում մի հսկայ ծառի փշակում մեղունները
շինել էին իրենց փեթակը:

Փեթակի բազմաթիւ փոքրիկ խցիկները, որոնք մօմից էին
ձուլւած, բոլորն էլ լիքն էին: Նրանց մէջ կամ ոսկի մեղրն էր
պահւած, կամ սպիտակ ձկերն էին, կամ թրթուրները իրենց

պատեանների մէջ փաթաթւած:

Այդ պատեաններից մէկի միջինն էր ահա, որ դուրս սո-
ղաց մանուկ մեղուն ու գլուխը հանեց բճիճից:

Իսկոյն նրա դէմը վազեց դայեակ մեղուն:

— Ո՛ր, բարեւ, փոքրիկս. գալուստդ բարի. էտ ինչ սիրուն
ես, ինչ թաւ մագեր ունես, եկ անունդ դնենք Թաւամագ:

Ասաւ ու սկսեց լիզել նրան. մաքրեց, յարդարեց ու ա-
ռատ կերակրեց մօտի մեղրի պաշարից: Եւ երբ Թաւամագը
լաւ կշտացաւ, դայեակը տարաւ նրան փեթակի դուռը:

Աստուած իմ, ինչ լոյս էր, ինչ պայծառ: Թաւամագը իս-
կոյն բացաւ թևերը ու թռաւ թէ չէ՝ տեսաւ իր շուրջը կա-
նաչ, անվերջ դաշտեր, իսկ վերևը մաքուր, կապոյտ երկինք.
և ինչ անուշ բուրում էին ծառերն ու ծաղիկները:

Մեղուն սլացաւ և հրճանքի պտոյտներ էր անում օդի
մէջ:

բ.

— Է՛յ, բարեկամ, ինչ բանի ես այդտեղ, — հարցրեց պա-
ռաւ մեղուն:

— Զարճանում եմ, — պատասխանեց Թաւամագը:

— Զարճանում ես. թէ Աստուածդ սիրես, —

հեգնեց պառաւը: — Բոլորս այժմ աշխատում ենք,
ինչ քէֆի ժամանակ է. այդպէս առոյգ, այդպէս
առողջ. մագերդ էլ այդպէս թաւ, ծաղկի փոշին
իսկոյն կը կպչի: Թո՛ւր ետեիցս. ես քեզ կը սովո-
րեցնեմ:

Մեծ մեղուն այնպէս արագ էր թռչում, որ
Թաւամագը հազիւ էր կարողանում ետեից հասնի:

Մեծ մեղուն շիտակ մտաւ մի ահագին կա-
պոյտ ծաղկի բաժակը, սկսեց ծծել յատակի մեղ-
րը. քսեց ետևի ոտներին ու գնաց ծաղկի դեղին
փոշու ամանների մօտ, վերցնում էր դեղին փո-
շին ու քսում մեղրոտ ոտներին:



Թաւամազը նոյնն էր անում: Յանկարծ որ չընայեց իրեն ու պառաւ մեղին, ծիծաղը պահել չը կարողացաւ: Երկունս էլ կարծես դեղին վարտիքներ էին հագել:

—Հը, հաւանեցիր վարտիքդ,—ասաւ մեծ մեղուն.—դէ, գնանք տուն:

Հաղիւ էին փեթակ մտել, որ փեթակի բոլոր դայեակներն ու բանւորները վրա թափեցին:

—Վայ, պահապաններ, օգնեցէք, վարտիքս կերան, վարտիքս:

—Բան չը կայ, բաղցած են,—ասաւ մեծ մեղուն.—Դէ, լաւ, բաւական է,—դարձաւ միւսներին և առաջնորդեց Թաւամազին շտեմարանը և ցոյց տաւ, թէ ինչպէս պէտք է ածի մեղրը մոմէ բճիճների մէջ:

Ու Թաւամազը դարձաւ մեղր հաւաքող: Յոգնեցնող աշխատանք էր, ճիշտ է, բայց աշխատանք էր. և ինչ լաւ ու կարևոր բան էր այդ աշխատանք ասւածը:

Գ.

Այսպէս էլ մի անգամ, երբ Թաւամազը բեռնաւորւած դաշտից տուն էր դառնում, տեսաւ փեթակի շուրջը մի անսովոր իրարանցում. լսւում էր սաստիկ բզզոց ու մի սարսափելի գոռոց:



Մօտ եկաւ ու զարմացաւ, որ բոլոր մեղունները դուրս էին թափւել ու պտոյաներ էին անում փեթակի շուրջը: Այնպէս էին կատաղել ու իրար խառնել, որ ոչինչ չէր կարելի հասկանալ: Այսքանը պարզ էր, որ մի թշնամի

էր վրա տւել: Եւ ինչ թշնամի. ինքը արջը:

Ետևի թաթերի վրա կանգնած, նա մըթմըթալով ման էր

գալիս ծառի շուրջը, իսկ առջևի թաթերով աշխատում էր հասնի մեղրի պահեստին:

Յանկարծ քաշեց, պոկեց ծառի կեղևի մի կտորը, որտեղից դուրս թափւեցին ներսը մնացած մեղունները: Արջը մի թաթով պաշտպանւում էր նրանց յուսահատ յարձակումից, իսկ միւս թաթը կոխում էր փեթակի խորքը, ուր մեղրի շտեմարանն էր, հանում էր դուրս ու ագահաբար կուլ տալիս անուշ ոսկեգոյն մեղրը:

Այս որ տեսաւ Թաւամազը, էլ իրեն զսպել չըկարողացաւ, կատաղած նետեց արջի վրա ու խայթեց ուղիղ աչքը: Արջը մոնչաց սաստիկ ցաւից, թողեց փեթակը ու փախաւ:

Բայց խեղճ Թաւամազը... իր զայրոյթից այնպէս խորն էր խայթել, որ խայթոցը մնացել էր աչքի մէջ: Խեղճը յանկարծ թուլացաւ, ընկաւ գետին իր նման նահատակների մօտ ու աչքերը յաւիտեան փակեց:

Բայց մեռնելիս նա չէր զղշում իր արածի վրա. չէ որ փեթակի ազատութեան համար էր գոհել իր կեանքը, իր տան համար, իր հայրենիքի:

Չէ որ՝ «ամենքը մէկի համար, մէկը ամենքի»:

Բացի փեթակից ուրիշ ի՞նչ տեղ գիտես, ուր «ամենքը մէկի համար են ու մէկը ամենքի»:

70. Գարունն իրիկուն

Լուսնակն անուշ,	հովն անուշ,	ծովային հովն է անուշ:
շինականի բունն անուշ,		Դաշտեր ձորեր մընջել են,
ծագեց լուսնակն երկնուց,		Ջրեր գլգլան, ձէնն անուշ:
հովի սրինգն էր անուշ:		հաւքեր թռան իրենց բուն,
Հօտաղն եգներն կարածէ,		բլթուլի տաղն էր անուշ:
մաճկալ պառկել, բունն անուշ,		անմահական հոտ բուրէր,
զըզըզոլուն բամին կը փրչէ,		բեաֆուր վարդի հոտն անուշ:

71. Մուտքիկ որսկանը

Հօրս կնուներով, մօրս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով հրացանով որսի գնացինք։ Հաղին էր, Հիւղին էր, Չատին էր, Մատին էր, հէրս էր, ես էի. գնացինք որսի...

Սարեր, ձորեր շիտակ գնացինք. որտեղ որս կար՝ սուս ու փուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թէ բիշ, մին էլ տեսներք երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մէջ էլ իսկի ջուր չը կայ։

Մին էլ ըհը՝ մտիկ տանք որ էս անջուր լճում լողում են, ճըշում երեք հատ սպիտակ բադ. երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չէ։

—Հաղի, տո՛ւր հա, տո՛ւր։

Թէ՛ հրացան չունեմ։

—Հիւղի, տո՛ւր հա, տո՛ւր։

Թէ՛ ես էլ չունեմ։

—Չատի... Մատի...

—Մենք էլ չունենք։

—Բա ի՞նչ անենք։

Հօրս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փէտ կար. երեսն առաւ, նշան դրաւ, մին էլ՝ տրաք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փուկեց էսպէս, —ամեն թեր հինգ գազ ու կէս...

—Հաղի, դանակ...

—Թէ՛ դանակ չունեմ։

—Հիւղի, դու...

—Ես էլ չունեմ։

—Չատի... Մատի...

—Մենք էլ չունենք։

—Բա ի՞նչ անենք։

Հէրս էլ ունի, բերան չունի։

էս անբերան դանակը քաշեցինք. Հաղին մորթեց, չը կարաց։ Հիւղին մորթեց, չը կարաց։ Չատին չը կարաց, Մատին չը կարաց, հէրս էլ չը կարաց. ես քաշեցի մորթեցի։

Մորթեցի, վէր գցեցի. բադ մի ասիլ—մի գոմէշ ասա։ Հաղին շալակեց, չը կարաց։ Հիւղին շալակեց, չը կարաց։ Չատին չը կարաց, Մատին չը կարաց, հէրս էլ չը կարաց, ես շալակեցի։ Շալակեցի, գնացինք։

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ. մին էլ տեսներք երեք գեղ. երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շէնլիկ չը կայ։ էս անշէն գեղում դէս ման եկանք, դէն ման եկանք, մի տուն գտանք, մէջը երեք պառաւ. երկուսը մեռած, մընի բերնումն էլ շունչ չը կայ։

—Տղերք, ասինք, եկէք բադով փլաւ անենք։

էս անշունչ պառաւը գնաց, դէս ման եկաւ, դէն ման եկաւ, կէս բրինձ գտաւ, երեք պղինձ. երկուսը ծակ, մինն էլ իսկի տակ չունի։

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մէջը ածինք բադն ու բրինձը, անկրակ եփեցինք։ Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը։

Որսից եկած սոված մարդիկ, վրա եկանք, կերանք, կերանք, ոչ աչքներս բան տեսաւ, ոչ բերաններս բան մտաւ։

Ի՞նչպէս կը պատմէր իսկական որսկանը։

72. Գորտն ու ագռաւը

Գորտն ընկաւ ցամաք առուն,
կըռկըռում էր ու կըռկըռում։

—Բիշ կըռկըռո՛ւ, այ գորտքեռի,
աշուն կը գայ՝ ջուր կը բերի,—
յոյս էր տալիս մի ծեր ագռաւ։
—է՛, ի՞նչ անեմ, սիրտս վառաւ,
մինչև ցամաք առուն ջուր գայ,
գորտի աչքն էլ հօ գո՛ւրս կը գայ։

Ա. ու ա. ծ՝ էշ, մի սատկի, եօնջա կը գայ։

73. Ծաղիկների երեկոյքը

ա.



մարգարիտ

Գարունը իր մեկնելուց առաջ ուղեց իր հրաժեշտի երեկոյթը տալ այս գիշեր ծաղիկներին:

Կանչւած են սոխակները նւագելու և լուսատրտիկները ճրագալոյցի: Կանչւած է նաև զեփիւռը՝ պարերը կառավարելու:

Երեկոյթին հրաւիրւած են անտառի բոլոր ծաղիկները, բոլորն էլ անպատճառ իրենց ամենասիրուն ու գունագեղ հագուստներով:

Եկել է սուսամբարը կանաչ շրջագգեստը հագին. մարգարիտները սիպտակ պսակներով իրենց դեղին գլուխներին:

Եկել են բոժոժները, սպիտակ, աշխուժ ու զլարթ. եկել է սիրի-սիրին

իր կարմրաւուն գանգուր՝ գլուխը ուղիղ պահած:

Նղածաղիկն էլ է ներկայ, դեղնագլուխ, փոքրահասակ. այլ և անուշահոտ կապուտաչւի մանուշակները, որոնք խմբով մի թփի տակ քաշւած փսփսում էին իրար հետ:

Հապա զանազանները իրենց գոյնզգոյն թաւիշ գլխաւրկներով ու վզները նազանքով թեքած. հապա հպարտ, ցից

մեխակը՝ ատամնաւոր պսակը գլխին, կարմիր կամ ճերմակ:

Էս սպիտակ եղինջը՝ փարթամ տերևների ծոցում, էլ կապոյտ անանուխը, էլ



բոժոժիկ



սիրի-սիրի



մանուշակ



մեխակ

դեղին պուպուն, որից շուտով սատանի կառքերն էին ծնւելու. էլ ո՞րն ասեմ, բոլոր անտառի ծաղիկները, բոլորն էլ հրաւիրւած էին զարնան այս գիշերւայ երեկոյթին:

բ.

Հէնց որ ահագին կաղնու ետեից լուսինն երևաց ու նրա արծաթի ճառագայթները ընկան փոքրիկ մարգագետնի վրա, բոլոր հրաւիրւածների դէմքերը զլարթացան:

Իսկոյն լսեց սոխակների նւագախումբը, մինչ ծղրիտները ձայն էին պահում:

Թեթև զեփիւռը դուրս պրծաւ անտառից ու վազ տւաւ մարգագետնով. բոլորը շնորհալի ողջունեցին իրար, ու պարերը սկսեցին:

Մի տեղ շրջան կապած եայլի են բռնել, պարում են պարում ու միշտ նոյն տեղում. մէկ էլ եայլու շրջանը քանդում, և սկսում է կենտապարը:

Տեսնելու բան է, ինչպէս նարգիզը իր երկայն վիզը պշրանքով թեքած իր գլուխն է ծռմում, թեթև ու սիրուն, և ամբողջ ձողունը դողում է յուզումից:



զանազան



անանուխ

Իսկ ինչպէս խենթ-խենթ թրթռում էին կապոյտ ու ճերմակ զանգակները՝ շարւած իրենց երկար-բարակ ձողունին: Հապա շուշանը, ինչպէս նազանքով շարժում էր կամաց իր քնքուշ ճերմակ գլուխը:

Ինչ եռանդով պարում էին բոլորը:

Կապուտիկ պատատուկը թփերի ու ոստերի վրա էր մագլցել, որ աւելի լաւ



սուսու

տեսնի: Մինչ ցածուժ բազմատեսակ խոտերն ու սէզերը ուրախութիւնից ծափէին տալիս:

գ.

Յանկարծ նւագը լռեց. բամին կանգ առաւ ու պարերը դադար առին:

Եւ հնչեց սոխակի քաղցր ու աննման երգը: Երգում էր մէկը: Երգում էր ու գովում՝ դարնան գովքը ու անտառների ծառ ու ծաղկի գեղեցկութիւնը:

Ծաղիկները յափշտակւած, անշարժ, անշշուճ ալանջ են դնում: Ականջ է դնում ամբողջ անտառը, կարծես քարացած:

Մէկ էլ գեփիւռը վազում գալիս է նորից. նորից սկսում են պարերն ու քշփրջոցը:

Ծաղիկները գլուխները իրարու հակած՝ խօսում են իրենց անցած կեանքից, խօսում են իրենց զաւակներից, որոնք շուտով գալու էին:



դանգակ

Գիշերը անցնում էր աննկատելի:

Ահա լուսինը հանգիստ իջաւ ծառերի ետեր ու ծածկւեց:

Մութը պատեց մարգագետինը. բամին յոգնած՝ թողեց ու բաշւեց: Բոլոր ծաղիկները նոյնպէս յոգնած պարից ու զրոյցից կախեցին իրենց ծանրացած գը-



նարգիզ



պատառուկ

լուխները ու բընեցին:

Անտառի խորքից լսում է միայն, հեռուն, սոխակի մեղմ ու քնքուշ երգը. կարծես օրօր է ասում...



շուշան

74. Գիշեր

Ննջել են բոլոր ծաղկունքը մուշ-մուշ անքուն հովերի սրինգովն անուշ, ննջել է արօտ, ննջել է նոճին, ոտնուծոց արել բլուրներն հեռուն, հանգիստ են հիմա հրական ու ճրճին, երազում թաղւած խնդում է առուն:

75. Արիասիրտ քաւորը

ա.

Սարսափելի է գագերի պայթիւնը ածխահանքերում. պակաս սարսափելի չէ հեղեղումը:

Ստորերկրեայ աղբիւրները հետզհետէ մաշում ծակում են ածխահորերի պատերը և յանկարծ ներս խուժում ու ողողում անցքերն ու խուցերը: Եւ եթէ աշխատանքի ժամանակ է, ուր փախչեն անօգնական ածխահատները:

Սրանից մօտ հարիւր տարի առաջ Բելգիայի Լիէժ քաղաքի մօտ անասնոցը մի այսպիսի դէպք պատահեց:



Ստորերկրեայ ջուրը հաւաքել էր վաղուց թողած հորերում, յանկարծ պատռել էր պատերը ու ներս լցել հարեան բանուկ անցքերը, որտեղ աշխատում էին մօտ հարիւր հոգի: Մի քանիսը իսկոյն շտապեցին դէպի այն հորը, որտեղով անասնոցը վեր էին բարձրացնում, և թափւեցին նստեցին կթոցների մէջ: Մերենան իսկոյն կթոցները քաշեց վեր, բայց կթոցները նորից իջեցնել անկարելի եղաւ, որ միւսներին էլ հանեն. ջուրը արդէն կտրել էր ճամփան:

Տասներկու բանուր գլուխները կորցրած վազեցին առաջ ու ջրի հեղեղի մէջ խեղդւեցին: Իսկ եօթանասունը չորս հոգի, որոնց մէջ էին նաև տասներկու մանուկներ, փակւած մնացին մի հեռաւոր անցքում:

Դրանց թւում և՛ աւագ բանուրը, մի փորձւած ու հմուտ անասնաբան:

Բ.

Փորձանքի սկզբին նա ամենից մօտ էր գտնուում կթոցներին և կարող էր թռչել նստել կթոցն ու ելնել վեր: Բայց նա չուզեց ընկերներին թողնել: Իրաւ է, այնտեղ, վերնում, նրան սպասում էր կինը վեց որդիների հետ, բայց այդ վայրկեանին նրա փորձառութիւնն ու օգնութիւնը աւելի հարկաւոր էր իր ընկերներին: Նա կթոցի մէջ չը նստեցրեց նոյնիսկ

իր տղին, որին սիրով հետները կը վերցնէին վերև ելնող բանուրները: Նա չուզեց օգտուել այն բանից, որ ինքը աւագ է, չէր ուզում իր զաւակի մասին աւելի մտածած լինի, քան մնացած միւս մանուկների:

Նա արագ հարցրեց իր տղին. — Կը մնաս ինձ հետ:

— Այո, — պատասխանեց տղան ու սեղմւեց հօրը:

Այն ժամանակ բանուրների աւագը զրկեց մի ուրիշ տղի ու նստեցրեց կթոցի մէջ, որը արդէն վեր էր բարձրանում:

Իսկ ինքը դարձաւ ու յայտարարեց ընկերներին.

— Նս բոլորիդ կը փրկեմ, կամ կը մեռնեմ ձեզ հետ:

Անասնաբանները ոգևորւած նրա պատուէրով, առան իրենց քլունգները և սկսեցին ամբողջ ուժով աշխատել, որ ճամփայ բանան դէպի ջրի հակառակ կողմը:

Գ.

Գիշեր ցերեկ քանդում էին հողը. հինգ օր անցաւ այդ լարւած աշխատանքի մէջ: Երբ անասնաբանների կէսը յոգնած փրկուում էր գետին քնելու, միւս կէսը շարունակում էր գործը:

Իսկ աւագը աչքը չէր խփում ու ղեկավարում էր աշխատութիւնները:

Սիրտ էր տալիս, բաշաւերում, ուշքի էր բերում ընկերներին, երբ նրանք յուսահատութիւնից քիչ էր մնում որ խելագարւէին:

Ամենահամարձակները սարսափից ու սովից խելքները կորցնում էին: Քաղցը յագեցնելու համար ուտում էին գօտիների կաշին, կրծում էին փայտի կտորները: Մի փոքրիկ մօմի կտորի համար սոսկալի կռիւ ընկաւ:

Աւագը մի րոպէ չէր հեռանում ընկերների մօտից ու հրակում էր նրանց ամեն մի խօսքին:

Մի անգամ նորից, անասնաբաններից երկուսը իրար վրա յարձակել ու տալիս էին իրար. երբ աւագը միջամտեց որ հանգստացնէ, յանկարծ մի անասնաբան ընդհատեց նրան ասելով.

—Բան չունես, թող կուեն. եթէ մէկը միւսին սպանի, աւելի լաւ, կուտենք նրան:

Այն ժամանակ աւագը կանգնեց կուռղների մէջտեղ և կուրծքը մերկացնելով՝ գոչեց.

—Ով ձեռք կը բարձրացնի իր ընկերոջ վրա, հարւածը թող նախ իմ կրծքին հասցնի:

Նրա աչքերը վառուում էին չը տեսնւած կրակով. ձայնը որոտի պէս հնչում էր անաւոր կամարների տակ: Կուռղները ամաչեցին ու սկսեցին վերսկսել աշխատանքը:

Դ.

Երկրորդ օրը պատահմամբ մի ծակ բաց արին դէպի ածխաշերտերի մի անցք, որտեղից մահաբեր հանքային գազեր էին դուրս գալիս: Բաւական էր գազը բռնկէր, որ պայթիւնից բոլորն էլ կորչէին: Բանւորների աւագը իսկոյն պատուիրեց ծակը խցեն, իսկ երկու երիտասարդ ածխահատներ ձայն էին տալիս այն կողմից:

—Ինչո՞ւ ես խցում. աւելի լաւ է լապտերը մօտեցնենք գազին, թող պայթի, գոնէ մէկ անգամից սատկենք, պրծնի:

Բայց նա զսպում էր ընկերների յուսահատութիւնը իր սառնասրտութեամբ և արիութեամբ:

Հինգերորդ օրը լապտերները հանգան մաքուր օդի պակասութիւնից. ահռելի խաւարը պաշարեց բոլորին:

Մի քանիսը գրեթէ ցնորւել էին սարսափից. սկսել էին հաւատացնել թէ իրենց դիտմամբ էին սոված թողնուում: Ըմբոստանում էին իրենց աւագի դէմ, պահանջելով որ հաց ճարի իրենց համար, կարծես ունէր ու չէր տալիս:

Վերջին ուժերը սպառւում էին. մի քանիսն այն աստիճան թուլացել էին, որ մեռնելու վրա էին: Աւագը խրախուսում էր, աղաչում, որ աշխատեն, խոստանում էր մօտալուտ փրկութիւն, և ինքն էլ անխոնջ բանում էր՝ քլուկաբ ձեռքին:

Ե.

Վեցերորդ օրն էր, որ հակառակ կողմից լսեցին զարկեր:

Դրսից ընկերները դէպի նրանց անցք էին փորում: Այդ ձայները նոր ուժ ներշնչեցին փակւածներին և երբ երկու անցքերը իրար հանդիպեցին ու թարմ օդի հոսանքը յանկարծ դիպաւ դժբախտների երեսին, ուրախութեան ճիչը դուրս թռաւ բոլորի կրծքից ու շատերը ուշաթափ ընկան գետին: Տանջւած բանտարկեալները սկսեցին լոյս աշխարհ դուրս գալ. մի քանիսը այնքան թոյլ էին, որ չէին կարողանում իրենք շարժւեն: Մուտքի մօտ սպասում էր ածխահատների ամբողջ ազգաբնակչութիւնը:

Բոլոր եօթանասուն և չորս հոգին էլ փրկւած էին: Աւագը մնաց գետնի տակ, մինչև որ բոլոր ընկերները դուրս ելան: Նրա տղին հանել էին ամենից առաջ, միւս մանուկների հետ:

Նա դուրս եկաւ վերջինը: Մուտքի մօտ սպասում էր կինը երեխաների հետ: Արտասուալի աչքերով, երջանկութիւնից թրթռուն, նա ընկաւ ամուսնու գիրկը, մինչ մանուկները կախւում էին վզից ու թեւերից...

- 1) Ռ՞ն է այստեղ աւագ բանւորի ամենաազնիւ վարմունքը:
- 2) Ռ՞ն է այդ բանւորի ամենամեծ հպարտութիւնը:
- 3) Իսկ որդու վարմունքին ի՞նչ անուն կը տաս:

76. Անբախտ վաճառականներ

ա.

Մի օր Զըղշիկն ու Ճայն եկան թէ՛ եկ գառնանք վաճառական: Ասին ու խելք խելքի տըւին, հաւան կացան, պայման դրին. բայց՝ արի տես... որ փող չունեն: Շատ միտք արին թէ ինչ անեն. վերջը եկան փըշի մօտը, ընկան նըրա ձեռն ու ոտը, ու մուրհակով, շահով կարգով,

փող վեր առան բաւականին,
 ինչքան պէտք էր իրենց բանին:
 Ձիղջը մընաց, տընպահ դառաւ,
 Ճայը բոլոր փողերն առաւ,
 առաւ, նըստեց նաւի միջին,
 հասաւ Մըսըր, Ձինուժաչին,
 Փարս, Հընդըստան,
 Արաբըստան...
 Էլ թանկագին բիրմանի շալ,
 Էլ մարգարիտ, զըմրուխտ ու լալ,
 հընդու խուրմա, փըստա, բադամ,
 և... հը մէկի անուէնը տամ:
 ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,
 բօլ-բօլ առաւ, նաւը լըցրեց:
 նաւը լըցրեց հազար բարով
 ու ետ՝ եկած ճանապարհով
 ուրախ-ուրախ տունն էր գալի:
 Ճամփին ծովում սարսափելի
 ալեկոծում, մըրրիկ ելաւ,
 երկինք հանեց ալիք ու նաւ,
 երկինք հանեց, թողեց ներքե,
 ողջ կըլանեց անդունդը սե:
 Միայն սովաբեար Ճայը էնօր
 ազատեցաւ մերկ ու տըկլոր:
 Ազատեցաւ, փառք իր Աստծուն,
 բայց ի՞նչ սրտով խեղճը գայ տուն,
 գայ՝ ի՞նչ ասի պարտքատէրին,
 հնց երևայ իր ընկերին...

Բ.

Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
 աչքը ճամփին, վիզը ծըռած,
 համրում է օրն օրի վըրա

Թէ՛ մեր Ճայը երբ պիտի գայ...
 Երկար նայեց,
 ճամփէն պահեց,
 շատ լաւ ու վատ երազ տեսաւ,
 մինչև պարտքի օրը հասաւ,
 ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
 Փուշը տընկեց կըտեր ծէրին:
 «Է՛յ, բարեկամ, ի՞նչ բանի էք.
 Էլ չէք ասում թէ պարտք ունէք...
 Գործ բըռնեցիք, հօրս ողորմի,
 ետ տւէք դէ փողըս հիմի:
 Թուղթ էք տըւել՝ վախտ իմացէք,
 ամօթ, աբուռ, ահ ունեցէք...
 Թալան հօ չի՞... մեղք եմ ես էլ...
 Ախպէր, էսպէս բան էք տեսել.
 ոսկի տայ մարդ իրեն ձեռով,
 չը կարենայ առնիլ զօռով...
 Սրանից ետը դէ արի դու
 ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»
 Գողգոթում էր ողջ թառակում,
 հայհոյում էր, խայտառակում:
 ամեն մարդ էլ, ով որ լըսում,
 հէնց մի բերան էն էր ասում:
 —Ա՛յ ամօթ ձեզ, Ձըղջիկ ու Ճայ.
 ի՞նչ ենք լըսում, վայ, վայ, վայ.
 անուններդ վաճառական
 ու էս տեսակ խայտառակ բան...
 Վայ, վայ, վայ վայ, Ձըղջիկ ու Ճայ...

Գ.

Ձըղջիկն էսպէս միշտ լսելիս
 սիրտը բերնով դուրս էր գալիս:
 Բարկանում էր իրեն մըտքում,

անիծում էր, չըբռնում, թրբում.
«Այ բո տունը բանդւի, ա ծայ,
այ դու դառնաս Գրորողի փայ.
էս ի՞նչ բան էր որ դու արիր.
գլուխս էս ի՞նչ փորձանք բերիր...»
Ու խընդրում էր ամեն անգամ.

—Մի նեղանայ, Փուշ բարեկամ,
շատ ես կացել,
կաց մի քիչ էլ.

Թուղթ ստացայ երեկ ծայից,
թէ՛ դուրս եկայ Արաբիայից.
որտեղ որ է՝ շուտով կը գայ,
դեռ մի բան էլ աւել կը տայ...

—Ես չեմ ուզում աւելն, ախպէր,
կանխիկ համրած իմ փողը բեր.

շահ էք գրրել,

վախտ էք գրրել,

ինչ գրրած է էն եմ ասում,
ձեզնից աւել բան չեմ ուզում:

—Չէ, աղա Փուշ,

թէ վաղ թէ ուշ,

փողն իր կարգին, շահն իր կարգին,
իսկ պատիւըդ .. ես իմ հոգին...

Ես յոյս ունիմ... ասենք պարտ ենք...

բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...

Չէ, բո արածն ով մոռանայ,

իր Աստուածն էլ նա կուրանայ...

դ.

Խեղճը էսպէս լեզու ածաւ,
շատ յոյս տրւաւ, շատ խոստացաւ.
շատ սուտ ասաւ պարտքատէրին,
շատ ըսպասեց իր ընկերին.

բայց ընկերը չը կայ, չը կայ:
«էս ի՞նչ ցաւ էր, Աստուած վըկայ,
ինչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,
որ խայտառակ լինեմ վերջը...
ի՞նչպէս պըրծնեմ էս կըրակից,
էս ահագին պարտքի տակից.

էլ ի՞նչ ասեմ,

հնց ըսպասեմ.

նա երբ կը գայ, ի՞նչ իմանամ,

հը ջուրն ընկնեմ... հւմ մօտ գընամ...»

Շատ միտք արաւ,

դէս դէն թրուաւ.

ինչ որ ունէր տանը, հագին,

ողջ հաւաքեց տրւաւ պարտքին,

ցիփ մերկացաւ,—

էլ չը պըծաւ:

Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,

թկեր առաւ, ինքն էլ փախաւ,

փախաւ կորաւ, որ էլ էնպէս

դատարկ, սընանկ ու սկերես,

ոչ պատահի պարտքատէրին,

ոչ երևայ լոյս աշխարհին:

ե.

Այնուհետեւ, իր նամուսից,

Չըղջիկը մերկ, փախած լուսից,

ցերեկները դէս դէն թաքչում,

գիշերն է միշտ մըթնում թըռչում,

որ չերևայ իր թայ-թուշին,

ոչ պարտքատէր աղա-Փուշին:

Ճայն էլ ծովում,

ճըշում, ծըւում,

ջուրն է մըտնում,




դուրս է պրծնում,
թե՛ն տալիս,
ման է գալիս,

թէ մի գուցէ բախտը բանի,
կորուստն էլ ետ ջրից հանի:
Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,
ճանկուատամ սուր պատրաստած,
կողքովն ով որ անց է կենում,
քաշում է փէշն ու հարցընում,
թէ չե՞ն տեսել մէկն ու մէկին,
էն լիրբ Ճային կամ ԶըղՂիկին:
Ու էն օրից մինչև օրս էլ
մէկը մէկին դեռ չեն տեսել:



77. Մայրը



Մի գարնան իրիկուն դռանը
նստած զրոյց էինք անում,
երբ այս դէպքը պատահեց:
Եւ այս դէպքից յետոյ ես չեմ
մոռանում էն գարնան իրի-
կունը:

Ծիծեռնակը բուն էր շինել
մեր սրահի օճորքում: Ամեն
տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի ու նրա բունը
միշտ կպած էր մեր սրահի օճորքին:

Եւ գարունն էր բացւում, և՛ մեր սրտերն էին բացւում,
հէնց որ նա իր գլարթ ճիչով յայտնւում էր մեր գիւղում ու
մեր կտուրի տակ:

Եւ ինչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծըլւելում էր
մեր երգիին, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ
շարւում էին մեր երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Եւ ահա նորից գարնան հետ նա վերադարձել էր իր բու-
նը: Զու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ
ճշալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին:

Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկաւ, կըտցում կերակուր
բերաւ ճուտերի համար: Ծուտերը ճճալով դեղին կտուց-
ները դուրս հանեցին բնից:

Էտ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամե-
նից անզգուշը կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս
ձգեց բնից ու ընկաւ ներքև:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի ետեից: Բայց հէնց էտ
վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն,
ճուտն առաւ ու փախաւ:

«Փիշտ, փիշտ», վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը
սուր ծղրտալով ընկաւ կատուի ետեից՝ նրա շուրջը թրթրոա-
լով ու կտցահարելով, բայց չեղաւ: Կատուն մտաւ ամբարի
տակը: Եւ այս ամենը այնպէս արագ կատարւեց, որ անկա-
րելի եղաւ մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտրտւում էր ամբարի շուր-
ջը: Իսկ մենք, երեխաներս մի-մի փայտ առած պտրտում
էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկաւ ու փախաւ
դունչը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատուին որ տեսաւ, մի զիլ ծղրը-
տաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճիւղին: Այնտեղ լուռ
վէր եկաւ: Մին էլ տեսանք, յանկարծ ցած ընկաւ մի բարի
կտորի նման: Վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի
տակին:

Մի գարնան իրիկուն էր, որ այս դէպքը պատահեց: Շատ
տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում ոչ այս դէպքը,
ոչ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ,
որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչ-
պէս մերը:

78. Անձրեւ

Ալևոր լեռան
սպիտակ գլխին
եկան դիզւեցին
չարագուժ ամպեր.
ճրնշեցին նըրան,
ծանրացան վըրան,
սարը մըռայեց
խըստադէմ մի հօր
ճակատի նըման:
Շուրջը խաւարեց
ու խոր լուծիւն:
Բայց կամաց-կամաց
վերեւից լըսեց
խըլածայն որոտ:
Հոնց մի վայրկեան
ու ճայթեց յանկարծ,
որոտաց, գոռաց
կատաղի թափով:

և արար-աշխարհ
դըղըրդաց ահեղ:
Եւ խոշոր-խոշոր
կաթիլները յորդ
պատռած երկընքից
զայրացած, ուժգին
թափւեցին գետին
մայր հողի վրա:
Ու լեռան կողից
վտակներն ուռած,
աղի, ջերմ առատ
արցունքի նման,
արագ, կարկաշով
թափւեցին ներքև,
դիմեցին հեռու,
դէպի լայն դաշտը,
դէպի Մայր-Արաքս...

79. Սրտոտ տղան

ա.

Անձրեւը մի քանի օր անդադար գալիս էր: Փոքրիկ վտակ-
ները մի-մի հեղեղ էին դարձել ու փրփրալով, կատաղած
ցած էին գլորւում լեռների վրայից. ձորերն ու կիրճերը
դղրդում էին:

Երկաթուղու գծի մօտ կանգնած մի տնակում խաղում
էին չորս տղայ. բոլորն էլ գրեթէ իրար հասակակից:

— Դէհ, Սաքօ, — կանչեց նրանցից մէկը, — ապա թէ քաջ

տղայ ես, կանգնիր ռելսերի մէջտեղ, այս ըոպէիս անցնելու
է արագ գնացքը:

— Ինչո՞ւ կանգնեմ, — պատասխանեց Սաքօն, — բան ու գոր-
ծըս կտրե՞լ է:

— Ի՛, վախկոտ, վախկոտ. պարծենում էլ ես թէ ամենքի-
ցըս քաջն ես:

Եւ երեք ընկերները սկսեցին ծաղրել Սաքօին, բայց նա
ոչինչ չէր պատասխանում: Մի փոքր ժամանակից նրանք
դուրս պրծան սենեակից նայելու, թէ ինչպէս կանցնի արագ
գնացքը, իսկ Սաքօն ետևներիցը ձայն տւաւ:

— Աւելի լաւ է տանը մնացէք: Բան չունէ՞ք, անձրեւի տակ
գուր տեղը ի՞նչ էք թըջւում:

Բայց յանկարծ լսեցին սարսափելի աղաղակներ:

— Սաքօ, Սաքօ:

Տղան դուրս վազեց: Եւ իսկոյն նկատեց, որ մօտակայ
կամուրջը սկսել է նստել: Իսկ գնացքը այն է պիտի գար ու
վրայով անցնէր:

— Կը գլորւի, անպատճառ անդունդը կը գլորւի:

Բոլորի սրտերը սաստիկ բարախում էին:

— Պէտք է շուտով մի հնար գտնենք գնացքը փրկելու, —
կանչեց Սաքօն: — Քանի՞ ժամանակում կարելի է հասնել կա-
յարանը:

— Կէս ժամից աւելի, այստեղից կարճ ճամփով չորս
վերստ կը լինի:

— Արդեօք մէկից ձի չի՞ կարելի ճարել:

— Չաղացական Գիբորն ունի. բայց մինչև ջաղացը բաւա-
կան ճամփայ է:

— Դու, Յովսէփ, վազի դէպի ջաղացը և փորձի մի կերպ
կայարան հասնես գնացքի դուրս գալուց առաջ: Արմօ, դու
էլ շտապի գծի ճամփով, գուցէ կարողանաս պահապանին իմաց
տաս, որ գնացքը կանգնեցնի: Իսկ ես ու Չատին կը մնանք
այստեղ. եթէ դուր բան չանէք, մենք կաշխատենք կանգնեցնենք:

—Վաղուց է այսպիսի թոն չեմ տեսել,—ասում էր մեքենավարը, որ կառավարում էր գնացքը:

—Ես էլ,—պատասխանեց օգնականը,—երանի թէ կամուրջները փաստած չը լինեն: Տես, ինչ հեղեղներ են սարերից թափւում:

Գնացքը արագ սլանում էր:

—Ի՞նչ է անում այդ տղան,—հարցրեց օգնականը, տեսնելով գծի կողքին քարի գլխին մի տղայ, որ ձեռ ու ոտով էր անում:

—Այս անձրեկն էլ որ փոքրիկներին դուրս են թողնում,—բարկացաւ մեքենավարը:

Գնացքը վշշալով օձի պէս սողում էր կատաղած գետի ափով:

—Առաջ նայի,—կանչեց մեքենավարը,—այն ի՞նչ պիտի լինի:

—Երկու երեխայ ժամանակ են գտել ուխտերի վրա խաղալու: Սուլի, որ հեռանան:


Մեքենան սուլեց: Արձագանքը խուլ կրկնեց ձորերի պատույթների մէջ:

Ճամփին կանգնած էին տղաները. պարզ էր, որ սպասում էին գնացքին: Մէկը թաշկինակն էր թափ տալիս, աւելի և աւելի ուժով, և դէպի հեռուն էր ցոյց տալիս:

—Այ, ես ձեր...

—բացականչեց մեքենավարը կատաղած:

—Էլի սուլի, էլի սուլի:



Անհանգիստ սուլոցները կրկնւում էին: Տղաներից մէկը փախաւ, բայց միւսը կանգնած էր ուղիղ երկու գծի մէջտեղը ու շարունակում էր թաշկինակը թափ տալ:

—Շուտով, տօրմազ, տօրմազ...—բացականչեց օգնականը սարսափած,—Տէր-Աստուած, պառկեց հէնց ուխտերի վրա, պիտի ճխլւի... Կամ կոյր ու խուլ է, կամ խելագար:

Թէև յոյս չը կար, սակայն երկուսն էլ շտապ շտապ սկսեցին պտտացնել տօրմազը, որ գնացքը կանգնի:

Միայն մի հարիւր, հարիւր քսան քայլ էր բաժանում երեխային գնացքից, որը իր թափիցը դեռ առաջ էր մղւում:

—Աստուած իմ, արդեօք երեխան պիտի փրկւի:

Գնացքը դեռ շարժւում էր և աւելի ու աւելի մօտենում...

Անդադար սուլոցները վախեցրել էին ճամփորդներին. բոլորն էլ սարսափահար խոնւում էին դէպի դռներն ու պատուհանները:—«Ի՞նչ կայ»,—հարցնում էին միմեանց:

Արդէն միայն մի քսան քայլ էր բաժանում տղային մահից, միայն մի տասը քայլ... Յանկարծ ուրախութեան մի բարձր ճիչ դուրս պրծաւ մեքենավարի ու օգնականի կրծքից. գնացքը կանգ առաւ տղայից երկու-երեք քայլ հեռու:

Մեքենավարը դուրս թեքւեց և զայրացած աղաղակեց.

—Անպիտան... դէնը կորի:

Իսկ տղան խելագարի պէս վեր թռաւ և ցոյց տալով դէպի կամուրջը՝ ասաւ.—Փանդւել է...

—Ու իսկոյն վախից և յուզումից ուժասպառ նորից ընկաւ գետինը:

Ուղևորները դուրս թափւեցին վագօններից ու վազում էին դէպի մեքենան: Ի՞նչ է, ի՞նչ է:

—Կամուրջը բանդւած է, ահա մեր փրկիչը,—կանչեց մեքենավարը յուզւած:

Ու բազմութիւնը խոնւեց ուշաթափ Սաքօի գլխին...

Վերևից անձրևը շարունակ թափւում էլ և լեռնային հեղեղները դղրդալով վիժում էին ցած, դէպի կատաղած գետը...

80. Ծեր կաղնու մտածումները



Տես, օրօրում է լեռունդը մատաղ,
կայտառ են նրանք և միշտ էլ ուրախ:
Տարիներ անցան, ես մոռացայ էլ
թէ ջահելութիւն, թէ ուրախ երգել:

Տարիներ անցան՝ հինգ հարիւր տարի...
տեսայ ես այստեղ շատ չար ու բարի:
է՛յ, ընկնելու եմ, ընկնելու հիմի,
խաղում է արդէն արմատըս մի-մի...

81. Հանդիպում

ա.

Շուտով մի տարի էր լինելու, որ Միխակը թողել էր գիւղը,
եկել էր քաղաք ու ծառայ էր դարձել մի ընտանիքի մէջ:
Նրա ամենամեծ ուրախութիւնը նրանումն էր, որ երբեմն
բազարում տեսնում էր իրենց գիւղացիներից մի քանիսին,
երբ բան էին բերում քաղաք ծախելու:

Մի անգամ անցնում էր հրապարակի միջով՝ յանկարծ
տեսաւ իր ընկերներից մէկին:

—Ա՛, Թուն, ա՛ Թուն,—կանչեց նա իր վաղեմի ընկերոջ,
մօտ վազելով:

Ընկերը չը ճանաչեց: Միխակը քաշ ընկաւ նրա վզից և
սկսեց համբուրել:

—Խաչը վկայ, չը ճանաչեցի,—խօսեց գիւղացի տղան:—
էտ ի՞նչ շորեր են...

—Ի՞նչ անեմ, Թունի ջան, բաղաբում էսպէս են հագ-
ցնում: Դու էն ասա, Թունի ջան, մեր տունը գնում էիր,
մերոնք ո՞նց են, ի՞նչ են անում երեխէքը:

Եւ առանց պատասխանի սպասելու շարունակեց:

—Դ՞ու ինչ էիր շինում, Թունի ջան: Ամեն օր լողանում
էիր գետումը. ա՛խ, էստեղ իսկի ժամանակ չեն տալի, մարդ
ջրի երես տեսնի: Հիմի խոտը հնձում կը լինեն, էնպէս չէ՞.
Ո՞վ էր հաւաքում մեր խուրձերը: Ես եկել եմ հիմի բազարից
կանաչի առնելու, հացն էլ ինձ են առնել տալիս, ասում են՝
առուտուր սովորի: Իսկ մեր շորերիքը հասել են: Հիմի ո՞վ է
արածացնում մեր գառները: Էստեղ լաւ չի, Թունի ջան,
սիրտս տրաքում է ուրիշի տանը. չեմ իմանում թէ ինչ
անեմ... Որ գնաս, մեր տանն ասա՝ Միխակին տեսայ: Դու
ո՞ւմ հետ եկար. ե՞րբ ես գնալու: Ծառայ լինելը շատ վատ է,
Թունի ջան...

Նա իր բազմաթիւ ու անկապ հարցերով բոլորովին շա-
րեցրեց ընկերին, որ չը գիտէր՝ ո՞ր մէկին պատասխանի:

—Հօրս հետ եմ եկել,—ասաւ նա. —պանիր էինք բերել,
ծախեցինք, էսօր պիտի գնանք: Դ՞ու երբ պիտի գաս գիւղը:
Գիտես Միխակ, մեր բոստանն էլ հասել է, էնքան սեխ եմ
ուտում: Ես քո բաժինը կը պահեմ. ե՞րբ ես գալու:

—Ձեռն թողնում, Թունի ջան,—պատասխանեց Միխակը
տխուր ձայնով:—շատ եմ ուզում գամ, մերոնց տեսնեմ, մեր
տանը մնամ. չեն թողնում, ասում են՝ «արջի քոթոթ, ձեր
ծմակները չէս մոռանում»: Դէ՛հնց մոռանամ, Թունի ջան,
ախար էստեղ ի՞նչ կայ. տներ, հա տներ. մարդիկը խօ գիւ-
ղացուն էջի տեղ են դնում...

գ.

Թունին մի քանի տարով մեծ էր Միխակից. լսելով ըն-
կերոջ խօսքերը, խղճաց նրա դրութեան վրա և մտածեց
օգնի:

—Եկ, ես քեզ կը տանեմ գիւղ, —ասաւ նա:

—Ի՞նչպէս գամ, էնտեղ էլ հօրախաչերս գլխիս կը տայ,
կասի՝ ինչո՞ւ եկար: Ձէ, Թունի ջան, լաւն էն է, գնամ ջուրը
ընկնեմ՝ մի անգամով պըծնեմ:

Թունին մխիթարեց նրան, սիրտ տաւ և խոստացաւ, որ

կերթայ կը խօսի նրանց տանը: Միխակը ուրախացաւ. մանկա-
կան բարեսրտութեամբ ուզեց ընկերոջը մի բանով վարձատրի:

—Գիտե՞ս, Թունի ջան,—ասաւ նա,—լաւ միտս եկաւ: Ես
վէզերս թաղել էի մեր մարագի դռան տակին, էնտեղ, ուր մի
կոճղ է դրած, կը գնաս, կը հանես, հարիւր հատից աւել է.
ինչքան կուզես՝ դու վեր առ, մնացածը բաժանի մեր ընկեր-
ներին: Ես որ չեմ կարայ խաղամ, դուք էլ է խաղացէք:

—Թոմասին բաժին չեմ տայ,—ասաւ ուրախացած Թու-
նին.—նա լաւ տղայ չի, անցած օրը ինձ հետ կուեց:

—Նրան էլ տուր, մեր ընկերն է, հաշտեցէք,—խօսեց
խրատական կերպով Միխակը:—Ինչ կայ, ընկեր ընկերի հետ
կը կուի էլ, կը հաշտուի էլ: Անցած գիշերը ես էլ Պօղոսի հետ
կուեցի՝ մահակով խփեցի, գլխիցը արիւն գնաց:

—Պօղոսի՞ հետ. էստեղ թնչ էր շինում:

—Երագումս կուեցի: Թունի ջան, հէնց որ զարթնեցի, էն-
քան լաց եղայ, էնքան լաց եղայ՝ թէ ինչու նրա գլուխը պատ-
ռեցի: Դրուստն ասա, Թունի ջան, նրան խօ մի բան չի եղել:

—Ոչինչ չի եղել. երէկ չէ, մէկէլ օրը ինձ հետ խօսում
էր, յետոյ միասին գնացինք իրենց այգին, ծիրան կերանք:

Երկու փոքրիկ գիւղացիների խօսակցութիւնը ընդհատեց
Թունիի հայրը, որ հեռւից ձայն տւաւ.

—Այ տղայ, էտ ո՞ւմ ետ ես խօսում. եկ, գնում ենք:

—Թունի ջան, հիմի որ գնում ես,—ասաւ Միխակը նրա
փէշից պինդ բռնելով,—մտի մեր տունը, ամենին շատ բարե-
ւորա, ասա՝ որ տեսայ Միխակին:

—Կասեմ,—խոստացաւ Թունին ու հեռացաւ:

Միխակը երկար կանգնել էր ունայում էր ընկերոջ ետեւից:

—Էրնէկ նրան, գնում է գիւղը...

1) Ինչո՞ւ Միխակին քաղաքումս էին թողնում, քանի որ չէր ուզում:

2) Ինչո՞ւ Միխակը ծառայ լինելը վատ քան էր համարում: Եւ
եթէ չէր հաւանում ինչո՞ւ մի ուրիշ գործ չէր անում:

82. Գորտն ու կովը

Գորտը գորտին

ասաւ. «Քեռի,

հլա էսդին

մի ետ դառի...

տես, ուռել եմ,

փուքն առել եմ:

Ուղիղն ասա,

կովին հասմայ:

—Չո՞ւր է, վերջ տուր,

կովն ո՞ւր — դու ո՞ւր:

«Հիմա, քեռի,

փոխւմի ըսկի»:

—«Շատ չեն զօռի,

նոյնն ես, սըսկի:

«Մի տես, քեռի»:

—Նոյնն ես, լո՞ւի.

աշխարհ կանցնի,

եթէ գորտը

կովին հասնի:

«Է՛ս հէտ...քեռի»:

—Թէկուզ մեռի,

դու բաց աչքով

չես դառնայ կով:

Գորտը ուռաւ,

փքեց նորից,

խիստ փուքառաւ:

ճաքեց զօռից:

Ով որ փքւի,

նա կը չքւի:

83. Հումն

ա.

Եղսում հարսը վաղուց էր վեր կացել և պաշարի խուր-
ջինը պատրաստել: Հացը, սխտորն ու բացախով լիք շիշը
խուրջինի մի մասն էր ածել, իսկ սրոցը, մատնոցը, սահէնն
ու փարչը միւս: Էջին էլ մի լաւ թիմարելուց յետոյ՝ փալանն
ու չուլը կապել էր ու պատրաստել:

Մարդը ոտքի կանգնեց, երեսին մի երկու չուփ ջուր
խփեց, գլխի փափախով դէմքը աջ ու ձախ քսմսեց, սրբեց,
գերանդին ուսին ձգեց ու բեռնած էջն առաջ անելով՝ դուրս
գնաց տնից:

Գնում էր էջին թօշ-թօշ անելով, ու մի հացը կուան տակը
դրած՝ և՛ ուտում էր, և՛ մտածում:

—Վերի փէշից կը սկսեմ հուռնձը, մինչև ճաշը կաղնինե-
րին կը հասնեմ, մի քիչ պատառ-մատառ բերանս կը գցեմ,
յետոյ մինչև իրիկուն մի երեք տասնեակ խուրձ էլ է որ
կապեմ, հալալ կը լինի իմ կերածը:

Գնալիս, աղբիւրից փարչը ջրով լցրեց. ինքն էլ, էջն էլ մի կուշտ ջուր խմեցին և շարունակեցին ճանապարհը: Արեւը մի չւան բարձրացել էր, որ նրանք տեղ հասան: Նա շատ ուրախացաւ, երբ հասուն արտը տեսաւ. նրա մտքովն անցած հազար ու մի տեսակ չար ենթադրութիւններ կորան, քէֆն եկաւ, որ հասկերը դեռ ոտքի վրա էին ու չէին կծղել, փշացել: Նրան թւաց թէ՝ հասկերը իրար քսմսւելով, մի խոնարհ ողջոյն տւին իրեն. փափախը վերցրեց, ծունկ չոքեց, հասկերից մի փունջ բռնեց և համբուրեց. յետոյ աչքերը դէպի երկինք բարձրացրեց ու ասաւ.

—Տէր-Աստուած, բաղբը է Քո դատաստանը, մինչև օրս պահել-պահպանել ես ինձ, օրէս դէնն էլ ողջութիւն տուր, անվնաս հնձեմ, խրձեմ, դիզեմ, կրեմ, կասեմ ու դեղնազարդիս տիրանամ, յետոյ ես գիտեմ իմ մարդութիւնը:

Բ.

Յետոյ վեր կացաւ, էշիցը խուրջինն ու փալանը իջեցրեց, արձակեց արօտի, թաշկինակով գլուխը կապեց, վերցրեց գերանդին և երեսին խաչ հանելով՝ սկսեց հունձը:

Որքան հնձում էր և ոսկեփայլ հասկերը պառկեցնում գետնին, այնքան աւելի քաջալերւում էր: Հնձեց. արևի թէժ բոցն ու կրակը չէր ազդում ոգևորւած մշակին: Քրքտինքը ճակատից և ախանջներէ՝ քամակից կաթկթում

էր, թիկունքն ու կուրծքը խօ և քրտնում թաց էր լինում, և տաք արևի տակ չորանում: Նա անդադար հնձում էր:

Երբ սովեց, գերանդին առաւ, գնաց կաղնիների սոււերը,

աջ ցուցամատով ճակատի բրտինքը ծոր-ծոր ցած թափեց, ապա սահէնը հանեց, սխտորը մէջը ծեծեց, քացախով լցրեց, հացը բրդեց մէջը և մի կուշտ կերաւ: Թըթւաշ բրթոշը այնքան ախորժելի էր և զովացուցիչ, որ երկրորդ անգամ պատրաստեց ու կերաւ: Յետոյ փարչը շրթունքներին դնելով՝ մի կուշտ էլ ջուր խմեց, բթացած գերանդին սրեց և դարձեալ ոտքի կանգնեց, գնաց իր գործին:

—Մինչև մութը կը հնձեմ,—մտածում էր նա.—իրիկնապահին՝ կապիչները կը պատրաստեմ ու խուրձերը կը կապեմ:

Այդպէս էլ արաւ: Երեկոյեան երբ համարեց, տեսաւ՝ ուղիղ չորս տասնեակ խուրձ էր հնձել ու կապել:


84. Հանգիստ

Էհէյ, ախպէր, էստեղ արի,
էս շոք վախտին հւր կերթաս.
սոված, յոգնած պէտք է լինես,
էտպէս ըշտապ հւր կերթաս:

Արի մեզ մօտ, Աստծու ղրկած
դու մեր հիւրն ես թանկագին.
արի դէզի շւաքի տակ,
դու տեղ ունես մեր գլխին:

Հէնց նոր մերոնք հացի նըստան,
գերանդիքն են բթացել.
արի, ախպէր, պաղ հովերը
թող որ շոյեն քո կուրծքն էլ:

Էհէյ, արի, ճամփորդ ախպէր,
էս շոք վախտին հւր կերթաս.
սոված, յոգնած պէտք է լինես,
էտպէս ըշտապ հւր կերթաս:



85. Կալի երգը

Արի եզր ջան, Ծիրան ջան.
հորովէլ ան, հորովէլ ան...
Ոտիդ արա, ուսիդ արա,
կալը կասենք, անձրև չը գայ:
Տար, ման արա, ան բեզ մեռնեմ,
դարման արա, ցաւըդ առնեմ:
Դարմանը դու, ցորենը մենք
ձմեռն ուտենք, հանգիստ ապրենք:
Օրը գնաց, ան Ծիրան ջան,
բանը մնաց, ջան ախպէր, ջան:
Ոտիդ արա, ուսիդ արա,
կալը կասենք, անձրև չը գայ:

Գիւղացին մըն է անձրևն խնդրում, եւ մըն է անձրևից վախե-
նում: Կալը ինչո՞ւ համար է:

86. Փոկակապ Ակոփ-ապեր

ա.

Մեր դպրոցը վանքի ընդարձակ պարսպի մէջն էր. այդ-
տեղ էր նաև ընթերցարանն ու թատրոնը: Կային դեռ շատ
մանր ու մեծ, կիսախարխուլ կամ բոլորովին աւերակ դար-
ձած խուցեր, մառաններ, խուլ, մութ ու մեզ վախ ազդող
նկուղներ, այլև վանահօր բնակարանը:

Վանքի պարիսպներին ետևի կողմից կպած էին ընդարձակ
ճոխ այգիները. և մինչև հոկտեմբերի կէսերը ուղղակի ան-
հնար էր լինում վարժապետների դասերին ուշադիր հետևելը:

Հէնց դասարանի լուսամուտի տակ, երկու քայլ հեռու,
թփերից շարան-շարան կախւած փայլում էին խաղողի հիւ-
թալից ճիւթերը, կարմրաթուշ դեղձերը պսպղում էին ամեն
կողմից և տանձերը երևում էին բարձրում:

Փոխանակ մեր թւաբանական խնդիրները լուծելու՝ մտա-
ծում էինք դասի ժամանակ, թէ ինչպէս համենք այդ գայ-
թակղիչ պտուղներին: Խորհում էինք, հնարներ որոնում, և
մի օր մեր ընկերներից մէկը լուծեց խնդիրը:

Ճիշտ մեր դասարանների գլխին գտնւում էր մի փայտա-
նոց, ուր կարելի էր գնալ մի նեղլիկ ու վատ շինւած սան-
դուղքով: Փայտանոցն ունէր փոքրիկ լուսամուտ պարտէզի
վրա: Ահա այդտեղից էր, որ մտածել էր մեր հնարագէտը
մագլցելով իջնել այգին ու սկսել արշաւանքը:

Ասաւ ու գնաց որ փորձի: Փորձը աջողւեց: Նա վերա-
դարձաւ գրպաններն ուռած և բերանը աղտոտ:

—Եղաւ,—ասաւ նա խորհրդաւոր կերպով.—սրանից յե-
տոյ ամեն օր ես կիջնեմ, տոպրակը կը լցնեմ, իսկ դուք պա-
տուհանից վեր կը բաշէք. ելնելն ու իջնելը հեշտ է...

Միւս օրը եօթը դաւաղիրներս փայտանոց ծլկւեցինք և ամ-
բողջ մեծ դասամիջոցին, որ ճիշտ երկու ժամ էր տևում,
ցած չեկանք: Ուտում էինք ու գրպաններս լցնում:

բ.

Երկար չը տևեց սակայն մեր այդ քաջագործութիւնը:
Դպրոցում մի գիւղացի ծերունի ծառայ ունէինք, այտին
մի մեծ ուռուցք, գլխին՝ մի մեծ փափախ:

Անունը Յակոբ էր. մենք կանչում էինք «Փոկակապ Ակոփ
ապէր»: Շուտասելուկը հօ յիշում էք:

Միամիտ, բարեմիտ, դանդաղաշարժ և քնկոտ մի ծերունկ
էր: Կատակներ, խաղեր ու ծաղր կարկուտի պէս տեղում էին
գլխին, բայց լուռ ժպտում էր ու երբէք չէր բարկանում:

Ահա այդ «Փոկակապն» էր, որ մի օր վրա հասաւ մեզ



այն րոպէին, երբ վեց հոգի շարւած փայտանոցի մուօթ ան-
կիւնումը փայտերի վրա՝ խաղող ու դեղձ էինք խժռում:

Փայտ տանելու էր եկել, թէ՛ գուցէ մի ուրիշ բանի, ո-
րոնցով լիքն էր այդ տանիքի տակի ամբարը:

Բայց հէնց որ դէմ առ դէմ եկաւ մեզ, սաստիկ վախե-
ցաւ: Նախ կարկամեց, յետոյ վիզը առաջ պարզեց, լուռ
զննեց ամենքիս ու գոչեց. — Եւ... էս ի՞նչ է...

Մենք էլ շատ վախեցել էինք: Վեր թռանք: Այդ միջոցին
իսկ մեր ընկերը, որ այգումն էր, երևի լաւ կշտացած, փէշի
մէջն էլ դեղձ ու տանձ, երևաց լուսամուտից ուներս ոստնեց:

Յակոբ ապէրը ցնցեց ու փախաւ դէպի սանդուղքը:
Կարծեցինք, որ գնում էր վերակացւին կանչի: Միմեանց
գլխի վրայից ցատկելով առաջ վազեցինք, ծերունուն հրեցինք,
հրմշտեցինք, գրեթէ գլորեցինք ցած ու բազ նետուելով ցըր-
ւեցինք, անհետացանք:

Սակայն Ակոփ-ապէրը գնացել, պատմել էր ամեն ինչ
տեսչին, և մի առ մի մեր անունները տւել:

Պատժեցինք. փայտանոցը կողպեց, էլ պտուղի երես չը
տեսանք, բայց մտածեցինք ապօրից մեր վրէժը հանենք, եթէ
ոչ այսօր, գոնէ վաղը:

գ.

Հնարքը գտաւ նորից այգին իջնողը:

Ակոփ-ապէրը հեռաւոր գիւղերից եկած մենակ մի մարդ
էր, ապրում էր դպրոցում: Տւել էին նրան մի խուց, ուր կար
նրա անկողինը, մի ճրագ, մի կուժ, մի քանի ամանեղէն:
Դուռը փակել չէր էլ մտածում. գողացելուց վախ չունէր:

Ու մի օր, երբ ծերունուն դպրոցից դուրս գործի էին
ուղարկել, մտանք նրա խուցը, մի առ մի դուրս բերինք ինչ
որ կար այնտեղ, նոյն իսկ աթոռն ու կուժը, ամեն ինչ, և
տարանք թագցրինք զանազան տեղեր: Վերմակը նետեցինք
խոնաւ ու մուօթ մի մառանի խորքը, ներքնակը շարտեցինք
աւերակ խուցերից մէկի մէջ, ամանները ջարդ ու փշուր ե-
ղան, երբ նետում էինք այս ու այն նկուղը, իսկ բարձն ու
հագուստը թագցրինք թատրոնական բեմի տակ...

Գնաւ ու գտի այժմ այդ ընդարձակ շէնքի քար ու բանդ
խուլ անկիւններում:

Խուցը լիովին դատարկեց. մնաց լերկ փայտէ մահճա-
կալն ու սեղանը միայն. ոչ իսկ աւելը թողինք:

Գոհ մեր արածովը, գնացինք տուն: Ոչ մէկին չը պատմեցի մեր արածը, բայց ամբողջ գիշեր մտածում էի թէ Ակոփ-ապէրը ինչպէս պիտի ապշէր, երբ ներս մտնէր խուցը, ինչպէս պիտի շարած մնար:

Իսկ գիշերը. հըր, ինչի՞ մէջ պիտի քնէր: Չէ՞ որ ես ահա անկողնիս մէջ, վերմակուժս փաթաթած պառկել եմ, բարձ էլ ունիմ, ներքնակ էլ, իսկ նա ոչինչ չունի: Դասարանները մաքրելուց յոգնած գնալու է որ պառկի, գնալու է որ ճրագը վառի, թէյ շինի... և ոչինչ չի գտնելու...

Սկսեցի սաստիկ անհանգիստ լինել պառկած տեղումս: Քիչ էր մնում լայի:

Էլ քնել չէի կարողանում. խիղճս ինձ տանջում էր:

Դ.

Միւս առաւօտ դպրոց մտնելիս՝ առաջին լուրը որ լսեցի՝ այն էր, թէ Ակոփ-ապօր խուցը կողոպտել էին երէկ: Կարծում էին թէ գողեր են մտել:

Տեսայ իրեն՝ ծերունուն, նստած խուցի առաջ, արտասուքը աչքերին, շարած և անշարժ: Այնպէս խղճալի էր...

Գիշերը քնել էր վանահօր ծառայի խուցում, ընթրել էր այնտեղ, բայց հօ այդպէս չէր կարելի:

Եւ դաւադիրներս տխուր իրար մօտ եկանք դասամիջոցին մի ծառի տակ:

—Տղերը,—ասաւ յանկարծ մէկը,—մեր արածը անպիտան բան էր: Սկսած պտուղ գողանալուց մինչև այս վերջին մեր վարմունքը՝ չարագործութիւն է... Ուղղենք մեր սխալը:

—Ինչպէս,—ձայնեցինք ամենքս մի բերան:

Ըստ երևոյթին, ինձ նման բոլորն էլ տանջւել էին գիշերը:

Շատ պարզ է. նախ՝ բոլոր թաքցրած բաները հանենք և տեղը դնենք. ցած բան է մեր արածը:

—Իսկ յետոյ...

—Յետոյ պիտի կոտրտած բաները մեր փողովն առնենք ու տանք Ակոփ-ապօրը:

—Փող հօ կը տայ մեզ:

—Բաժանենք մեզ վրա,—ասացի ես կտրուկ.—կերթամ, կը պատմեմ հօրս մեր արածը, կը պատմեմ ամեն բան, նա փողը կը տայ:

—Ես էլ կը պատմեմ:

—Ես էլ... Ես էլ...

Վճռած էր: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս իսկոյն զւարթացանք մենք, ինչպիսի ոգեւորութեամբ որոնում էինք թաքցրած իրերը, խուցը տանում ու լաւ սարքում, տեղաւորում:



Ակոփ-ապէրը մեր գործի կէսին վրա հասաւ և ապշած կանգ առաւ խուցի դռան առաջ:

—Եմ...—արաւ միմիայն ու մնաց անշարժ:

—Ոչինչ, ապէր,—կանչեց մեզնից մէկը.—դու իսկի դարդ մի անի: Այ, բոլորը կը բերենք, կոտրածներն էլ՝ փող կը տանք, որ առնես...

—Մենք էինք արել,—աւելացրեց երկրորդը,—հանաք

էինք արել, մի նեղանայ, ապէր. ես քեզ համար մի լաւ կուժ
կը բերեմ:

—Ես էլ մի ջրածիկ:

—Ես էլ... ես էլ ափսէներ...

—Իսկ ես,—ասում էր մէկը,—եւ ինչ բերեմ:

Ծերունին ժպտուն արտասուում էր: Սաստիկ յուզւել էր.
եւ երբ ամեն ինչ տեղաւորել էինք, յանկարծ բռնեց մեզ-
նից մէկին ու մինչ նա ճշում էր վախից՝ ասաւ.

—Մի վախենայ, բալաս, սպասի՝ մէկ համբուրեմ քեզ...

Ու արտասուախառն համբուրեց նրան, յետոյ բաց թողեց,
դարձաւ ամենքիս ու ասաւ.

—Աստուած պահի ձեզ, տղէք...

Ե.

Միւս օրը ամեն տեսակ իրերով լցրինք նրա խուցը:

Ո՛չ միայն կուժ, այլև թէյ, շաքար, մոմ և բաժակներ էլ
բերել էինք:

Ծերունին զւարթ, ժպտուն տեսաւ այդ ամենը, յետոյ
թողեց որ տեղաւորենք ու ինքը ուղղակի գնաց դպրոցի տեսչին:

Դասերից յետոյ տեսուչը մեզ եօթիս էլ կանչեց իր սե-
նեակը և երբ հաւաքւել էինք, նայեց ամենքիս երկար ու լուռ,
յետոյ մօտեցաւ, ձեռքը դրեց առաջինի ուսին և ասաւ.

—Ապրիք, տղէք... Այժմ տուն գնացէք... ուրիշ ասելիք
չունեմ ձեզ...

Յետոյ ժպտաց ու գլխով արաւ:

Գժեթի պէս դուրս նետւեցինք:

Իմ դպրոցական կեանքի ո՛չ մի օրը այդքան լաւ չէ անցել...

1) Ինչո՞ւ էր այդ օրը նրա դպրոցական կեանքի ամենալաւ օրը:

2) Ծիջտ է, որ սկսած պտուղ գողանալուց մինչեւ նրանց վերջին
վարժունքը բոլորը չարագործութիւն էր ու ստորութիւն. ինչո՞ւ:

3) Ուրեմն նրանք ինչո՞ւ էին գողանում, ինչո՞ւ էին այդպէս վար-
տւում: Ցած ու չարագործ տղէք էին նրանք:



87. Կեսօրին

Մեր գիւղից վեր մինչ էսօր
կայ ուռենի մի սրգւոր:

Մեծ անտառից նա զատւած,
մարդու կացնից ազատւած,
կանգնած է դեռ ու շոգին
հով է տալի մըշակին:

Գիժ, լեռնային մի վտակ
խորխորում է նըրա տակ,
խաղում, կանչում մարգերին:

Էն առակում, կէսօրին,
երբ որ շոգից նեղանում,
զընում էինք, լողանում,
խաղում էինք, վազվըզում
գոյնգոյն մանրիկ աւազում,
կամ հետևում հե ի հե
թիթեռնիկին ոսկեթև,
ու միշտ յոգնած ժամանակ
ներստում էինք հին ծառի տակ:

88. Արջատրս

ա.

Մի կերի տարի ես ու մեր Աւագը Մասրէքում խոզ էինք
պահում: Հիմի մի աշունքւայ գիշեր բերել ենք խոզը իր նիս-
տը արել ու դափի դռանը մի կրակ վառել, որ բոցն Աստծու
ոտներն էրում է: Մի լուսնեակ գիշեր է: Ես պկու եմ ածում,
էս Աւագն էլ մի բայաթի է վեր քաշել, որ սար ու ձոր
զւզւում են:

Մին էլ Աւագը թէ՛ «Ա՛յ տղայ, էն ո՞վ է, հրէ մի մարդ է գալի վերի կոնիցը»:

Մտիկ տամ տեսնեմ, դրուստ որ՝ մի մարդ է գալի վերեւիցը: Ամա ես էլ լսել եմ, որ արջը գողութիւն գալիս խաբելու համար առաջի երկու ոտը դռինն է դնում, երկու ոտանի մարդի նման է գալի, ոնց որ մարդ ըլի:

Ասի՛ Աւագ, էս ոքմինն չի, արջ է:

Թէ՛ բօհ, չէ չէ պողեր:

Ա՛յ տղայ, ասի, արջ է:

Ես՝ հա, սա՛ չէ. ես՝ հա, սա՛ չէ. Իսկ նա էլ կամաց-կամաց կողքըհան մօտենում է ու ձեռներին էլ հրացան չը կայ: Մին էլ էն տեսանք՝ առաջի երկու ոտը վեր դրաւ, դառաւ շորսոտանի ու, առ հա կը տաս՝ խողի կէս տեղը: Խողը ճըղճղալով իրար խառնեց, հաւաքեց արջի վրա:

—Ալաբաշ, բռնի հա բռնի, հրէս հա հրէս:

Ամեն մինս մի ածխակոթ վեր կալանք, վազեցինք: Մի հաստիկ մէրուն ունէինք. ականջ դնենք, որ սրա ճղղոցըներքի փոսերիցն է գալի: Վազ տւինք փոսերի վրա: Ածխակոթը բաշել ենք. հիմի էս անիրաւին վէր ենք հատում, տալիս ենք, ինչ անում ենք, չենք անում, մէրունը բաց չի թողնում. առաջներս խտրտած ձորն է ընկնում: Վերջը՝ շատ տեղը նեղացրինք, չէ, թող արաւ, փախաւ:

Առաւօտը ասի՛ Աւագ, դու խողի կշտին կաց, ես գնամ տանիցը մի հրացան բերեմ:

Թէ՛ դէ, լաւ:

բ.

Աւագը խողի կշտին կացաւ, ես գնացի. տանը մի հին հրացան ունէինք, վեր կալայ եկայ. եկայ, շիտակ գնացի ներքի մոշուտին, որտեղ գիտեմ արջի տեղն է. Ման եկայ. որ գտայ ոչ, մի տեղ մի լաւ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի՛ մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս՝ հէնց մոշենու տակիցը մինը ֆրթացրեց ու հրացանս բռնեց:

Դու մի ասիլ, գնացել եմ հէնց անտէր արջի վրա եմ կանգնել:

Որ հրացանիս լուլիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի: Հիմի նա ոլորում է, ուզում է կոտորի, ես էլ ոլորում եմ, որ հէնց անեմ ծէրը վրէն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ: Բայց անտէրը գլխի է ընկել, թողնում չի:

Ես ձգեցի, նա ձգեց. տեսայ որ բան չի դառնում, ձեռս գցեցի, ասի յանկարծ խլեմ: Ձեռս գցեցի թէ չէ, թանթիկը բերաւ ուսովս պատ տւաւ. Որ թանթիկն ուսովս պատ տւաւ, հրացանը բաց թողեց: Էնքան արի՛ հրացանի ծէրը փորին դէմ



առաւ, չախմախը ձեռս գցեցի, ասի՛ էս է բանը պրծաւ: Վերի ոտը բաշեցի՝ չըրթկացրի. տրաբեց ոչ: Մտիկ տամ, տեսնեմ՝ քարը վէր է ընկել, կորել: Էստեղ մէջքս կոտորեց: Հրացանը բաց թողի, ասի՛ խտտիցն ազատւեմ. եղաւ ոչ: Բռնեցինք իրար:

գ.

Դէս բաշեցինք, դէն բաշեցինք: Տեսնեմ՝ անտէրն էս է ինձ ուտում է: Ձէն տւի՛ «Ալաբաշ հէյ... Ալաբաշ հէյ...»

Մին էլ տեսայ շունը կլանչելով գալիս է. եկաւ, հասաւ: «Ալաբաշ, օգնի, ասի, ինձ կերաւ...» Հայ քեզ մատաղ, շուն.

որ հասաւ, մէջքին տաւ էլի, ոնց որ մի գնդակ ըլի։ Ամա
ի՛նչ։ Էն շունը թէ նրա մէջքին տաւ, թէ էն լեռ քարափին։

Ոնց որ երկու փահլեան պի՛նդ իրար բռնեն, բռնել ենք ու
աչք աչքի ենք գցել։ Մին էլ էն տեսայ՝ կու՛մ արաւ ու մար-
դի պէս երեսիս մի մեծ թքեց—թո՛ւ։ Որ թուքն աչքերս բռ-
նեց, գլուխս դռիս վրա կոացրի, ետնուց էլ թանթիկով մի
մի թունդ ապտակ հասցրեց, ու ինձ կորցրի։

Տեսայ՝ էլ ազատելու դուռը չը կայ, ասի՝ ես առաջուց
երեսիս վրա վէր ընկնեմ, որ երեսս փչացնի ոչ։ Բերանսիվէր
տակին վէր ընկայ։ Որ տակին վէր ընկայ, շունն աւելի կա-
տաղեց։ Արջն ընկել է ինձ վրա, շունը ետեից իրեն ուտում
է, որտեղից բռնում է—օգուտ չի անում։ Դու մի ասիլ վար-
պետ շուն է, գիտի արջը որտեղից կը խեղճանայ։ Մէջքին
վեր ելաւ, ականջներիցը բռնեց։ Որ ականջներիցը բռնեց,
արջը ինձ թողեց։ Անտէրը գազազեց, շանը թափ տւեց մէջ-
քից, վէր գցեց ու բռնեց, հուպ տաւ թէ չանչեց, էլ գիտեմ
ոչ՝ ինչ արաւ, որ բաց թողեց, շունը կլանչելով ձորն ընկաւ,
փախաւ, կորաւ։

դ.

Շունն էլ գնաց. մնացինք ես ու ինքը։ Հիմի տակին երեսս
բռնած միտք եմ անում։ Իմացել եմ, որ արջը ականջ է
գնում, տեսնի շունչ կայ, թէ չէ։ Թէ իմանում է, որ շունչ
է քաշում տակի ոքմինը, ջարդում է մինչև շունչը կտրի,
թէ հօ չէ, քոթկաթաղ է անում, թողնում, գնում, որ հօտի,
յետոյ գայ հանի ուտի։ Էս միտք անելիս մին էլ էն տեսայ՝
գլուխը բերաւ գլխիս վրա դրաւ, շունչը իրեն քաշեց. ականջ
է դրել։ Ես էլ շունչս փորս գցեցի, ոնց որ թէ մեռած եմ։
Գլուխը վեր քաշեց, մի քիչ կացաւ՝ մին էլ ականջ դրաւ։ Էլ
ետ շունչս պահեցի։ Սա որ տեսաւ՝ ես էս է մեռած եմ, ինձ
թող արաւ, մըրթմըրթալով գնաց։ Աչքս ծերպ արի, ասի՝ մտիկ
անեմ, տեսնեմ ուր է գնում։ Ասում եմ՝ հէնց լինի մի բիշ
տեղ հեռանայ, վեր կենամ փախչեմ։

Գնաց՝ մօտիկ ցախ ու մախ կար, փէտ կար, հաւաքեց
բերաւ վրէս ածաւ։ Մէջքիս վրա դրաւ, շինքիս վրա դրաւ,
էլ ետ գնաց։ Գնաց՝ մի թեթեւ ցըցչորի կար, էն էլ բերաւ ոտ-
ներիս վրա դրաւ. մին էլ ետ գնաց։

Տեսնեմ՝ մի ահագին քօթուկ կայ, չարչարում է պոկի,
որ բերի էն էլ վրէս գցի։ Միտք արի որ՝ թէ էս քօթուկը բերի
վրէս գցի, տակին շունչս կը կտրի։ Ասի՝ բանի ուշքը քօթու-
կումն է, վեր կենամ կորչեմ։ Փորըսոդ տալով փէտերի տակի-
ցը դուրս եկայ, փախայ մտայ մօտիկ մամխուտը, տապ արի։

Հիմի տապ արած տեղիցը մըտիկ եմ անում։ Չարչարեց,
քօթուկը պոկեց ու, ոնց որ մարդը խըտըտի, խըտըտեց, բերաւ
թէ վրէս գցի։ Եկաւ տեսաւ փէտերի տակին մարդ չը կայ։
Քօթուկը խըտըտին զարմացած կանգնեց. փէտերի տակին
մտիկ արաւ, շորս կուռը մտիկ արաւ, յանկարծ քօթուկը վէր
գցեց ու՝ թո՛ւ հա թո՛ւ, թո՛ւ հա թո՛ւ, մարդի նման թքոտում
է. ասի՝ երևի ափսոսում է էլի։

Թո՛ւ հա թո՛ւ անելով, ճրճռացնելով ընկաւ ներքի ձորը։
Ես էլ վեր կացայ, դուրս պրծայ դէպի Աւագը։ Գալիս եմ,
ոնց եմ գալիս, ոնց որ հետ ածած լինեմ։ Ետ եմ մտիկ անում,
ասում եմ տեսնեմ, հօ արջը գալիս չի։ Հասայ մեր խոզի
նիստը։ Էս Աւագը թէ՛ այ տղայ, էտ ի՛նչ խաբար է, էտ ի՛նչ
ես եղել։ Ասի՝ էլ խաբարն հրն է, քո տունը բանդելի, էսէնց
բան եկաւ գլխիս։ Թէ՛ բա հրացանդ հըր է։

Նոր տեսնեմ, որ հրացանս մտիցս ընկել է, թողել եմ տեղը։
Ե.

Եկանք մի բանի հոգի հաւաքւեցինք, գնացինք հրացանս
բերինք։ Հրացանիս բարը շինեցի, պնդացրի, ասի՝ Աւագ, էլի
պէտք է գնամ։ Թէ՛ այ տղայ, ձեռը վեր կալ, կը բռնի, կը գզի։
Ասի՝ հիմի սովորեցի, էնպէս չեմ անի, որ բռնի։

Թէ՛ դու գիտես։

Հրացանս վեր կալայ, բարը պնդացրի ու գնացի։ Տանձի
էլ կաթոցի ժամանակն է։ Գնացի մինչև ճաշ ման եկայ,

ոտնահան եղայ, գտայ ոչ: Միտք արի՝ ախպէր, սա ուր կը լինի քաշած, ախր սա պէտք է որ էս խոզի կողմերից հեռանայ ոչ: Վեր կացայ, ասի՝ ներքեւ մոշուտների վրա:

Մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհր՝, արջի հետքը առաջիս: Հետքն ընկայ, գնացի. գնամ տեսնեմ հրէս մի բարդի կրծել է, կրծել ու թողել: Գլխի ընկայ, որ սրանում մեղր կայ: Վերև մտիկ տամ, ճանճը արկանոցից բանում է: Ասի՝ հիմի թէ իրեն գտնեմ էլ ոչ, էս հօ որս է ու որս: Մի քիչ էլ գնացի, տեսնեմ առաջիս մի մորմոնջաբուն է քանդել, բայց հողը դեռ թաց է: Տեսայ որ մօտեցել եմ: Էստեղ մի անտէր ահ ընկաւ սիրտս: Հրացանի քարին մտիկ տւի ու առաջ գնացի: Հէնց ոտս փոխեցի, մի թրմփթրմփոց եկաւ: Կանգնեցի... Բացատի (թալի) գլխին մի լաւ մեղրատանձի կայ. տեսնեմ՝ հրէս տակին տանձ է ուտում: Էս կռանը մի տանձ է կաթում, դէսն է վազում մըրթմըրթալով ծամում է ու ականջ դնում, էն կռանը մի տանձ է կաթում, դէսն է վազում: Մին էլ որ կանգնեց տանձի կաթոցին ականջ գնելու, ծառի տակը մտայ, հրացանը երեսս կալայ: Տեսնեմ հրացանի ծէրը տըմբտըմբում է: Չէ՛, սիրտս պնդացրի, մին էլ նշան դրի, հուպ տւի... Հրացանը որ տրաքեց, սա մի գոռաց, պըտիտ եկաւ, ու առ հա կը տաս, ընկաւ ներքի ձորը: Հրացանս մին էլ լցրի, մօտիկ թմբի գլուխը բարձրացայ, տեսնեմ սա ջրին է վազում. ասի՝ բաս սրա բանը խարաք է. վիրաւորը որ ջրին գնաց, ջուր խմեց—պրծաւ, էլ ապրիլ չի:

Մին ասի՝ ետեիցը գնամ, մին էլ ասի՝ անէծք չար սատանին, վիրաւոր արջը գէշ է, կը բռնի, կը փչացնի: Էն է ինչ նա դէսը գնաց, ես էլ ետ եկայ, էլ գիտեմ ոչ ինչ եղաւ:

Միայն էն օրերում ձորի վրա շատ ուրուր պըտիտ եկաւ...




Ց ա ն կ

1. *Ամենից լաւ տունը	3	27. *Ճախարակ	43
2. Առաջին դասը, ըստ Ամիչիսի	5	28. Ամենալաւ վկայականը	44
3. *Վեր կաց, Գ. Մելոյեան, կրճ. 7		29. *Ճպուռն ու մըջիւնը, Աթ. Խնկոյեան	44
4. Փոքրիկ ձիավար, Բաթմի	7	30. Բէզակի լապտերը, փոխ. Ս. Յարութիւնեան	46
5. Այգեկուլ	8	31. *Չաղացպանի երգը, Աթ. Խնկոյեան	48
6. Պապս	9	32. Դեղձանիկն ու տատրակիկը, Աթ. Խնկոյեան	49
7. *Հսկան	11	33. Հօր հիւանդապահը, ըստ Ամիչիսի	49
8. Սահակ-Մահակը, ըստ Տ. Փիրումեանի	17	34. *Յօրնատէրն ու Չաղացպանը, Աթ. Խնկոյեան	54
9. *Կարգա, Ա. Ծատուրեան կրճատ.	20	35. Չնագնդի, Սիմակ	57
10. *Գիւղացին և ծառը	21	36. *Պոչատ աղւէսը, Աթ. Խնկոյեան	62
11. Չալօի էջը, Յ. Աղաքաթ	21	37. Գրագրի տղան, ըստ Ամիչիսի	63
12. *Տերեւթափ	25	38. *Չմեռ, Հ. Հայրապետեան	68
13. Կօշիկ սրբող Թոմասը	26	39. Աշակերտ Օհանը, ըստ Ա. Չնիսի	69
14. *Աշուն, Հ. Մանէլեան	28	40. *Ագռաւն ու աղւէսը, Աթ. Խնկոյեան	72
15. Գլանքի կարօտ	28	41. Անտառում	73
16. *Մայրը, ըստ Պլեշչէնի, Թարգ. Աթ. Խնկոյեանի	29	42. *Քուն	75
17. Եղջերուն	30	43. Պայտառ Աւօն	76
18. *Կռունկն ու սագը, Աթ. Խնկոյեան	31	47. *Դարբին	78
19. Պառաւի կատուն	31	45. Աբու-Հասանի մաշիկները	79
20. *Աղւէսը	33	46. Առաջին ձնծաղիկները	84
21. Վայրենին ու նամակը	34		
22. *Ժամանակը, Գ. Դէմիրճեան	36		
23. Քարը	36		
24. Տատս	39		
25. *Մկների ժողովը	41		
26. Տատիկը	42		

47. *Յոգնած երկիրը, Թարգ. Յ. Յովհաննիսեան 86	66. *Մայիսը, Հ. Հայրապետ. 112
48. Արևի մօտ, Ա. Իսա- հակեան, կրճատ. 86	67. Ճերմակը 112
49. *Սասունցի Դաւիթը գառ- նարած 89	68. *Վարդը, Գէօրժէի 116
50. Դէպի քաղաք, Րաֆֆի . . 91	69. Թաւամազ մեղուն, ըստ Աւենարիուսի 116
51. *Ուռնի, Աթ. Խնկոյեան . 95	70. Գարուն իրիկուն, Ժողով. 119
52. *Գառը մէր տալիս, Վ. Միրաքեան 95	71. Սուտիկ որսկանը 120
53. Զատիկ, ըստ Պոռշեանի . 96	72. Գորտն ու ագռաւը, Ա. Խն. 121
94. *Գարուն առաւօտ 97	73. Ծաղիկների երեկոյթը . 122
55. Ծիւն ու ապառաժը, ըստ Վ. Փափագեանի . . 98	74. *Գիշեր, Դ. Դէմիրճեան 125
56. *Գուլթան 100	75. Արիասիրտ բանւորը . . 125
57. Ծոցանուկի, ըստ Յ. Աղաբ. 100	76. *Անբախտ վաճառականներ 129
58. *Փոքրիկ երկրագ., Ժողով. 102	77. Մայրը 134
59. Մի կտրիճ 103	78. *Անձրեւ, ըստ Լ. Մանւէլ. 136
60. *Այ, սեւ ամպեր, Ա. Ծատուրեան 106	79. Սրտոտ տղան 136
61. Կարկուտը, Կ. Մելիք-Շահ- նազարեան, փոփոխած . 107	80. *Ծեր կաղնու մտածմուն- քը, Դ. Դէմիրճեան 140
62. *Ճանճը, Աթ. Խնկոյեան 108	81. Հանդիպում, Րաֆֆի . . . 140
63. Փակած ու ազատ, Լ. Մանւէլեան 108	82. *Գորտն ու կովը, Աթ. Խըն- կոյեան 148
64. Բանտի պատուհանին, ըստ Անդերսէնի 109	83. Հունձ, Յ. Աղաբաբ 143
65. Արտուտի երգը 111	84. *Հանգիստ, Պ. Սարիբէ- կեան, փոփոխած 145
	85. *Կալի երգը 146
	86. Փոկակապ Ակոփ ապէր, Վ. Փափագեան, կրճատ. 147
	87. *Կէս-օրին 153
	88. Արջաորս 153

Մեր հեղինակութիւնները, մեր կազմած յօդածները, մեր Թարգ-
մանութիւններն ու փոխադրութիւնները ստորագրութիւն չեն կրում:





ՀԱՒՍԱԲԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	40 Կ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	60 Կ.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ	70 Կ.
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ	80 Կ.
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ	1 ռ. 00 Կ.

Դիմել՝ Թիֆլիս, Եբուտովսկայա, 25, Սթ. Լիսիցիանու
կամ պահեստին.— Թիֆլիս, книжный магазинъ
„Гиръ“ (Գիր)։

2013

3684

Handwritten signature



<< Ազգային գրադարան



NL0062019

Арм.
4-269a